2013

ՀՀ կենտրոնական բանկի
բանբեր

2-րդ
եռամսյակ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինանսական համակարգը **5**

Վճարահաշվարկային համակարգի զարգացումներ **17**

Ֆինանսական համակարգի կարգավորման դաշտի փոփոխություններ **21**

Ֆինանսական համակարգի ցուցանիշներ **24**

ՀՀ ԿԲ ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն **30**

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների վիճակը և կազմը **31**

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վիճակագրության վարչություն

Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշիռը և միջազգային ներդրումային դիրքը 2012 թվականին **33**

Հայաստանի Հանրապետության արտաքին պարտքը 2012 թվականին **52**

Դրամավարկային քաղաքականության վարչություն

Մակրոտնտեսական իրավիճակը հարևան երկրներում **59**

ՀՀ ֆինանսական համակարգը 2013 թվականի երկրորդ եռամսյակում

ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐԸ

2013 թվականի հունիսի 30-ի դրությամբ ՀՀ տարածքում գործել են 21 առևտրային բանկեր՝ 476 մասնաճյուղով և մեկ զարգացման բանկ (Համահայկական բանկը): Եռամսյակի ընթացքում շարունակվել է բանկային համակարգի[1] հիմնական ցուցանիշների աճը:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԸ

2013 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում բանկային համակարգի ընդհանուր կապիտալն ավելացել է 1.9%-ով և եռամսյակի վերջին կազմել 413.2 մլրդ դրամ: Ընդհանուր կապիտալի աճը հիմնականում պայմանավորվել է 8.2 մլրդ դրամ զուտ շահույթի ապահովման հաշվին:

Հաշվետու եռամսյակում ակտիվների աճի տեմպը 0.8 տոկոսային կետով գերազանցել է ընդհանուր կապիտալի աճի տեմպը: Արդյունքում՝ ընդհանուր կապիտալի և ընդհանուր ակտիվների հարաբերակցության ցուցանիշը նվազել է 0.2 տոկոսային կետով՝ եռամսյակի վերջին կազմելով 15.6%:

Առևտրային բանկերի ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվային ցուցանիշը նվազել է 0.1 տոկոսային կետով և եռամսյակի վերջին կազմել 16.3%՝ պայմանավորված ընդհանուր նորմատիվային կապիտալի նկատմամբ ռիսկով կշռված ակտիվների առաջանցիկ աճով:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաշվետու եռամսյակի ընթացքում բանկային համակարգի ընդհանուր պարտավորություններն ավելացել են 2.9%-ով և եռամսյակի վերջին կազմել 2 տրլն 227.5 մլրդ դրամ: Ընդհանուր պարտավորությունների աճ արձանագրվել է 16, իսկ նվազում՝ 6 բանկում:

Ընդհանուր պարտավորությունները հիմնականում ավելացել են իրավաբանական և ֆիզիկական անձանց ընդհանուր ավանդների 5.9% (74.1 մլրդ դրամով) աճի հաշվին:

Եռամսյակի ընթացքում իրավաբանական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդներն ավելացել են 11.3%-ով և կազմել 518.5 մլրդ դրամ: Ֆիզիկական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդներն ավելացել են 2.7%-ով և կազմել 820.0 մլրդ դրամ:


Ըստ ժամկետային կառուցվածքի՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց ընդհանուր ավանդներում ցպահանջ և ժամկետային ավանդների տեսակարար կշիռները կազմել են համապատասխանաբար 36.0% և 64.0% (31.03.2013 թ. դրությամբ՝ համապատասխանաբար 32.3% և 67.7%):

Ըստ արժութային կառուցվածքի՝ դրամային ավանդներն ավելացել են 3.4%-ով, իսկ արտարժութային ավանդները՝ 6.8%-ով: Արդյունքում՝ արտարժութային ավանդների տեսակարար կշիռը ընդհանուր ավանդներում աճել է 0.7 տոկոսային կետով՝ եռամսյակի վերջին կազմելով 72.9%:

[1] *ՀՀ տարածքում գործող 21 առևտրային բանկերը և Համահայկական բանկը:*

Եռամսյակի ընթացքում ընդհանուր պարտավորությունների կառուցվածքում զգալի փոփոխություններ արձանագրվել են իրավաբանական և ֆիզիկական անձանց ընդհանուր ավանդների և ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների մասով. իրավաբանական և ֆիզիկական անձանց ընդհանուր ավանդների տեսակարար կշիռը աճել է 1.7 տոկոսային կետով, իսկ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունները նվազել են 0.8 տոկոսային կետով:

Բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների կառուցվածքը



1. Ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդներ, 2. Իրավաբանական անձանց ցպահանջ ավանդներ, 3. Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներ, 4. Իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ, 5. Պարտավորություններ բանկերի (ներառյալ ԿԲ) նկատմամբ, 6. Պարտավորություններ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, 7. Պարտավորություններ Կառավարության նկատմամբ, 8. Այլ պարտավորություններ


ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՏԻՎՆԵՐԸ

Հաշվետու եռամսյակում բանկային համակարգի ընդհանուր ակտիվներն ավելացել են 2.8%-ով և եռամսյակի վերջին կազմել 2 տրլն 640.7 մլրդ դրամ: Ընդ որում՝ ակտիվների աճ արձանագրվել է 16, իսկ նվազում՝ 6 բանկում:


Ակտիվների կազմում հիմնականում ավելացել են բանկերում թղթակցային հաշիվները, պետական արժեթղթերը և տնտեսությանը տրամադրված վարկերը (ներառյալ՝ ֆակտորինգ և լիզինգ)՝ համապատասխանաբար 20.2%-ով, 6.1%-ով և 2.1%-ով:

30.06.2013 թ. դրությամբ տնտեսությանը տրամադրված վարկերի ծավալը (ներառյալ՝ լիզինգը և ֆակտորինգը) կազմել է 1 տրլն 624.4 մլրդ դրամ: Իրավաբանական անձանց, ֆիզիկական անձանց և բանկերի հետ կապված անձանց ու աշխատակիցներին տրամադրված վարկերի ծավալներն ավելացել են համապատասխանաբար 0.1%-ով, 4.4%-ով և 7.7%-ով և կազմել 937.9 մլրդ դրամ, 596.5 մլրդ դրամ, 75.6 մլրդ դրամ: Լիզինգի ու ֆակտորինգի ընդհանուր ծավալը (առանց միջբանկային լիզինգի և ֆակտորինգի) ավելացել է 8.4%-ով և եռամսյակի վերջին կազմել 14.4 մլրդ դրամ:

Բանկային համակարգի ընդհանուր ակտիվների ծավալները



Բանկային համակարգի ընդհանուր ակտիվների կառուցվածքը




1. Կանխիկ դրամական միջոցներ, 2. Թղթակցային հաշիվներ ԿԲ-ում և այլ պահանջներ ԿԲ-ի նկատմամբ, 3. Թղթակցային հաշիվներ բանկերում, 4. Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, 5. Պետական արժեթղթեր, 6. Վարկեր իրավաբանական անձանց, 7. Վարկեր ֆիզիկական անձանց, 8. Վարկեր բանկերի հետ կապված անձանց և աշխատակիցներին, 9. Հիմնական միջոցներ, 10. Այլ ակտիվներ


Հաշվետու եռամսյակում ակտիվների կառուցվածքում զգալի փոփոխություններ տեղի չեն ունեցել:

Ըստ արժութային կառուցվածքի՝ դրամային և արտարժութային վարկերը (ներառյալ՝ լիզինգը և ֆակտորինգը) ավելացել են համապատասխանաբար 4.6%-ով և 0.7%-ով՝ եռամսյակի վերջին կազմելով 571.8 մլրդ դրամ և 1 տրլն 52.6 մլրդ դրամ: Արդյունքում՝ արտարժութային վարկերի տեսակարար կշիռը ընդհանուր վարկերում նվազել է 0.9 տոկոսային կետով՝ եռամսյակի վերջին կազմելով 64.8%:

Բանկային համակարգի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումների ծավալները՝ ըստ տնտեսության ճյուղերի



Բանկային համակարգի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումների կառուցվածքը



1. Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն, 2. Մշակող արդյունաբերություն, 3. Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում, 4. Շինարարություն, 5. Առևտուր, 6. Ֆինանսական և ապահովագրական գործունեություն, 7. Հիփոթեքային վարկեր, 8. Սպառողական վարկեր, 9. Տնտեսության այլ ճյուղեր

Համեմատաբար բարձր աճի տեմպ գրանցվել է 1. ֆինանսական ու ապահովագրական գործունեության, 2. էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման, 3. գյուղատնտեսության, անտառային տնտեսության ու ձկնորսության վարկային ներդրումներում՝ համապատասխանաբար 16.2%, 6.4% և 6.3%:

Ըստ ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումների կառուցվածքի՝ եռամսյակի ընթացքում 1.1 տոկոսային կետով նվազել է առևտրի տեսակարար կշիռը, իսկ ֆինանսական և ապահովագրական գործունեության վարկային ներդրումների տեսակարար կշիռն աճել է 0.7 տոկոսային կետով:

Վարկային ներդրումներում մեծ տեսակարար կշիռ ունեն առևտրի, սպառողական և մշակող արդյունաբերության վարկային ներդրումները՝ համապատասխանաբար 19.8%, 19.6% և 10.1%:

Վարկային ներդրումների ռիսկայնության դասերի առումով՝ հաշվետու եռամսյակում 0.4 տոկոսային կետով աճել է չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռը ընդհանուր վարկերում և դեբիտորական պարտքերում՝ եռամսյակի վերջին կազմելով 5.6%:

30.06.2013 թ. դրությամբ «հսկվող» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը կազմել են ընդհանուրի 3.6%-ը, «ոչ ստանդարտ» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 1.3%-ը, «կասկածելի» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 0.8%-ը (31.03.2013 թ. դրությամբ՝ համապատասխանաբար 3.5%, 0.8%, 0.9%):


Եռամսյակի ընթացքում առևտրային բանկերի ընդհանուր իրացվելիության նորմատիվային ցուցանիշը մնացել է անփոփոխ՝ 26.1%, իսկ ընթացիկ իրացվելիության նորմատիվային ցուցանիշը նվազել է 9.0 տոկոսային կետով և կազմել 127.1%:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԸ

2013 թվականի առաջին կիսամյակում բանկային համակարգի զուտ շահույթը (շահույթը հարկումից հետո)՝ հաշվարկված ըստ վերահսկողական հաշվետվությունների, կազմել է 12.1 մլրդ դրամ[2], շահութաբերությունը (տարեկանացված) ըստ ակտիվների[3] (RoA)՝ 1.0%, շահութաբերությունը (տարեկանացված) ըստ կապիտալի (RoE)՝ 6.0%: 2013 թվականի առաջին կիսամյակում շահույթով է աշխատել 19 բանկ, վնասով՝ 3 բանկ:

2013 թվականի առաջին կիսամյակում բանկային համակարգի զուտ շահույթը, հաշվարկված Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, կազմել է 20.9 մլրդ դրամ: Շահութաբերությունը (տարեկանացված) ըստ ակտիվների (RoA) և շահութաբերությունը (տարեկանացված) ըստ կապիտալի (RoE) կազմել են համապատասխանաբար 1.6% և 9.4%:

Բանկային համակարգի եկամուտների և ծախսերի կառուցվածքը



[2] ԿԲ ներկայացվող հաշվետվությունների և ՖՀՄՍ համաձայն՝ շահույթի մեծությունների խոշոր տարբերությունը հիմնականում պայմանավորված է ստանդարտ ակտիվների գծով 1%-ի չափով ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին հատկացումներ կատարելու փաստով, քանի որ բանկերը այդչափով ծախս են ճանաչում:

[3] Ըստ ակտիվների շահութաբերության (RoA) ցուցանիշը հաշվարկվել է որպես զուտ շահույթի (շահույթ հարկումից հետո) և տարեսկզբից միջին օրական ընդհանուր ակտիվների հարաբերակցություն: Ըստ կապիտալի շահութաբերության (RoE) ցուցանիշը հաշվարկվել է որպես զուտ շահույթի (շահույթ հարկումից հետո) և տարեսկզբից միջին օրական ընդհանուր կապիտալի հարաբերակցություն:

Ըստ ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող վերահսկողական հաշվետվությունների՝ 2013 թվականի առաջին կիսամյակում բանկային համակարգի համախառն եկամուտները և համախառն ծախսերը կազմել են համապատասխանաբար 278.7 մլրդ և 262.5 մլրդ դրամ:

Տոկոսային եկամուտների գերակշիռ մասը՝ 83.9%-ը, բաժին է ընկել տնտեսությանը տրամադրված վարկերից ստացված եկամուտներին: Ոչ տոկոսային եկամուտների կազմում մեծ տեսակարար կշիռներ են ունեցել ստացված միջնորդավճարներից եկամուտները և արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտները՝ համապատասխանաբար 45.4% և 22.5%:

Տոկոսային ծախսերի կազմում շարունակել են մեծ տեսակարար կշիռ ունենալ ժամկետային ավանդների գծով տոկոսային ծախսերը և առևտրային բանկերից և ֆինանսավարկային կազմակերպություններից ներգրավված միջոցների գծով տոկոսային ծախսերը՝ համապատասխանաբար 52.7% և 19.6%:

Ոչ տոկոսային ծախսերում զգալի տեսակարար կշիռը՝ 48.3%-ը, բաժին է ընկել աշխատակիցների աշխատավարձին և դրան հավասարեցված այլ վճարներին:

Հաշվետու եռամսյակում բանկային համակարգի ընդհանուր զուտ մասհանումների[4] մեծությունը կազմել է 9.0 մլրդ դրամ կամ միջին եռամսյակային ընդհանուր ակտիվների 0.3%-ը:

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2013 թվականի հունիսի 30-ի դրությամբ ՀՀ տարածքում գործել է 33 վարկային կազմակերպություն՝ 120 մասնաճյուղերով:

Վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվները հաշվետու եռամսյակում ավելացել են 5.4%-ով (9.7 մլրդ դրամով) և եռամսյակի վերջին կազմել 189.6 մլրդ դրամ: Ընդ որում՝ ակտիվների աճ է արձանագրվել 26, իսկ նվազում՝ 7 վարկային կազմակերպությունում:

Վարկային կազմակերպությունների կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի ծավալը (ներառյալ՝ լիզինգը և ֆակտորինգը) հաշվետու եռամսյակում աճել է 3.9%-ով (4.7 մլրդ դրամով) և եռամսյակի վերջին կազմել 127.0 մլրդ դրամ: Ֆիզիկական անձանց տրամադրված վարկերին բաժին է ընկել 68.9%-ը, իրավաբանական անձանց տրամադրված վարկերին՝ 20.9%-ը, վարկային կազմակերպությունների հետ կապված անձանց և աշխատակիցներին տրամադրված վարկերին՝ 2.9%-ը, լիզինգին՝ 7.3%-ը:

Ֆիզիկական անձանց տրամադրված վարկերն ավելացել են 3.9%-ով (3.3 մլրդ դրամով) և կազմել 87.6 մլրդ դրամ: Իրավաբանական անձանց տրամադրված վարկերն ավելացել են 5.1%-ով (1.3 մլրդ դրամով) և կազմել 26.5 մլրդ դրամ: Լիզինգի ծավալը նվազել է 0.8 %-ով (77.3 մլն դրամով) և կազմել 9.2 մլրդ դրամ: Վարկային կազմակերպության հետ կապված անձանց և աշխատակիցներին տրված վարկերն ավելացել են 5.1%-ով (180.3 մլն դրամով) և կազմել 3.7 մլրդ դրամ:

Ըստ արժութային կառուցվածքի՝ հաշվետու եռամսյակում տնտեսությանը տրամադրված դրամային վարկերի (ներառյալ՝ լիզինգի և ֆակտորինգի) ծավալն ավելացել է 3.5%-ով (2.6 մլրդ դրամով), իսկ արտարժույթով տրամադրված վարկերի (ներառյալ՝ լիզինգի և ֆակտորինգի) ծավալը՝ 4.4%-ով (2.1 մլրդ դրամով): Արդյունքում՝ արտարժութային վարկերի (ներառյալ՝ լիզինգի և ֆակտորինգի) տեսակարար կշիռը աճել է 0.2 տոկոսային կետով և կազմել 39.3%:


Ակտիվների կառուցվածքում էական փոփոխություններ արձանագրվել է ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների և տնտեսությանը տրամադրված վարկերի (ներառյալ՝ լիզինգի և ֆակտորինգի) մասով. ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների տեսակարար կշիռն աճել է 1.4 տոկոսային կետով, իսկ տնտեսությանը տրամադրված վարկերի (ներառյալ՝ լիզինգի և ֆակտորինգի) տեսակարար կշիռը նվազել է 0.8 տոկոսային կետով:

Վարկային ներդրումների ռիսկայնության դասերի առումով՝ եռամսյակի ընթացքում չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռը աճել է 0.6 տոկոսային կետով և եռամսյակի վերջին կազմել 4.5%: 30.06.2013 թ. դրությամբ վարկային կազմակերպությունների «հսկվող» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը կազմել են ընդհանուրի 2.5%-ը, «ոչ ստանդարտ» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 1.1%-ը, «կասկածելի» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 0.9%-ը (31.03.2013 թ. դրությամբ՝ համապատասխանաբար 2.2%, 1.0% և 0.7%):

---

[4] Զուտ մասհանումները «Մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին՝ ծախսային և «Վերադարձ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներից»՝ եկամտային հոդվածների տարբերությունն է, և վերլուծական նպատակով հիմնականում օգտագործվում է «զուտ մասհանումներ» ցուցանիշը: Տարվա ընթացքում նույն ակտիվի դասի վատացմանը և լավացմանը զուգընթաց ավելանում են «Մասհանումներ» և «Վերադարձ» հոդվածները, ըստ որի էլ բացատրվում են համախառն ծախսերում և համախառն եկամուտներում վերջիններիս զգալի տեսակարար կշիռները:

Վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվների կառուցվածքը



1. Կանխիկ դրամական միջոցներ, 2. Պահանջներ ֆինանսական կազմ. նկատմամբ, 3. Վարկեր իրավաբանական անձանց, 4. Վարկեր ֆիզիկական անձանց, 5. Վարկեր բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին, 6. Լիզինգ, 7. Արժեթղթեր, 8. Հիմնական միջոցներ, 9. Այլ ակտիվներ

Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի մեծությունը եռամսյակի ընթացքում ավելացել է 4.8%-ով (3.3 մլրդ դրամով) և կազմել 72.5 մլրդ դրամ: Կանոնադրական հիմնադրամն ավելացել է 3.2 մլրդ դրամով:


Հաշվետու եռամսյակում ընդհանուր պարտավորություններն ավելացել են 5.8%-ով (6.4 մլրդ դրամով) և եռամսյակի վերջին կազմել 117.1 մլրդ դրամ: Ընդհանուր պարտավորությունների աճը հիմնականում պայմանավորված է բանկերի նկատմամբ պարտավորությունների՝ 18.5% (6.5 մլրդ դրամով) և ՀՀ կառավարության նկատմամբ պարտավորությունների՝ 10.7% (1.3 մլրդ դրամով) աճով:

30.06.2013 թ. դրությամբ ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ ցպահանջ և ժամկետային պարտավորությունների ընդհանուր ծավալը կազմել է 26.1 մլրդ դրամ: Եռամսյակի ընթացքում ֆիզիկական անձանց նկատմամբ պարտավորություններն ավելացել են 6.4%-ով (544.5 մլն դրամով) և եռամսյակի վերջին կազմել 9.1 մլրդ դրամ: Իրավաբանական անձանց նկատմամբ պարտավորությունները նվազել են 10.0%-ով (1.9 մլրդ դրամով) և եռամսյակի վերջին կազմել 17.0 մլրդ դրամ:

Պարտավորությունների կառուցվածքում էական փոփոխություններ արձանագրվել են բանկերի նկատմամբ պարտավորությունների և իրավաբանական անձանց նկատմամբ պարտավորությունների մասով. բանկերի նկատմամբ պարտավորությունների տեսակարար կշիռն աճել է 3.8 տոկոսային կետով, իսկ իրավաբանական անձանց նկատմամբ պարտավորությունների տեսակարար կշիռը՝ նվազել է 2.6 տոկոսային կետով:

2013 թվականի երկրորդ եռամսյակում վարկային կազմակերպությունների զուտ շահույթը (շահույթը հարկումից հետո)՝ հաշվարկված վերահսկողական հաշվետվությունների հիման վրա, կազմել է 3.2 մլրդ դրամ: Տարեսկզբից շահույթով է աշխատել 27 վարկային կազմակերպություն, իսկ վնասով՝ 6 վարկային կազմակերպություն: Վարկային կազմակերպությունների շահութաբերությունը (տարեկանացված) ըստ ակտիվների (RoA) և շահութաբերությունը (տարեկանացված) ըստ կապիտալի (RoE) կազմել են համապատասխանաբար 3.6% և 9.3%:

Վարկային կազմակերպությունների եկամուտների և ծախսերի կառուցվածքը



Տարեսկզբից վարկային կազմակերպությունների զուտ շահույթը, հաշվարկված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, կազմել է 3.3 մլրդ դրամ: Վարկային կազմակերպությունների շահութաբերությունը (տարեկանացված) ըստ ակտիվների (RoA) և շահութաբերությունը (տարեկանացված) ըստ կապիտալի (RoE) նվազել են համապատասխանաբար 0.2 և 0.4 տոկոսային կետով և կազմել 3.5% և 8.8%:

Տեղեկանք


ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների արտաքին պարտքը 2013 թվականի երկրորդ եռամսյակի վերջին

Արտաքին աշխարհի նկատմամբ ՀՀ առևտրային բանկերի ու վարկային կազմակերպությունների վարկային պարտավորությունները[*] 2013 թվականի երկրորդ եռամսյակի վերջին կազմել են 1 042.2 մլն դոլար՝ նախորդ եռամսյակի վերջի 1 027.4 մլն դոլարի փոխարեն: Եռամսյակի ընթացքում առևտրային բանկերն ու վարկային կազմակերպությունները արտաքին աշխարհից ներգրավել են 714.3 մլն դոլար վարկային միջոցներ՝ նախկինում ձեռք բերված վարկերի դիմաց կատարել են 691.1 մլն դոլար հիմնական գումարի մարումներ[**]: Եռամսյակի ընթացքում վարկային մուտքերի 13.1%-ը երկարաժամկետ վարկերի գծով է, ընդ որում՝ երկարաժամկետ վարկային մուտքերի 25.7%-ը ստացվել է Ռուսաստանից, 23.8%-ը՝ Լյուքսեմբուրգից, 8.2%-ը՝ Լատվիայից, իսկ 27%-ը՝ միջազգային կազմակերպություններից:

2013 թվականի երկրորդ եռամսյակի վերջին առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների հիմնական վարկատու երկրներն են եղել Ռուսաստանը, որի տեսակարար կշիռը ամբողջի մեջ կազմել է 17.5% (նախորդ եռամսյակում՝ 16.5%), Լյուքսեմբուրգը՝ 10.4% (նախորդ եռամսյակում՝ 10.2%), Նիդեռլանդները՝ 7.4% (նախորդ եռամսյակում՝ 7.9%) և Գերմանիան՝ 4.6% (նախորդ եռամսյակում՝ 5.1%): Վարկերի մոտ 38.8%-ը տրվել է միջազգային կազմակերպությունների կողմից:

2013 թվականի երկրորդ եռամսյակի վերջին ներգրավված վարկերի միջին կշռված տոկոսադրույքը նախորդ եռամսյակի վերջի համեմատ փոքր-ինչ աճել է և կազմել 5.8%: Արտաքին վարկերի մոտ 38.2%-ը լողացող (LIBOR, EURIBOR և այլն) տոկոսադրույքով է: Վարկերի միջին ժամկետայնությունը 4.5 տարի է: Կարճաժամկետ վարկերի տեսակարար կշիռը նվազել է և կազմել ներգրավված վարկերի 8 %-ը:

ՀՀ առևտրային բանկերի մասնավոր պարտքը 2006-2013 թվականներին



[*] *Ներառված չեն միջազգային ֆինանսական կազմակերպությունների և այլ վարկատուների կողմից տարբեր ծրագրերի շրջանակներում ՀՀ կառավարության միջոցով ստացված վարկերը:*

[**] *Նախորդ ժամանակահատվածի վերջի և հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում զուտ ներգրավված միջոցների գումարը տարբերվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի փաստացի ցուցանիշից, քանի որ ներգրավված միջոցներն արտահայտված են տարբեր արժույթներով, ուստի դրանք դոլարային համարժեքի վերածելիս ներառում են փոխարժեքի հաշվին վերագնահատումները:*

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

30.06.2013 թ. դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում ապահովագրական գործունեության լիցենզիա է ունեցել 9 ապահովագրական ընկերություն[5]:

[5] *30.06.2013 թ. ամփոփված են փաստացի գործող և հաշվետու 7 ապահովագրական ընկերությունների ցուցանիշները:*

Ապահովագրական ընկերությունների ակտիվները եռամսյակի ընթացքում ավելացել են 16.2%-ով և 30.06.2013 թ. դրությամբ կազմել են 50.2 մլրդ դրամ, պարտավորություններն ավելացել են 23.1%-ով և կազմել 35.9 մլրդ դրամ: Ընդհանուր կապիտալն ավելացել է 1.9%-ով և կազմել 14.3 մլրդ դրամ:

Ապահովագրական ընկերությունների ակտիվների կազմում համեմատաբար մեծ տեսակարար կշիռ են ունեցել ավանդները բանկերում (29.6%) և ուղղակի ապահովագրության գծով ստացվելիք գումարները (23.3%):


Ապահովագրական ընկերությունների պարտավորությունների կազմում համեմատաբար մեծ տեսակարար կշիռ են ունեցել չվաստակած ապահովագրավճարների պահուստը (46.6%) և պահանջների պահուստները (12.2%):

2013 թվականի առաջին կիսամյակում ապահովագրական ընկերությունների՝ վերահսկողական հաշվետվությունների հիման վրա ստացված զուտ վնասը կազմել է 171.9 մլն դրամ:


ՖՀՄՍ համաձայն՝ ապահովագրական ընկերությունների զուտ վնասը 2013 առաջին կիսամյակի ընթացքում կազմել է 258.7 մլն դրամ:

Հաշվեգրված ապահովագրավճարների մեծությունը կազմել է 22.7 մլրդ դրամ, իսկ վերաապահովագրողին փոխանցվող ապահովագրավճարները՝ 1.3 մլրդ դրամ կամ ապահովագրավճարների 5.8%-ը:

2012 թվականի առաջին կիսամյակում հաշվեգրված ապահովագրավճարների կառուցվածքն ըստ ապահովագրության դասերի




2013 թվականի առաջին կիսամյակում հաշվեգրված ապահովագրավճարների կառուցվածքն ըստ ապահովագրության դասերի




1. Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օդտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն (ՍՊՊԱ), 2. Առողջության, 3. Ցամաքային տրանսպորտի, 4. Հրդեհից և բնական աղետներից, 5. Դժբախտ պատահարներից, 6. Ընդհանուր պատասխանատվության, 7. Աջակցության, 8. Ապահովագրության այլ դասեր

Դիտարկվող ժամանակաշրջանում հաշվեգրված ապահովագրական հատուցումների մեծությունը կազմել է 9.7 մլրդ դրամ, իսկ վերաապահովագրողներից ստացվող ապահովագրական հատուցումների գումարները՝ 372.3 մլն դրամ կամ ապահովագրական հատուցումների 3.9%-ը:

2012 թվականի առաջին կիսամյակում հաշվեգրված ապահովագրական հատուցումների կառուցվածքն ըստ ապահովագրության դասերի



2013 թվականի առաջին կիսամյակում հաշվեգրված ապահովագրական հատուցումների կառուցվածքն ըստ ապահովագրության դասերի




1. Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օդտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն (ՍՊՊԱ), 2. Առողջության, 3. Ցամաքային տրանսպորտի, 4. Հրդեհից և բնական աղետներից, 5. Դժբախտ պատահարներից, 6. Ընդհանուր պատասխանատվության, 7. Աջակցության, 8. Ապահովագրության այլ դասեր


30.06.2013 թ. դրությամբ ապահովագրական ընկերություններն ունեցել են ապահովագրության 571.0 հազար գործող պայմանագիր, որոնց ապահովագրական գումարների մեծությունը կազմել է 8.3 տրլն դրամ: Ապահովագրական գումարներից վերաապահովագրողներին փոխանցված ռիսկերի վերաապահովագրական գումարների մեծությունը կազմել է 2.2 տրլն դրամ կամ ապահովագրական գումարների 26.5%-ը:

Ապահովագրական ընկերությունների կողմից կնքված պայմանագրերի և ապահովագրական գումարների կառուցվածքն ըստ ապահովագրության դասերի

Պայմանագրերի կառուցվածքն ըստ ապահովագրության դասերի՝ 30.06.2013 թ. դրությամբ



Ապահովագրական գումարների կառուցվածքն ըստ ապահովագրության դասերի՝ 30.06.2013 թ. դրությամբ



1. Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն (ԱՊՊԱ), 2. Առողջության, 3. Ցամաքային տրանսպորտի, 4. Հրդեհից և բնական աղետներից, 5. Դժբախտ պատահարներից, 6. Ընդհանուր պատասխանատվության, 7. Աջակցության, 8. Ապահովագրության այլ դասեր


ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

2013 թվականի հունիսի 30-ի դրությամբ ՀՀ արժեթղթերի շուկայում գործել են ներդրումային ծառայություն մատուցող 21 բանկ, 9 ներդրումային ընկերություն և 1 ներդրումային ֆոնդի կառավարիչ: Ներդրումային ընկերություններից յոթը կարող են իրենց կամ հաճախորդի անունից և իրենց կամ հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքներ իրականացնել, յոթը՝ հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականներ ընդունել և հաղորդել, յոթը՝ կարող են նաև արժեթղթերով ներդրումների հետ կապված խորհրդատվություն տրամադրել, վեցը՝ իրականացնել արժեթղթերի տեղաբաշխման գործունեություն և չորսը՝ արժեթղթերի փաթեթի կառավարում:


30.06.2013 թ. դրությամբ ներդրումային ընկերությունների ընդհանուր ակտիվները կազմել են 27.5 մլրդ դրամ՝ նախորդ եռամսյակի համեմատ ավելացել են 6.6%-ով: Ներդրումային ընկերությունների ընդհանուր կապիտալը նախորդ եռամսյակի համեմատ ավելացել է 2.0%-ով և կազմել 4.2 մլրդ դրամ:

2013 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ արժեթղթերի շուկայում ներդրումային գործունեության շրջանակներում իրականացված արժեթղթերի առուվաճառքի գործառնությունների ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 51.9%-ով՝ կազմելով 215.3 մլրդ դրամ: Կորպորատիվ պարտատոմսերով իրականացված գործառնությունների ծավալը նախորդ տարվա երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 86.7%-ով և կազմել 100.3 մլրդ դրամ: Բաժնետոմսերով առուվաճառքի գործառնությունների ծավալն ավելացել է ավելի քան երկու անգամ և կազմել 6.9 մլրդ դրամ: Պետական պարտատոմսերով առուվաճառքի գործառնությունների ծավալը նախորդ տարվա երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 27.1%-ով և կազմել է 108.1 մլրդ դրամ: 2013 թ. երկրորդ եռամսյակի արդյունքներով ՀՀ արժեթղթերի շուկայի շրջանառության մեջ շարունակել են գերակշռել պետական պարտատոմսերով գործառնությունները՝ կազմել են 50.2%: Կորպորատիվ պարտատոմսերով և բաժնետոմսերով իրականացված գործառնությունների տեսակարար կշիռներն ընդհանուր շրջանառության մեջ կազմել են համապատասխանաբար 46.6% և 3.2%:

Ներդրումային ընկերությունների կողմից 2013 թ. երկրորդ եռամսյակում իրականացված արժեթղթերի առուվաճառքի գործառնությունների ծավալները



Ներդրումային ընկերությունների կողմից 2012-2013 թթ. երկրորդ եռամսյակներում իրականացված արժեթղթերի առուվաճառքի գործառնությունների ծավալները



Պետական պարտատոմսերի առուվաճառքի գործառնությունների մեջ գերակշռել են պետական երկարաժամկետ պարտատոմսերով իրականացված գործառնությունները՝ կազմել են պետական արժեթղթերով գործառնությունների 57.5%-ը: Պետական միջնաժամկետ և կարճաժամկետ պարտատոմսերով գործառնությունների տեսակարար կշիռները կազմել են ընդհանուր շրջանառության համապատասխանաբար 32.7% և 9.7%-ը:

Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կարգավորվող շուկայում իրականացված արժեթղթերի առուվաճառքի գործառնությունները կազմել են ներդրումային գործունեության շրջանակներում կատարված առուվաճառքի գործառնությունների ընդհանուր ծավալի 0.8%-ը:

Կարգավորվող շուկայում կատարված գործառնությունների ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 3.0 մլրդ դրամով և կազմել է 4.1 մլրդ դրամ, ընդ որում՝ շրջանառության 43.0%-ը կազմել են պետական պարտատոմսերի առուվաճառքի գործառնությունները, իսկ կորպորատիվ պարտատոմսերի և բաժնետոմսերի առուվաճառքի գործառնությունները կազմել են համապատասխանաբար 32.9%-ը և 15.2%-ը:

Ներդրումային գործառնությունների շրջանակներում իրականացված գործառնությունների 98.0%-ը կազմել են ներդրումային ծառայություններ մատուցող առևտրային բանկերի գործառնությունները, 2.0%-ը՝ ներդրումային ընկերությունների գործառնությունները:

Ներդրումային գործունեության շրջանակներում իրականացված ռեպո և հակադարձ ռեպո գործառնությունների ծավալը (ներառյալ՝ կարգավորվող շուկայում իրականացված ռեպո և հակադարձ ռեպո գործառնությունները) նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ նվազել է 53.1%-ով և կազմել 416.9 մլրդ դրամ, որից 186.5 մլրդ դրամը երկարաձգված գործարքներն են:

30.06.2013 թ. դրությամբ հավատարմագրային կառավարման վերցված միջոցների ծավալը կազմել է 2.6 մլրդ դրամ՝ նախորդ եռամսյակի վերջի համեմատ ավելանալով 3.5%-ով:


2013 թ. հունիսի 30-ի դրությամբ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում վարվել են 1929 անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրներ, որոնց թողարկողների թիվը 1925 է, իսկ ՀԿԴ-ում վարվող արժեթղթերի սեփականատերերի թիվը՝ 112415:

30.06.2013 թ. դրությամբ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված են եղել 14 թողարկողների 19 արժեթղթեր, այդ թվում՝ 12 բաժնետոմս (11 թողարկողի) և 7 պարտատոմս (5 թողարկողի): Թողարկողներից 4-ը ֆինանսական կազմակերպություն են: Բաժնետոմսերի ընդհանուր ծավալը մոտ 53.4 մլրդ դրամ է, իսկ պարտատոմսերի ծավալը՝ 2.8 մլրդ դրամ: Ընդ որում՝ թողարկողներից մեկը հաշվետու է ինչպես բաժնետոմսերի, այնպես էլ պարտատոմսերի գծով: Թողարկված բաժնային արժեթղթերի 45%-ը բաժին է ընկել առևտրային բանկերին:

ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2013 թ. երկրորդ եռամսյակի վերջի դրությամբ ՀՀ տարածքում գործել են դրամական փոխանցում իրականացնելու լիցենզիա ունեցող 6 կազմակերպություն, որոնցից 2-ը ունեն նաև վճարային գործիքների պրոցեսինգ/քլիրինգ իրականացնելու լիցենզիա, 2-ը՝ էլեկտրոնային փող թողարկելու թույլտվություն, և միայն վճարային գործիքների պրոցեսինգ/քլիրինգ իրականացնելու լիցենզիա ունեցող մեկ կազմակերպություն՝ «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ն:

Վճարահաշվարկային կազմակերպությունների ֆինանսական վիճակը



Միայն դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունները հաշվետու եռամսյակում ապահովել են 55 մլն դրամ, իսկ վճարային գործիքների պրոցեսինգ/քլիրինգ և դրամական փոխանցումներ իրականացնող կազմակերպությունները՝ 219 մլն դրամ շահույթ:

Միջազգային վճարային համակարգերին անդամակցելու միջոցով արտասահմանից ՀՀ ուղղված վճարումներ են սպասարկել դրամական փոխանցում իրականացնող 2 վճարահաշվարկային կազմակերպություններ: Դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների մասնաբաժինը միջազգային փոխանցումների և ստացումների ընդհանուր ծավալում (ներառյալ՝ առևտրային բանկերը) համապատասխանաբար կազմել է՝ արտասահման փոխանցումները՝ 0.2%-ը, իսկ արտասահմանից ստացումները՝ 0.3%-ը: Այդ կազմակերպությունները Հայաստանի Հանրապետության իրենց հաճախորդներին կատարել են 454 մլն դրամի վճարում, իսկ արտասահման՝ 35 մլն դրամի փոխանցում: Ընդ որում, արտասահմանից ստացված մեկ փոխանցման միջին ծավալը կազմել է 122 հազար դրամ:

Վճարային գործիքների պրոցեսինգ/քլիրինգ և դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող 6 կազմակերպություններ մատուցել են կանխիկ միջոցներով վարձավճարների ընդունման ծառայություններ, այդ թվում 2-ը՝ տերմինալների միջոցով:

Վճարահաշվարկային կազմակերպությունները ընդունում են՝ կոմունալ ծառայությունների, հեռախոսի և բջջային կապի դիմաց վճարումներ, վարկերի մարմանն ուղղված միջոցներ, բյուջե ուղղված տուգանքներ և պետական տուրքեր, ինտերնետային կապի ծառայությունների դիմաց վճարներ և այլն: Մասնավորապես՝ վճարահաշվարկային 5 կազմակերպությունների գլխամասային գրասենյակների և մասնաճյուղերի միջոցով գանձվել է 25.4 մլրդ դրամ, որից 22.8-ը՝ կոմունալ վճարումների դիմաց: Բացի այդ, 2013 թ. երկրորդ եռամսյակի վերջի դրությամբ 2 վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից շահագործվող 934 ինքնասպասարկման տերմինալների միջոցով է 13.5 մլրդ դրամ (5.5 մլն գործառնություններ), որից 6.1 մլրդ դրամը՝ կոմունալ վճարումների դիմաց:

Անկանխիկ եղանակով գանձվել է 168 մլն դրամ, որից 162 մլն դրամը՝ կոմունալ վճարումների դիմաց:

Վճարահաշվարկային կազմակերպությունները պրոցեսինգային/ քլիրինգային ծառայություններ են մատուցում մի շարք առևտրային բանկերի: Առևտրային բանկերը, համագործակցելով վճարահաշվարկային կազմակերպությունների հետ, կոմունալ ծառայությունների վճարները գանձել են իրենց մասնաճյուղային ցանցի միջոցով, որտեղ կատարվել է մոտ 1.1 մլրդ դրամի չափով 364 հազար գործառնություն:


Վճարահաշվարկային համակարգի զարգացումներ

ՀՀ վճարահաշվարկային համակարգը 2013 թ. երկրորդ եռամսյակում դրսևորել է դինամիկ զարգացման միտումներ:

ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

ՀՀ տարածքում բանկային համակարգով իրականացված անկանխիկ վճարումների միջին օրական ծավալը հաշվետու եռամսյակում կազմել է 137.6 մլրդ դրամ (քանակը՝ 62 հազար), այդ թվում՝ Կենտրոնական բանկի վճարային համակարգերով վճարումների միջին օրական ծավալը կազմել է 116.4 մլրդ դրամ, իսկ քանակը՝ 21 հազար (Կենտրոնական բանկի համակարգերով իրականացված վճարումների միջին օրական ծավալը նախորդ տարվա երկրորդ եռամսյակի համեմատ մնացել է անփոփոխ, իսկ քանակը նվազել է 7%-ով):

ՀՀ ԿԲ վճարային համակարգերի միջոցով իրականացված վճարումների միջին օրական քանակը և ծավալը (առանց բորսայական փոխանցումների)



Էլեկտրոնային վճարումների համակարգով կատարված միջին օրական փոխանցումները (առանց բորսայական փոխանցումների) 2012 թ. երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել են 7%-ով՝ կազմելով 33.1 մլրդ դրամ, իսկ քանակը նվազել է 7%-ով՝ կազմելով 20 հազար:

Կենտրոնական բանկի դրամավարկային գործիքների կիրառման հետ կապված միջին օրական փոխանցումները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 1%-ով և կազմել 81.0 մլրդ դրամ, իսկ քանակը նվազել է 14%-ով և կազմել 523:


ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐ

2013 թ. երկրորդ եռամսյակի վերջի դրությամբ ՀՀ տարածքում գործող 21 առևտրային բանկերից 19-ը տրամադրել կամ սպասարկել են վճարային քարտեր: Ընդ որում, 19 առևտրային բանկերն էլ անդամակցում են «ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգին:

Քարտերի սպասարկման նպատակով հաշվետու ժամանակահատվածում տեղադրվել են 31 նոր ավտոմատ գանձման մեքենաներ և 2013 թ. երկրորդ եռամսյակի վերջի դրությամբ կազմել 1213: Առևտրային բանկերի կողմից տեղադրված POS-տերմինալների ընդհանուր քանակը եռամսյակի ընթացքում ավելացել է 178-ով և կազմել 6861:


Եռամսյակի վերջի դրությամբ շրջանառության մեջ գտնվող քարտերի ընդհանուր քանակը կազմել է 1.5 մլն, որը նախորդ եռամսյակի համեմատությամբ ավելացել է 7%-ով: Մասնավորապես՝ «ԱրՔա» քարտերի քանակը նախորդ եռամսյակի վերջի համեմատությամբ ավելացել է 5%-ով և կազմել 545 հազար: Միջազգային քարտային համակարգերի քարտերի քանակն ավելացել է 7%-ով և կազմել 938 հազար: Այդ թվում՝ VISA քարտերն ավելացել են 9%-ով և կազմել 594 հազար, իսկ MasterCard-երը՝ 5%-ով և կազմել 296 հազար:

ՀՀ-ում գործող առևտրային բանկերի թողարկած վճարային քարտեր



2013 թ. երկրորդ եռամսյակում ՀՀ տարածքում վճարային քարտերով իրականացվել է 265.3 մլրդ դրամի 5.0 մլն գործառնություն: Այդ թվում՝ քարտերով անկանխիկ գործառնությունների ծավալը կազմել է 26.2 մլրդ դրամ: Նշված անկանխիկ գործառնությունների ծավալում ինտերնետ միջավայրում իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 5.8 մլրդ դրամ (այդ թվում՝ էլեկտրոնային առևտուր՝ 0.5 մլրդ դրամ, քարտից քարտ փոխանցումներ՝ 5.3 մլրդ դրամ): Հաշվետու եռամսյակի ընթացքում քարտերով իրականացված անկանխիկ վճարումների ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 19%-ով և կազմել է քարտային գործառնությունների 10%-ը:


ՀՀ տարածքում վճարային քարտերով իրականացված միջին օրական գործառնությունները 2010 – 2012 թթ., ինչպես նաև 2011 - 2013 թթ. եռամսյակների ընթացքում



ՀՀ տարածքում քարտեր սպասարկող սարքավորումների միջոցով կատարված գործառնությունները (2013թ. երկրորդ եռամսյակի ընթացքում)

Սարքեր	Գործարքներ			
	ծավալը (մլն դրամ)	*քանակը*	*այդ թվում՝ «ԱրՔա» քարտերով*	
			ծավալը (մլն դրամ)	*քանակը*
Ավտոմատ գանձման սարքերի միջոցով	207147	4112204	52293	1390880
այդ թվում՝ անկանխիկ	518	74064	41	32055
POS – տերմինալների/իմպրինտերների միջոցով	52367	584101	14468	166204
այդ թվում՝ անկանխիկ	19930	473727	7136	113907
Ինտերնետ միջավայրում	5758	291116	870	85015
Ընդամենը	265273	4987421	67631	1642099
այդ թվում՝ անկանխիկ	26207	838907	8047	230977

2011-2013 թթ. եռամսյակների ընթացքում մեկ վճարային քարտով (ՀՀ-ում գործող և արտասահմանյան բանկերի կողմից թողարկված) կատարված գործառնությունների ծավալը



«ԱրՔա» քարտերով կատարված գործառնությունների ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 6%-ով (4.2 մլրդ դրամով), իսկ քանակը՝ 10%-ով (174 հազարով):

ՀՀ-ում գործող, ինչպես նաև արտասահմանյան բանկերի կողմից թողարկված քարտերով Հայաստանում իրականացված գործառնությունների ծավալը 2012 թ. երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 14%-ով՝ կազմելով 265.3 մլրդ դրամ, իսկ քանակն ավելացել է 8%-ով և կազմել 5.0 մլն: Միևնույն ժամանակ, ՀՀ-ում գործող բանկերի կողմից թողարկված քարտերով արտասահմանում կատարված գործառնությունների ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 4%-ով և կազմել 14.2 մլրդ դրամ, իսկ քանակն ավելացել է 1%-ով (4 հազարով) և կազմել 261 հազար:

ՀՀ-ում գործող, ինչպես նաև արտասահմանյան բանկերի կողմից թողարկված VISA քարտերով Հայաստանում իրականացված գործառնությունների ծավալը 2012 թ. երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 28%-ով (30.0 մլրդ դրամով) (քանակն ավելացել է 28%-ով (472 հազարով)), MasterCard-ով կատարված գործառնությունների ծավալը՝ 12%-ով (4.3 մլրդ դրամով) (քանակն ավելացել է 8%-ով (68 հազարով)), միջազգային այլ քարտերով կատարված գործառնությունների ծավալը՝ 11%-ով (1.9 մլրդ դրամով):

ՀՀ-ում գործող առևտրային բանկերի կողմից թողարկված VISA քարտերով արտասահմանում կատարված գործառնությունների ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 2%-ով (185 մլն դրամով) (քանակն ավելացել է 10%-ով (16 հազարով)), MasterCard-ով կատարված գործառնությունների ծավալը նվազել է 10%-ով (494 մլն դրամով) (քանակը նվազել է 17%-ով (17 հազարով)), իսկ միջազգային այլ քարտերով կատարված գործառնությունների ծավալն ավելացել է 107%-ով (807 մլն դրամով):

2013 թ. երկրորդ եռամսյակում վճարային քարտերով կատարված գործառնությունները

Վճարային քարտեր	Վճարային քարտերով կատարված գործառնությունները Հայաստանում (ՀՀ-ում գործող, ինչպես նաև արտասահմանյան բանկերի կողմից թողարկված քարտերով)		ՀՀ-ում գործող բանկերի կողմից թողարկված քարտերով գործառնությունները արտասահմանում	
	ծավալը (մլն դրամ)	*քանակը*	*ծավալը (մլն դրամ)*	*քանակը*
Արքա	67631	1642099	-	-
այդ թվում՝ անկանխիկ	8047	230977	-	-
VISA	137059	2159630	7992	163733
այդ թվում՝ անկանխիկ	8691	312041	5443	133928
Mastercard	41432	893247	4634	85872
այդ թվում՝ անկանխիկ	8363	282768	3304	71629
Միջազգային այլ քարտեր	19150	292445	1559	11677
այդ թվում՝ անկանխիկ	1106	13121	670	5221
Ընդամենը	265273	4987421	14185	261282
այդ թվում՝ անկանխիկ	26207	838907	9418	210778

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

ՀՀ տարածքում ֆիզիկական անձանց փոխանցումները, առանց բանկային հաշվի բացման, կատարվում են առևտրային բանկերի և դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների միջոցով:

Միջազգային դրամական փոխանցումների համակարգերին մասնակից առևտրային բանկերի և վճարահաշվարկային կազմակերպությունների միջոցով Հայաստանի Հանրապետություն փոխանցումների ծավալը 2013 թ. երկրորդ եռամսյակում կազմել է 170.3 մլրդ դրամ (քանակը՝ 821 հազար), որը 7.5 անգամ գերազանցել է արտասահման կատարված փոխանցումների ծավալը: Այդ համակարգերով ստացված միջոցների ծավալը նախորդ տարվա երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 15%-ով: Միջազգային դրամական փոխանցումների համակարգերով Հայաստանի Հանրապետություն կատարված մեկ փոխանցման միջին ծավալը կազմել է 207 հազար դրամ: Առևտրային բանկերի միջոցով միջազգային դրամական փոխանցումների համակարգերով դրամական միջոցների զուտ ներհոսքը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 15%-ով և կազմել 147.5 մլրդ դրամ:

ՀՀ առևտրային բանկերի թղթակցային հաշիվներով իրականացված փոխանցումներում ֆիզիկական անձանց ուղղված վճարումները կազմել են 59.1 մլրդ դրամ (նախորդ տարվա երկրորդ եռամսյակի համեմատ նվազել են 24%-ով): Մեկ վճարման միջինը կազմել է 4.3 մլն դրամ, որը 2012 թ. երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 1.1 մլն դրամով: Միաժամանակ, բանկերի թղթակցային հաշիվներով ֆիզիկական անձանց փոխանցումներն արտասահման կազմել են 57.3 մլրդ դրամ. նախորդ տարվա երկրորդ եռամսյակի համեմատ նվազել են 26%-ով (19.8 մլրդ դրամով):

Ֆինանսական համակարգի կարգավորման դաշտի փոփոխություններ

2013 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկը ընդունել, ինչպես նաև փոփոխություններ և (կամ) լրացումներ է կատարել հետևյալ իրավական ակտերում.

Բանկային գործունեության կարգավորման դաշտում

1. Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ հաստատվել է «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» կանոնակարգ 4-ը, որի համաձայն.
   - Բանկերը պետք է ներդնեն ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգ՝ որպես ներքին հսկողության համակարգի տարր: Ընդ որում՝ այն պետք է ներառի ռիսկերի կառավարման ռազմավարության, «ռիսկի ախորժակի» և առանձին ռիսկերի կառավարման քաղաքականությունները:
   - Բանկերին բնորոշ հիմնական ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի տարաբնույթ մեկնաբանություններից խուսափելու համար տրվել են դրանց սահմանումները:
   - Բանկի համար սահմանվել են Կապիտալի համարժեքության գնահատման ներքին գործընթացի (ICAAP) ներդրման և արդյունավետ իրականացման պահանջները, ինչպես նաև նկարագրվել են այն ռիսկերի կառավարման ընդհանուր մոտեցումները, որոնք չեն ծածկվում ԿԲ կողմից սահմանված՝ բանկային գործունեությունը կարգավորող հիմնական տնտեսական նորմատիվներով:
   - Բանկերը պետք է ունենան ռիսկերի կառավարման և համապատասխանության ապահովման գործառույթներ, որոնց համար պատասխանատու անձանց նշանակում է գործադիր տնօրենը՝ խորհրդի համաձայնությամբ:
   - Ռիսկային գործունեություն իրականացնող անձնակազմի՝ չհիմնավորված ռիսկային գործունեություն ծավալելու շահագրգռվածությունը սահմանափակելու նպատակով բանկերի համար սահմանվել են վարձատրության քաղաքականության, մասնավորապես՝ վարձատրության փոփոխուն բաղադրիչի նկատմամբ նոր պահանջներ:
   - Սահմանվել է, որ բանկերը պետք է ունենան գործընթացների անընդհատության կառավարման համակարգ:

   Ակնկալվում է, որ նշված որոշումը կհանգեցնի բանկերում ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգերի արդյունավետության բարձրացմանը:

2. Փոփոխություն է կատարվել ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի կողմից անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության կարգը սահմանող իրավական ակտում: Կարգում ճշգրտվել է այն աղբյուրների ցանկը, որով պետք է ուղղորդվեն բանկերը աուդիտն իրականացնող անձանց ընտրության ժամանակ, երբ տվյալ անձը չունի աուդիտի իրականացման հինգ տարվա փորձ, սակայն, ցանկում նշված աղբյուրներից որևէ մեկի հրապարակած վարկանիշի համաձայն, լավագույն տասը աուդիտորական ցանցերից որևէ մեկի լիիրավ անդամ է:

   Ակնկալվում է, որ նշված որոշումը կիստակեցնի բանկերի կողմից աուդիտն իրականացնող անձանց ընտրությունը:

Ապահովագրական շուկայի կարգավորման դաշտում

1. ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ լրացումներ և փոփոխություններ են կատարվել «Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը, վերաապահովագրողին չարգելված համարելու չափանիշները» կանոնակարգ 3/02-ում: Որոշ հիմնական տնտեսական նորմատիվների հաշվարկում հստակեցվել է առանձին տարրերի հաշվարկման կարգը: Մասնավորապես՝ վարկային ռիսկի կենտրոնացումը զսպող Ն5 նորմատիվը հաշվարկելիս փոխկապակցված չեն համարվում այն անձինք, ովքեր այդպիսին են հանդիսանում՝ որպես ընդհանուր խոշոր

բաժնետեր ունենալով միևնույն միջազգային կազմակերպությունը, ինչպես նաև իրացվելի ակտիվների ցանկում ներառվել են նաև միջազգային բարձր վարկանիշ ունեցող կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսերը:

2. ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ լրացումներ և փոփոխություններ են կատարվել «Ապահովագրական ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնող անձանց ներկայացվող չափանիշները» կանոնակարգ 3/11-ում: Ճշգրտվել է այն աղբյուրների ցանկը, որով պետք է առաջնորդվեն ապահովագրական ընկերությունները աուդիտն իրականացնող անձանց ընտրելիս:
3. ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ նոր խմբագրությամբ է հաստատվել «Ապահովագրական ընկերության ներքին հսկողության համակարգին ներկայացվող նվազագույն պահանջները» կանոնակարգ 3/10-ը, որով կատարվել են հետևյալ հիմնական փոփոխությունները.
   - Սահմանվել են պահանջներ ապահովագրական ընկերությունների ռիսկերի կառավարման համակարգի նկատմամբ, այդ թվում՝ սահմանվել է ապահովագրական ընկերությունների կողմից ռիսկերի կառավարման ռազմավարություն, «ռիսկի ախորժակ», առանձին ռիսկերի կառավարման քաղաքականություններ հաստատելու պահանջ:
   - Հիմք ընդունելով Solvency II համակարգի պահանջները, ինչպես նաև Ապահովագրական վերահսկողների միջազգային ասոցիացիայի (IAIS) կողմից մշակված սկզբունքները՝ սահմանվել են սեփական ռիսկերի և վճարունակության գնահատման համակարգի (ORSA) ներդրման և արդյունավետ իրականացման պահանջներ: Որպես սեփական ռիսկերի և վճարունակության գնահատման համակարգի բաղկացուցիչ մաս՝ ապահովագրական ընկերությունների համար նախատեսվել է սթրես-թեստավորում իրականացնելու պահանջ:
   - Ապահովագրական ընկերությունների համար սահմանվել են ռիսկերի կառավարման և համապատասխանության ապահովման գործառույթներ ունենալու պահանջներ, որոնց գծով պատասխանատու անձանց պետք է նշանակի ապահովագրական ընկերության գործադիր մարմինը՝ խորհրդի համաձայնությամբ:
   - Սահմանվել են վարձատրության քաղաքականության, մասնավորապես՝ փոփոխուն բաղադրիչի նկատմամբ նոր պահանջներ, որը կսահմանափակի ռիսկային գործունեություն իրականացնող անձնակազմի՝ չհիմնավորված ռիսկային գործունեություն ծավալելու շահագրգռվածությունը:
   - Սահմանվել են գործարար գործընթացների անընդհատության կառավարման համակարգ ունենալու, ինչպես նաև ապահովագրական խարդախությունների դեմ պայքար իրականացնելու պահանջներ:
   - Սահմանվել են ներքին աուդիտի միջազգային ստանդարտների մի շարք պահանջներ:
   - Ապահովագրական ընկերության համար սահմանվել են ներդրումային գործունեությանը, գործարար վարվելակերպին և սպառողների շահերի պաշտպանությանը վերաբերող նոր պահանջներ՝ համապատասխանեցնելով դրանք Ապահովագրական վերահսկողների միջազգային ասոցիացիայի կողմից սահմանված սկզբունքներին:

Արժեթղթերի շուկայի կարգավորման դաշտում

1. ՀՀ ԿԲ խորհրդի 2013 թվականի ապրիլի 16-ի թիվ 104-Ն որոշմամբ փոփոխություն է կատարվել «Ներդրումային ֆոնդի կառավարիչների և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի, ինչպես նաև ներդրումային ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների վերագրանցումը և վերալիցենզավորումը՝ որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ, ներդրումային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելը, ներդրումային ֆոնդի կառավարիչների, դրանց մասնաճյուղերի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի կողմից գործարար ծրագրի, դրա փոփոխությունների և դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 10/01-ում:

   Փոփոխության համաձայն՝ «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված պահառություն իրականացնելու թույլտվությունը այսուհետ կհամարվի բոլոր ներդրումային ֆոնդերի կառավարիչներին տրված: Հետևաբար, փայերի կամ ֆոնդի բաժնետոմսերի պահառության ծառայության վերաբերյալ վերոհիշյալ կանոնակարգով սահմանված դրույթները կկիրառվեն միայն այլ անձանց կողմից կառավարվող ֆոնդերի փայերի կամ բաժնետոմսերի՝ կառավարչի կողմից պահառության իրականացման նկատմամբ:

2. ՀՀ ԿԲ խորհրդի 2013 թվականի ապրիլի 16-ի թիվ 105-Ն որոշմամբ լրացում է կատարվել «Ներդրումային ֆոնդի կառավարչի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները, դրանց սահմանաչափերը (ներառյալ՝ ներդրումային ֆոնդի կառավարչի կողմից կառավարվող յուրաքանչյուր ներդրումային ֆոնդում կառավարչի պարտադիր մասնակցության նվազագույն չափը), տնտեսական նորմատիվների խախտումների՝ ներդրումային ֆոնդի կառավարչի լիցենզիան (թույլտվությունը) ուժը կորցրած ճանաչելու հիմք համարվող նվազագույն չափը» կանոնակարգ 10/02-ում: Կանոնակարգում կատարված լրացման արդյունքում սահմանվել է կենսաթոշակային ֆոնդերում կառավարիչների պարտադիր մասնակցության չափի վերին սահման, այսինքն՝ այսուհետ կառավարիչների պարտադիր մասնակցության չափը կենսաթոշակային ֆոնդերում կլինի կանխատեսելի (մինչև 1 մլրդ ՀՀ դրամ):
3. 2013 թվականի հունիսի 25-ին ՀՀ ԿԲ խորհրդի որոշումներով փոփոխություններ են կատարվել «Ներդրումային ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնող անձանց ներկայացվող չափանիշները» կանոնակարգ 4/11-ում և «Հաշվետու թողարկողների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձին ներկայացվող չափանիշները» կանոնակարգ 4/09-ում: Փոփոխությունների նպատակն է ճշգրտել այն աղբյուրների ցանկը, որով պետք է առաջնորդվեն ներդրումային ընկերությունները և հաշվետու թողարկողները աուդիտն իրականացնող անձանց ընտրելիս:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	31.12.2012	31.03.2013	30.06.2013
Բանկերի քանակը	22	22	22
Բանկերի քանակն ըստ կազմակերպաիրավական ձևի	22	22	22
ԲԲԸ	4	4	4
ՓԲԸ	17	17	17
ՍՊԸ	1	1	1
Կոոպերատիվ	0	0	0
Օտարերկրյա փայատերերի մասնակցությամբ	20	20	20
այդ թվում՝ 50%-ից ավելի	15	15	15
այդ թվում՝ 95%-ից ավելի	12	12	12
Բանկերի կանոնադրական հիմնադրամներում օտարերկրյա մասնակիցների բաժինը (տոկոսներով)	75.7	73.4	73.2
Վարկային կազմակերպությունների քանակը	32	33	33
Օտարերկրյա փայատերերի մասնակցությամբ	13	13	13
այդ թվում՝ 50%-ից ավելի	8	8	8
այդ թվում՝ 95%-ից ավելի	5	5	5
Վարկային կազմակերպությունների կանոնադրական հիմնադրամներում օտարերկրյա մասնակիցների բաժինը (տոկոսներով)	33.2	30.5	28.8
Ապահովագրական ընկերությունների քանակը	7	7	7
այդ թվում՝ կյանքի ապահովագրության լիցենզիա ունեցող	0	0	0
այդ թվում՝ ոչ կյանքի ապահովագրության լիցենզիա ունեցող	7	7	7
Օտարերկրյա փայատերերի մասնակցությամբ	4	4	4
այդ թվում՝ 50%-ից ավել	3	3	3
այդ թվում՝ 95%-ից ավել	3	3	3
Ապահովագրական բրոքերներ	4	3	2
Արժեթղթերի շուկայում ներդրումային ծառայություն մատուցող անձինք [1]	30	30	30
այդ թվում՝ ներդրումային ծառայություն մատուցող անձ/բանկ/	21	21	21
այդ թվում՝ ներդրումային ծառայություն մատուցող ընկերություն	9	9	9
Հաշվետու թողարկող հանդիսացող ընկերությունների քանակը	14	14	15
Գրավատների քանակը	145	141	147
ժամանակաշրջանի ընթացքում լիցենզավորված	3	1	0
ժամանակաշրջանի ընթացքում լիցենզիան ուժը կորցրած ճանաչված	2	2	2
Փոխանակման կետերի քանակը [2]	238	244	239
ժամանակաշրջանի ընթացքում լիցենզավորված	1	3	0
ժամանակաշրջանի ընթացքում լիցենզիան ուժը կորցրած ճանաչված	1	16	0
Արժութային դիլերների քանակը	0	0	0
Դրամական փոխանցումներ իրականացնող կազմակերպություններ	7	7	8

[1] «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի համաձայն մասնագիտացված անձինք 2008 թ. հունիսի 30-ի դրությամբ վերալիցենզավորվել են որպես ներդրումային ծառայություններ մատուցող:
[2] Ներկայացված են գործող փոխանակման կետերը:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2012 թ. I եռամսյակ	2012 թ. II եռամսյակ	2012 թ. III եռամսյակ	2012 թ. IV եռամսյակ	2013 թ. I եռամսյակ	2013 թ. II եռամսյակ
Միջին եռամսյակային ակտիվներ[1]	2020903	2174354	2255015	2402395	2530541	2577843
Միջին եռամսյակային վարկեր	1266248	1390647	1438628	1502184	1567966	1603713
Միջին եռամսյակային պարտավորություններ	1661825	1808638	1881318	2015263	2136970	2174152
Միջին եռամսյակային ավանդներ	905104	960928	1032604	1115606	1203159	1279005
Միջին եռամսյակային կապիտալ	359078	365715	373696	387132	393571	403691
Միջին եռամսյակային ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվային ցուցանիշ	18.0%	17.1%	17.0%	17.1%	16.5%	16.3%
Միջին եռամսյակային ընդհանուր իրացվելիության նորմատիվային ցուցանիշ	26.7%	24.4%	25.1%	25.6%	26.0%	26.0%
Միջին եռամսյակային ընթացիկ իրացվելիության նորմատիվային ցուցանիշ	128.8%	118.3%	123.6%	127.3%	135.6%	128.9%

[1] Միջին եռամսյակային ցուցանիշները հաշվարկվում են եռամսյակի երեք ամիսների մեծությունների միջինացմամբ:

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ[1] ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	31.03.2013[1]	30.06.2013[1]	Փոփոխություն 30.06.13 – 31.03.13
Հաշվեկշռային կապիտալ	**405434**	**413189**	**7755**
Կանոնադրական հիմնադրամ	**251627**	**251627**	**0**
Շահույթ / վնաս[2], *այդ թվում՝*	**112504**	**118048**	**5544**
Հաշվետու ժամանակաշրջանի շահույթ (վնաս)	3993	12145	8152
Տոկոսային եկամուտներ	59940	123720	63780
Տոկոսային ծախսեր	32721	65459	32737
Ոչ տոկոսային եկամուտներ	14538	30033	15495
Ոչ տոկոսային ծախսեր	24380	51166	26785
Այլ ծախսեր[5]	13383	24984	11600
Ընդհանուր պարտավորություններ[3], *այդ թվում՝*	**2164580**	**2227542**	**62962**
Բանկերի թղթակցային հաշիվներ	6188	7581	1393
Այլ պարտավորություններ բանկերի նկատմամբ (ներառյալ՝ ԿԲ)	404919	407244	2325
Պարտավորություններ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	300336	299581	-756
Ցպահանջ պարտավորություններ իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ	408750	482256	73506
Ժամկետային ավանդներ իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ	855629	856208	579
Ընդհանուր ակտիվներ[4], *այդ թվում՝*	**2570014**	**2640731**	**70717**
Կանխիկ դրամական միջոցներ	97158	94309	-2848
Թղթակցային հաշիվներ բանկերում (ներառյալ՝ ԿԲ)	370646	401681	31035
Այլ պահանջներ բանկերի նկատմամբ (ներառյալ՝ ԿԲ)	102981	111115	8134
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	37362	42252	4890
Պետական արժեթղթեր, այդ թվում	176194	186919	10725
Այլ արժեթղթեր	6449	6618	169
Վարկեր իրավաբանական և ֆիզիկական անձանց	1578467	1610012	31544
Վարկային ներդրումներ, *այդ թվում՝*	**1666878**	**1719523**	**52645**
1. Ստանդարտ	1575023	1618383	43360
2. Հսկվող	61371	63287	1916
3. Ոչ ստանդարտ	14407	22681	8273
4. Կասկածելի	16078	15173	-905

[1] Հաշվարկներում ընդգրկված են ընդհանուր վերահսկողության դաշտում գործող բանկերը:

[2] Ներառված է նախորդ և ընթացիկ ժամանակաշրջանի շահույթի (վնասի) գումարը:

[3] Տվյալներում ներառված չեն ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի և արժութային սվոփով ձեռք բերված արժույթի գծով պարտավորությունները:

[4] Տվյալները ներկայացնում են բանկերի հաշվեկշռային ընդհանուր ակտիվները, որտեղ ընդգրկված են նաև նյութական ակտիվները և այլ պահանջները, հաշվարկված ստացվելիք տոկոսները: Նվազեցված են ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի և արժութային սվոփով ձեռք բերված արժույթի գծով պարտավորությունների չափով:

[5] Տվյալներում ընդգրկված են ակտիվների զուտ մասհանումները և շահութահարկը:

ՀՀ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	31.03.2013	30.06.2013	Փոփոխություն 30.06.13 – 31.03.13
Հաշվեկշռային կապիտալ	**69118**	**72455**	**3336**
Կանոնադրական հիմնադրամ	**54816**	**57978**	**3162**
Շահույթ / վնաս[1], *այդ թվում՝*	**12339**	**12317**	**-22**
Հաշվետու ժամանակաշրջանի շահույթ (վնաս)	1639	3196	1557
Տոկոսային եկամուտներ	5765	12092	6326
Տոկոսային ծախսեր	2200	4550	2350
Ոչ տոկոսային եկամուտներ	1775	3451	1676
Ոչ տոկոսային ծախսեր	2884	6173	3289
Զուտ մասհանումներ	579	1064	485
Այլ ծախսեր[2]	239	560	322
Ընդհանուր պարտավորություններ[3], *այդ թվում՝*	**110725**	**117135**	**6410**
Բանկերից ներգրաված միջոցներ	35375	41918	6543
Այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրաված միջոցներ	28222	30082	1860
Ցպահանջ պարտավորություններ ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ	732	781	49
Ժամկետային պարտավորություններ ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ	26703	25312	-1392
Ընդհանուր ակտիվներ[4], *այդ թվում՝*	**179843**	**189590**	**9747**
Կանխիկ դրամական միջոցներ	496	631	135
Բանկային հաշիվներ	4454	6649	2194
Այլ պահանջներ բանկերի նկատմամբ	40787	43510	2723
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	4110	4600	490
Վարկեր	112982	117780	4798
Ֆինանսական վարձակալություն	9316	9238	-77
Պետական արժեթղթեր	2881	3396	515
Այլ արժեթղթեր	446	136	-310
Վարկային ներդրումներ, *այդ թվում՝*	**159191**	**167165**	**7975**
Ստանդարտ	153647	159901	6254
Հսկվող	2785	4336	1551
Ոչ ստանդարտ	1605	1384	-221
Կասկածելի	1154	1544	390

[1] Ներառված է նախորդ և ընթացիկ ժամանակաշրջանի շահույթի (վնասի) գումարը:

[2] Տվյալներում ընդգրկված են ակտիվների զուտ մասհանումները և շահութահարկը:

[3] Տվյալները ներկայացնում են վարկային կազմակերպությունների հաշվեկշռային ընդհանուր պարտավորությունները, որտեղ, վերը նշված տողերից բացի, ընդգրկված են նաև այլ պարտավորությունները, ՀՀ կառավարության նկատմամբ պարտավորությունները և հաշվարկված վճարվելիք տոկոսները:

[4] Տվյալները ներկայացնում են վարկային կազմակերպությունների հաշվեկշռային ընդհանուր ակտիվները, որտեղ, վերը նշված տողերից բացի, ընդգրկված են նաև նյութական ակտիվները և այլ պահանջները, հաշվարկված ստացվելիք տոկոսները, սակայն նվազեցված են ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի և արժութային սվոփով ձեռք բերված արժույթի գծով պարտավորությունների չափով:

ՀՀ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	31.03.2013	30.06.2013	Փոփոխություն (30.06.2013) - (31.03.2013)
Դրամական միջոցներ	48	56	8
Բանկային հաշիվներ	1148	889	-260
Ուղղակի ապահովագրության գծով ստացվելիք գումարներ	7300	11728	4428
Համաապահովագրողներից ստացվելիք ապահովագրավճարներ	0	0	0
Վերաապահովագրողներից ստացվելիք գումարներ	150	128	-23
Հատուցումների գծով պահանջներ	495	549	54
Սուբրոգացիայի հետևանքով առաջացած պահանջներ	365	440	76
Ավանդներ բանկերում	15363	14887	-476
Տրամադրված փոխառություններ	621	1196	576
Ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթեր	4266	4942	675
Արժեթղթեր	2313	1337	-976
Հնարավոր կորուստների անհավաքագրելիության պահուստներ	-605	-723	-119
Վերաապահովագրողի բաժինը ապահովագրական պահուստներում	2040	2326	286
Հաշվարկված ստացվելիք տոկոսներ	558	613	55
Ապագա ժամանակաշրջանի ծախսեր և ապահովագրության գծով կանխավճարներ	3153	3579	426
Հիմնական միջոցներ	3065	3094	29
Այլ ակտիվներ	2955	5208	2253
Ընդամենը ակտիվներ	**43238**	**50250**	**7012**
Դրամ	37537	44727	7190
Արտարժույթ	5701	5524	-177
Վճարվելիք հատուցումներ	272	273	1
Վճարվելիք գումարներ միջնորդներին	707	937	229
Հետ վերադարձվող ապահովագրավճարներ	74	87	13
Համաապահովագրողներին, վերաապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարներ	1177	1126	-51
Փոխառություններ և վարկեր	2093	3634	1541
Տեխնիկական պահուստներ, այդ թվում՝	18603	22287	3685
ՉԱՊ	13655	16726	3070
Պահանջների պահուստներ	3772	4383	611
Մաթեմատիկական պահուստ	0	0	0
Այլ պահուստներ	1176	1179	3
Ռեպո համաձայնագրեր	4197	4976	779
Այլ պարտավորություններ	2055	2596	542
Ընդամենը պարտավորություններ	**29176**	**35916**	**6739**
Դրամ	26596	33399	6803
Արտարժույթ	2581	2517	-64
Կանոնադրական կապիտալ	11430	13232	1802
Ընթացիկ ժամանակաշրջանի չբաշխված շահույթ/վնաս	330	-278	-609
Նախորդ ժամանակաշրջանի չբաշխված շահույթ/վնաս	1594	683	-912
Այլ	707	698	-9
Ընդամենը սեփական կապիտալ	**14062**	**14335**	**273**
Ապահովագրական գումարներ	8026868	8275608	248740
Ապահովագրավճարների համախառն մեծությունը	11408	22708	11300
Վերաապահովագրողին փոխանցված ապահովագրավճարներ	751	1318	567
Ապահովագրական հատուցումների համախառն մեծությունը	4916	9656	4740
Վերաապահովագրողի բաժինն ապահովագրական հատուցումներում	169	372	203

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	31.03.2013	30.06.2013	Փոփոխություն (30.06.2013) - (31.03.2013)
Հաշվեկշռային ընդհանուր կապիտալ	**4085**	**4167**	**82**
Չբաշխված շահույթ (վնաս), այդ թվում՝	712	644	-68
Ընթացիկ ժամանակաշրջանի շահույթ	140	309	170
Միջնորդավճարներ և եկամուտներ ՆԾ մատուցումից	737	749	12
Արժեթղթերի վաճառքից ստացված զուտ եկամուտներ	127	392	265
Կանոնադրական կապիտալ	2792	2942	150
Ընդհանուր պարտավորություններ	**21710**	**23324**	**1614**
Ռեզիդենտ բանկերից ներգրաված վարկեր	1557	1860	303
Պարտավորություններ ռեպո համաձայնագրերի գծով	19490	20938	1448
Հաշվեկշռային ընդհանուր ակտիվներ	**25794**	**27491**	**1696**
Կանխիկ դրամական միջոցներ	3	2	1
Բանկային հաշիվներ	730	477	-254
Ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթեր	19775	21235	1460
Ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթեր	-	-	-
Պետական արժեթղթեր	2807	3000	193
Այլ արժեթղթեր	310	816	506

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՋԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԿՆՔՎԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2013	
	I եռ.	II եռ.
ՆԲ կողմից կնքված գործարքներ	**1123353**	**1344317**
բաժնային արժեթղթեր	2498	5765
այդ թվում՝ բորսայական	834	193
կորպորատիվ պարտատոմսեր	77045	99994
այդ թվում՝ բորսայական	1111	1523
պետական պարտատոմսեր	89386	105080
այդ թվում՝ բորսայական	639	3320
ռեպո/հակադարձ ռեպո գործարքներ[1]	954424	1133478
այդ թվում՝ բորսայական	9	727
ՆԸ կողմից կնքված գործարքներ	**89798**	**82376**
բաժնային արժեթղթեր	761	1056
այդ թվում՝ բորսայական	755	1055
կորպորատիվ պարտատոմսեր	136	300
այդ թվում՝ բորսայական	135	217
պետական պարտատոմսեր	5047	3057
այդ թվում՝ բորսայական	-	206
ռեպո/հակադարձ ռեպո գործարքներ[1]	83853	77963
այդ թվում՝ բորսայական	9	-

[1] Ռեպո/հակադարձ ռեպո գործարքները չեն ներառում երկարաձգումները:

ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

(2013 թ. հունիսի 30-ի դրությամբ)

(հազար ՀՀ դրամ)

	30.06.2013	*31.03.2013*	*2012*
Ակտիվներ			
Ակտիվներ արտարժույթով			
Կանխիկ դրամ	5,608,306	5,728,494	5,937,942
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ	159,791,984	228,025,932	248,667,357
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	345,140,768	285,810,540	273,543,277
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	1,646	1,646	1,646
Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ	133,861,671	162,455,784	185,240,208
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ	70,636,825	58,424,059	69,868,364
Այլ ակտիվներ	4,567,619	157,651	20,615
	719,608,819	**740,604,106**	**783,279,409**
Ակտիվներ տեղական արժույթով			
Վարկեր և հակադարձ հետգնման պայմանագրեր	183,060,828	167,650,398	171,603,820
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	132,637,027	132,376,508	131,118,876
Հիմնական միջոցներ	69,836,829	67,309,878	64,338,694
Ոչ նյութական ակտիվներ	909,642	907,342	941,898
Այլ ակտիվներ	3,252,715	2,541,511	3,152,144
	389,697,041	**370,785,637**	**371,155,432**
Ընդամենը ակտիվներ	**1,109,305,860**	**1,111,389,743**	**1,154,434,841**
Պարտավորություններ և սեփական կապիտալ			
Պարտավորություններ արտարժույթով			
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	106,766,861	86,247,046	87,905,163
Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ	1,998,118	2,571,830	2,718,775
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	687,745	3,819,868	2,015,617
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	278,390,937	286,814,862	299,023,415
Այլ փոխառություններ	55,306,716	55,292,576	53,206,929
Այլ պարտավորություններ	148,000	172,888	244,322
	443,298,377	**434,919,070**	**445,114,221**
Պարտավորություններ տեղական արժույթով			
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ	404,169,122	395,632,669	440,117,123
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	172,700,821	185,591,701	181,964,508
Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ	112,382,402	114,892,983	106,563,930
Այլ պարտավորություններ	2,215,083	1,976,105	2,836,566
	691,467,428	**698,093,458**	**731,482,127**
Ընդամենը պարտավորություններ	**1,134,765,805**	**1,133,012,528**	**1,176,596,348**
Սեփական կապիտալ			
Թողարկված կապիտալ	100,000	100,000	100,000
Գլխավոր պահուստ	17,389,049	17,389,049	17,389,049
Լրացուցիչ կապիտալ	107,531,884	107,531,884	107,531,884
Վաճառքի համար մատչելի ակտիվների վերագնահատման պահուստ	(1,044,714)	(1,317,705)	(1,182,440)
Կուտակված շահույթ/վնաս	(149,436,164)	(145,326,013)	(146,000,000)
Ընդամենը սեփական կապիտալ	**(25,459,945)**	**(21,622,785)**	**(22,161,507)**
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ	**1,109,305,860**	**1,111,389,743**	**1,154,434,841**

ՀՀ ԿԲ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը հաստատվել է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից 2013 թվականի հուլիսի 20-ին և ստորագրվել:

ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆ

Նախագահ

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ

Գլխավոր հաշվապահ

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների վիճակը և կազմը

ՀՀ կենտրոնական բանկը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածի դրույթներով, ներկայացնում է

ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների վիճակի և կազմի մասին

2013 թ. 2-րդ եռամսյակ (ներառյալ՝ եզրափակիչ շրջանառությունը)

Եռամսյակի սկիզբ	**ՀՓԻ**		**ԱՄՆ դոլար**
I. Համախառն արտաքին ակտիվներ			1,631,218,357.35
այդ թվում՝			
միջազգային պահուստներ (համախառն արտաքին ակտիվներ ազատ փոխարկելի արժույթով)			1,631,217,920.70
որից՝			
ՀՓԻ ԱՄՀ-ում	1,101,079.00		1,650,733.71
պահուստային դիրք ԱՄՀ-ում	0.00		0.00
II. Զուտ արտաքին ակտիվներ			951,660,378.87
որից՝ ազատ փոխարկելի արժույթով			951,659,942.22

Եռամսյակի վերջ			
I. Համախառն արտաքին ակտիվներ			1,606,263,455.01
այդ թվում՝			
միջազգային պահուստներ (համախառն արտաքին ակտիվներ ազատ փոխարկելի արժույթով)			1,606,263,064.38
որից՝			
ՀՓԻ ԱՄՀ-ում	22,582,270.00		33,962,795.08
պահուստային դիրք ԱՄՀ-ում	0.00		0.00
II. Զուտ արտաքին ակտիվներ			930,036,756.37
որից՝ ազատ փոխարկելի արժույթով			930,036,365.74

ՀՀ ԿԲ նախագահ

ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԴԻՐՔԸ 2012 ԹՎԱԿԱՆԻՆ [6, 7]

Վիճակագրության վարչություն

Վճարային հաշվեկշիռն ու միջազգային ներդրումային դիրքը տվյալ երկրի և արտաքին աշխարհի միջև իրականացված տնտեսական բոլոր գործառնությունների վիճակագրական արտացոլումն են: Եթե վճարային հաշվեկշիռն արտացոլում է ժամանակի որոշակի միավորի ընթացքում՝ սովորաբար 1 տարում իրականացված գործառնությունները, ապա միջազգային ներդրումային դիրքն արտացոլում է նախկինում իրականացված բոլոր տնտեսական գործառնությունների արդյունքում արտաքին աշխարհի նկատմամբ ձևավորված երկրի ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ժամանակի որոշակի պահի դրությամբ:

Հայաստանի վճարային հաշվեկշիռը կազմվում է 1993 թվականից, իսկ միջազգային ներդրումային դիրքը՝ 1998 թվականից: Մինչև 2011 թվականը այդ աշխատանքները իրականացնում էր ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը, իսկ սկսած 2011 թվականից՝ Հայաստանի արտաքին հաշիվների վիճակագրությունը կազմում է ՀՀ կենտրոնական բանկը: Վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի վիճակագրությունը կազմվում է միջազգային չափանիշներին համապատասխան և համահունչ է միջազգային չափորոշիչներին[8], թեև շարունակական բարելավման կարիք ունի:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2012 թվականին հիմնականում պահպանվել են ՀՀ վճարային հաշվեկշռի՝ նախորդ տարիների միտումները, միևնույն ժամանակ դրսևորվել են որոշակի առանձնահատկություններ: Այսպես, նախորդ տարիների համեմատ կտրուկ դանդաղել են թե՛ արտահանման և թե՛ ներմուծման աճի տեմպերը՝ համապատասխանաբար կազմելով 2.5% և 2.2% (նախորդ տարի՝ 34.4% և 14.0%): Ինչպես նախորդ տարիներին, արձանագրվել է գործոնային եկամուտների աճ՝ 12.5%, սակայն ընթացիկ տրանսֆերտները նախորդ տարվա համեմատ գրեթե չեն փոխվել և տարվա ընթացքում կազմել են 723.3 ԱՄՆ մլն դոլար (այսուհետև՝ դոլար): Հարկ է նշել, որ ընթացիկ տրանսֆերտների նման միտումը պայմանավորված է պետական տրանսֆերտների՝ նախորդ տարվա համեմատ 66.4 մլն դոլարով նվազմամբ, մինչդեռ մասնավոր ընթա-

---

* *Հեղինակների տեսակետները կարող են չհամընկնել ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական դիրքորոշմանը:*

[6] *Նյութը յուրաքանչյուր տարի հրապարակվում է «ՀՀ կենտրոնական բանկի բաներ» պարբերականում (սկսած՝ 2000 թվականից, հիմնականում՝ 2-րդ եռամսյակի թողարկման մեջ):*

[7] *Վճարային հաշվեկշռի, միջազգային ներդրումային դիրքի և արտաքին պարտքի վերաբերյալ տվյալների աղբյուրը ՀՀ կենտրոնական բանկն է, իսկ արտաքին առևտրի տվյալների աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը:*

[8] *«Վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի ձեռնարկ» (5-րդ հրատարակություն, 1993 թ.), «Վճարային հաշվեկշռի կազմման ուղեցույց» (1995թ.):*

ցիկ տրանսֆերտներն ավելացել են 66.6 մլն դոլարով: Ի տարբերություն նախորդ տարվա, ընթացիկ հաշվի պակասուրդը բացարձակ առումով աճել է ընդամենը 6.9 մլն դոլարով և ՀՆԱ-ում կազմել 11.3%՝ նախորդ տարվա 10.9%-ի փոխարեն: Այսպիսով, մոտ 2.0%-ով աճել է «Ապրանքներ» հոդվածի բացասական հաշվեկշիռը, իսկ աշխատուժից եկամուտների ու ընդամենը տրանսֆերտների զուտ ներհոսքի աճը կազմել է 4.0% (նախորդ տարի՝ 33.1% աճ):

Աղյուսակ 1. ՀՀ վճարային հաշվեկշիռը 2011-2012 թվականներին (մլն դոլար, վերլուծական ներկայացում)

Ցուցանիշներ	2011					2012				
	I եռ.	II եռ.	III եռ.	IV եռ.	2011	I եռ.	II եռ.	III եռ.	IV եռ.	2012
Ընթացիկ հաշիվ	**-408.9**	**-334.6**	**-176.1**	**-188.6**	**-1,108.2**	**-428.3**	**-345.2**	**-121.7**	**-219.9**	**-1,115.1**
Ընթացիկ հաշիվ (առանց վերաներդրված եկամտի)	-330.2	-285.0	-107.8	-148.4	-871.5	-351.3	- 281.1	-63.8	-153.7	-849.8
Ապրանքներ	-463.1	-499.7	-522.7	-592.2	-2,077.6	-488.4	-526.0	-460.0	-644.5	-2,118.9
Արտահանում	307.4	401.4	439.4	431.8	1,580.0	347.1	402.2	412.8	457.1	1,619.1
Ներմուծում	-770.5	-901.1	-962.1	-1024.0	-3,657.7	-835.5	-928.2	-872.8	-1,101.6	-3,738.0
Ծառայություններ	-65.5	-79.3	-76.7	-90.6	-312.1	-80.2	-91.2	-76.5	-100.1	-348.0
Արտահանում	148.4	186.6	269.6	222.3	826.9	149.1	187.0	260.4	224.8	821.3
Ներմուծում	-213.9	-265.9	-346.3	-312.9	-1,139.0	-229.3	-278.2	-337.0	-324.8	-1,169.3
Եկամուտներ (զուտ)	-8.8	99.5	226.4	241.4	558.5	-11.1	119.6	238.7	281.3	628.5
Եկամուտ աշխատուժից	99.7	223.6	338.0	390.9	1,052.2	111.9	238.2	355.4	418.2	1,123.7
Եկամուտ ներդրումներից	-108.5	-124.1	-111.7	-149.5	-493.7	-123.0	-118.6	-116.6	-137.0	-495.1
այդ թվում՝ վերաներդրված եկամուտ	-78.7	-49.6	-68.2	-40.2	-236.7	-77.0	-64.1	-58.0	-66.2	-265.3
Ընթացիկ տրանսֆերտներ (զուտ)	128.6	144.8	196.9	252.7	723.1	151.4	152.4	176.0	243.4	723.3
Պետական	18.4	23.8	58.1	60.0	160.3	16.5	17.0	23.0	37.5	93.9
Մասնավոր	110.2	121.0	138.9	192.6	562.7	134.9	135.4	153.0	205.9	629.4
Կապիտալի և ֆինանսական հաշիվ (առանց միջազգային պահուստների փոփոխության և ԿԲ կողմից ԱՄՀ վարկի օգտագործման)	**305.6**	**281.2**	**398.4**	**253.2**	**1,238.3**	**164.3**	**311.1**	**80.6**	**399.7**	**955.8**
Կապիտալի հաշիվ	26.3	24.4	24.1	21.4	96.2	26.4	17.6	31.3	30.1	105.4
Ֆինանսական հաշիվ	279.3	256.7	374.3	231.7	1,142.1	137.9	293.5	49.3	369.6	850.3
Ուղղակի ներդրումներ	156.1	120.4	133.1	37.8	447.5	101.3	74.5	132.8	165.1	473.6
Պորտֆելային ներդրումներ	-10.5	-4.4	1.3	3.3	-10.4	0.0	-1.2	0.5	1.5	0.8
Այլ ներդրումներ	133.7	140.7	239.9	190.6	705.0	36.6	220.3	-83.9	202.9	375.9
Ակտիվներ	-34.1	-27.5	-106.5	80.0	-88.1	118.0	-74.9	-205.7	101.0	-61.6
Դրամավարկային կարգավորման մարմիններ	-0.2	2.4	-1.9	-1.3	-1.0	0.9	-0.2	0.1	1.7	2.6
Պետական հատված	-0.7	-0.4	-0.2	0.2	-1.1	-1.5	-0.4	0.2	0.2	-1.5
Բանկեր	-32.4	-11.7	-12.8	31.3	-25.6	116.9	-117.5	-90.4	83.6	-7.2
Այլ հատվածներ	-0.8	-17.8	-91.6	49.8	-60.4	1.6	43.2	-115.7	15.4	-55.4
Պարտավորություններ	167.8	168.2	346.5	110.6	793.1	-81.4	295.2	121.7	101.9	437.4
Դրամավարկային կարգավորման մարմիններ	-0.0	-0.1	0.9	25.6	26.4	7.9	8.6	5.0	7.8	29.3
Պետական հատված	23.2	33.8	100.5	58.0	215.5	60.8	116.4	19.7	38.0	234.9
Բանկեր	111.2	130.6	233.6	26.9	502.2	- 107.6	179.8	121.5	114.9	308.6
Այլ հատվածներ	33.4	3.9	11.6	0.1	49.0	- 42.4	-9.7	-24.5	-58.8	-135.3
Հաշվեկշիռ	**-103.3**	**-53.5**	**222.4**	**64.5**	**130.2**	**-264.0**	**-34.0**	**-41.1**	**179.7**	**-159.4**
ԿԲ միջազգային պահուստների փոփոխություն	**76.7**	**56.4**	**-218.4**	**-47.6**	**-132.9**	**165.1**	**4.8**	**-3.1**	**-118.5**	**48.3**
ԱՄՀ վարկի օգտագործում[9]	**-0.3**	**-11.6**	**27.9**	**16.2**	**32.2**	**0.0**	**-15.1**	**-31.1**	**-8.0**	**-54.2**
Սխալներ և բացթողումներ	**26.9**	**8.7**	**-32.0**	**-32.9**	**-29.4**	**98.8**	**44.4**	**75.3**	**-53.3**	**165.2**

[9] *Ներառված է միայն ՀՀ ԿԲ կողմից ԱՄՀ վարկի օգտագործումը:*


Կապիտալի հաշվում նախորդ տարվա համեմատ նվազել են պետական տրանսֆերտները՝ 29.9 մլն դոլարով և կազմել են 33.7 մլն դոլար՝ պայմանավորված «Լինսի» հիմնադրամի գործունեության դադարեցմամբ և «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրի ավարտով: Միևնույն ժամանակ, նախորդ տարվա համեմատ 39.1 մլն դոլարով աճել են մասնավոր կապիտալ տրանսֆերտները: Նշված հոդվածների փոփոխության արդյունքում կապիտալի հաշիվը աճել է 9.2 մլն դոլարով: Ֆինանսական հաշվում 2012 թվականին գրանցվել է օտարերկրյա ուղղակի ներդրումների 474.0 մլն դոլարի զուտ ներհոսք, որը նախորդ տարվա համեմատ ավելացել է 5.8%-ով: Նշենք նաև, որ 2012 թվականին նվազել են արտերկրնեռում կատարված ուղղակի ներդրումները՝ նախորդ տարվա 78.0 մլն դոլարի փոխարեն՝ 2012 թվականին կազմելով 15.8 մլն դոլար: Տարվա ընթացքում բանկային համակարգում ավելացել են ոչ ռեզիդենտներին տրամադրված և ոչ ռեզիդենտներից ներգրավված վարկերը՝ համապատասխանաբար 47.3 մլն դոլարով և 302.6 մլն դոլարով: Հարկ է նշել, որ 2012 թվականին տեղի է ունեցել բանկերի կողմից ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների զուտ մարում 14.7 մլն դոլարի չափով: Տարվա ընթացքում մասնավոր հատվածի կողմից կանխիկ արտարժույթի զուտ կուտակված ծավալները կազմել են շուրջ 53.7 մլն դոլար: 2012 թվականին ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պահուստները նվազել են շուրջ 48.3 մլն դոլարով:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՎ

Ապրանքների արտահանում

Ապրանքների արտահանումը (կրեդիտ)[10] 2012 թվականին կազմել է 1619.1 մլն դոլար (նախորդ տարվա համեմատ ավելացել է 2.5%-ով), իսկ ապրանքների արտահանումը, ըստ արտաքին առևտրի վիճակագրության, կազմել է 1380.2 մլն դոլար (նախորդ տարվա համեմատ ավելացել է 3.4%-ով): Առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի՝ արտահանումն ավելացել է 6.1%-ով՝ նախորդ տարվա 25.5%-ի փոխարեն:

Գծապատկեր 1. Ապրանքների արտահանումը (ըստ ապրանքների առևտրի վիճակագրության տվյալների) 2007-2012 թվականներին




Նշենք, որ 2012 թվականին «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբի արտահանման ծավալները նախորդ տարվա համեմատ ավելացել են 71.0 մլն դոլարով կամ 38.6%-ով, «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախմբինը՝ 7.7 մլն դոլարով կամ 23.1%-ով, «Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք» ապրանքախմբինը՝ 3.1 մլն դոլարով կամ 10.2%-ով:

---

[10] ***Ապրանքների արտահանման կրեդիտ*** *հոդվածը ներառում է ապրանքների արտահանումը ըստ արտաքին առևտրի վիճակագրության՝ ՖՕԲ գներով, որին ավելացվում են վերամշակման, վերանորոգման նպատակով արտահանված ապրանքները, ինչպես նաև տրանսպորտային կայաններում ծեռք բերված ապրանքները և ոչ մոնետար ոսկու արտահանումը: Արտաքին առևտրի վիճակագրությունը ընդգրկում է մաքսային մարմինների կողմից հայտարարագրված ապրանքների առևտուրը՝ կատարված իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից:*

Ի տարբերություն վերոնշյալ ապրանքախմբերի, նվազել են հիմնականում «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի (23.4 մլն դոլարով կամ 11.9%-ով) և «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի (22.7 մլն դոլարով կամ 6.2%-ով) արտահանման ծավալները:

Գծապատկեր 2. Արտահանման կառուցվածքն ըստ ապրանքախմբերի [11]



2012 թվականին, նախորդ տարվա համեմատ, նվազել է մետաղական արտադրանքի արտահանումը, թեև 2002 թվականից, ընդհանուր առմամբ, ունի աճի միտում: Նվազել են գրեթե բոլոր մետաղական ապրանքների արտահանման ծավալները: Արդյունքում՝ 2012 թվականին մետաղական ապրանքների արտահանման տեսակարար կշիռը ընդհանուր արտահանման ծավալում նվազել է 3.4 %-ով՝ կազմելով 50.5 %: 2012 թվականին մետաղները հիմնականում արտահանվել են Բուլղարիա (արտահանվում է հիմնականում պղնձի հանքաքար և խտանյութ), Գերմանիա (արտահանվում է երկաթամիահալվածք, պղինձ և մոլիբդեն), Բելգիա (արտահանվում է հիմնականում պղինձ), Նիդեռլանդներ (արտահանվում է հիմնականում երկաթամիահալվածք) Կանադա (արտահանվում է անմշակ ոսկի) և ԱՄՆ (արտահանվում է հիմնականում ալյումինե փայլաթիթեղ):

Աղյուսակ 2. Արտահանվող մետաղների հիմնական տեսակները

Մետաղը	2010		2011		2012	
	Արժեք (մլն դոլար)	Տես. կշիռը ընդհանուր արտահանման մեջ (%)	Արժեք (մլն դոլար)	Տես. կշիռը ընդհանուր արտահանման մեջ (%)	Արժեք (մլն դոլար)	Տես. կշիռը ընդհանուր արտահանման մեջ (%)
Պղինձ	310.3	29.8	380.7	28.5	338.3	24.5
որից՝ հանքաքար	210.6	20.2	260.6	19.5	227.6	16.5
Երկաթամիահալվածք	119.6	11.5	121.3	9.1	106.8	7.7
Ոսկի	28.6	2.7	79.5	6.0	91.4	6.6
Ալյումին	83.3	8.0	91.2	6.8	88.0	6.4
Մոլիբդեն	19.3	1.9	26.4	2.0	27.2	2.0
որից՝ հանքաքար	3.8	0.4	11.1	0.8	8.3	0.6
Ցինկի հանքաքար	13.7	1.3	13.9	1.0	17.7	1.3
Այլ	15.8	1.5	5.5	0.4	27.3	2.0

[11] *Ապրանքների արտահանումը գրաֆիկում ներկայացված է ըստ ապրանքների արտաքին առևտրի վիճակագրության:*

Ինչպես արդեն նշվել է, 2012 թվականին, 2011 թվականի համեմատ, ապրանքների արտահանումն ավելացել է 3.4%-ով (ըստ արտաքին առևտրի վիճակագրության), ընդ որում՝ գները նվազել են 7.0%-ով, իսկ ֆիզիկական ծավալներն աճել են 10.4%-ով: Արտահանման մեջ զգալի տեսակարար կշիռ ունեցող ապրանքախմբերը հիմնականում նվազել են կամ գրեթե չեն աճել, ինչը պայմանավորված է համաշխարհային շուկաներում այդ ապրանքների (մասնավորապես՝ ադամանդի, մետաղների) գների որոշակի կայունացմամբ: Արձանագրվել է «Մանածագործական իրեր, կաշի և կոշկեղեն» ապրանքախմբի զգալի փոփոխություն՝ արտահանումն աճել է 86.4%-ով, ընդ որում՝ ի հաշիվ գների աճի՝ 42.4%-ով, իսկ ֆիզիկական ծավալների՝ 44.0%-ով: «Գյուղատնտեսական մթերքներ» ապրանքախմբի արտահանման աճի բարձր տեմպը պահպանվել է և կազմել է 35.9%, ընդ որում՝ ի հաշիվ գների աճի՝ 2.9%-ով, իսկ ֆիզիկական ծավալների՝ 33.0%-ով: Սա հիմնականում պայմանավորված է ապրանքախմբում զգալի կշիռ ունեցող «Կոնյակ, ռոմ, ջին, օղի, լիկյոր»-ի, «Սիգարետ և սիգար»-ի և մրգերի արտահանման զգալի աճով:

Աղյուսակ 3. Արտահանման փոփոխությունն ի հաշիվ գնի և ծավալի (%) [12]

Ապրանքախումբ	2011			2012		
	Աճ (+), նվազում (-)	Այդ թվում՝ փոփոխություններ՝ կապված		Աճ (+), նվազում (-)	Այդ թվում՝ փոփոխություններ՝ կապված	
		ֆիզիկական ծավալների հետ	գների հետ		ֆիզիկական ծավալների հետ	գների հետ
Ընդամենը	**28.2**	**15.5**	**12.7**	**3.4**	**10.4**	**-7.0**
Մանածագործական իրեր, կաշի և կոշկեղեն [13]	27.3	14.0	13.3	86.4	44.0	42.4
Թանկարժեք քարեր և մետաղներ	46.5	3.5	43.0	-11.9	-23.2	11.3
Հանքահումքային մթերքներ և քիմիական արտադրության ապրանքներ [14]	26.9	8.0	18.9	1.1	16.7	-15.6
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատ. իրեր	9.7	7.3	2.4	-6.2	6.5	-12.7
Գյուղատնտեսական մթերքներ [15]	39.1	38.3	0.8	35.9	33.0	2.9
Մեքենաներ, սարքեր և տրանսպորտային միջոցներ [16]	84.8	76.3	8.5	-14.2	0.8	-15.0
Այլ ապրանքներ [17]	-5.1	-3.5	-1.6	48.8	39.7	9.1

Ինչպես նախորդ տարիներին, արտահանվող ապրանքների ապրանքային բևեռացման ցուցանիշը[18] շարունակել է մնալ բարձր: Այսպես, 2012 թվականին 4 հիմնական ապրանքախմբեր՝ «Պատրաստի սննդի արտադրանք», «Հանքահումքային մթերք», «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից իրեր», «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» կազմել են ամբողջ արտահանման ավելի քան 85%-ը: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ արտահանվող ապրանքների ապրանքային բևեռացման ցուցանիշը 2012 թվականին մի փոքր նվազել է՝ կազմելով 44.7%, ինչը պայմանավորված է արտահանման մեջ «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից իրեր» և «Հանքահումքային մթերքներ» ապրանքախմբերի տեսակարար կշիռների նվազմամբ (2011 թվականին համապատասխանաբար կազմել են 27.3%, 14.7% և 30.3%, 2012 թվականին՝ 24.8%, 12.5% և 29.2%):

---

[12] Գների հաշվարկն իրականացվել է ՀՀ ԿԲ վիճակագրության վարչության կողմից:

[13] Ներառում է «Մանածագործական իրեր», «Կոշկեղեն, հովանոցներ, գլխարկներ», «Կաշվե հումք, մորթի, կաշի և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբերը:

[14] Ներառում է «Հանքահումքային մթերքներ», «Քիմիական արտադրության ապրանքներ», «Պլաստմասսա, կաուչուկ, ռետին և դրանցից պատրաստված իրեր», «Իրեր քարից, գիպսից, ցեմենտից» ապրանքախմբերը:

[15] Ներառում է «Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք», «Բուսական ծագման արտադրանք», «Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր», «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբերը:

[16] Ներառում է «Մեքենաներ և սարքավորումներ», «Տրանսպորտային միջոցներ», «Սարքեր և ապարատներ» ապրանքախմբերը:

[17] Ներառում է «Փայտ և փայտյա իրեր», «Թուղթ և թղթյա իրեր», «Կահույք և խաղալիքներ», «Արվեստի ստեղծագործություններ» ապրանքախմբերը:

[18] Հաշվարկվում է հետևյալ բանաձևի օգնությամբ.

$$K = \frac{\sqrt{\sum_{i=1}^{n} x_i^2}}{X} * 100, \text{ որտեղ՝}$$


K-ն բևեռացման գործակիցն է, x_i-ը՝ i ապրանքի արտահանման (ներմուծման) ծավալը, X–ը՝ Հայաստանի ամբողջ արտահանման (ներմուծման) ծավալը: Մեկ ապրանքի արտահանման (ներմուծման) դեպքում ցուցանիշը հավասար կլինի 100%-ի. որքան ապրանքախմբերի թվաքանակը մեծ է, այնքան բևեռացման ցուցանիշը փոքր է:

Աղյուսակ 4. Արտահանման ապրանքային բևեռացումը (%)

Տարեթիվ	2007	2008	2009	2010	2011	2012
Ապրանքային բևեռացում	43.7	43.7	44.0	47.3	45.8	44.7

ԱՊՀ անդամ երկրներ արտահանվող ապրանքների ծավալներն ավելացել են 68.5 մլն դոլարով: Զգալիորեն ավելացել է ապրանքների արտահանումը Ռուսաստանի Դաշնություն՝ 56.8 մլն դոլարով (հիմնականում արտահանվել են ոգելից խմիչքներ, ադամանդ և միրգ) և Թուրքմենստան՝ 9.2 մլն դոլարով (հիմնականում արտահանվել են սիգարետ և սիգար, ոսկերչական իրեր): Ոչ ԱՊՀ երկրներ արտահանման ծավալները նվազել են 22.7 մլն դոլարով, ընդ որում, միայն Եվրոմիության երկրներ՝ 95.8 մլն դոլարով: Զգալիորեն ավելացել է ապրանքների արտահանումը Բելգիա՝ 56.7 մլն դոլարով (հիմնականում արտահանվել է ադամանդ, չզտված պղինձ), Շվեյցարիա՝ 37.7 մլն դոլարով (հիմնականում արտահանվել է պղնձի հանքաքար), Չինաստան՝ 15.0 մլն դոլարով (հիմնականում արտահանվել է պղնձի և թանկարժեք մետաղների հանքաքար), Կանադա՝ 14.6 մլն դոլար (հիմնականում արտահանվել է անմշակ ոսկի): Միևնույն ժամանակ, նվազել են արտահանման ծավալները Գերմանիա՝ 53.6 մլն դոլարով (հիմնականում արտահանվել է մոլիբդենի և պղնձի հանքաքար, երկաթամիահալվածք), Իսպանիա՝ 52.4 մլն դոլարով (հիմնականում արտահանվել է պղնձի հանքաքար և խտանյութ), Նիդեռլանդներ՝ 37.5 մլն դոլարով (հիմնականում արտահանվել է երկաթամիահալվածք, մոլիբդենի հանքաքար և խտանյութ), Բուլղարիա՝ 22.9 մլն դոլարով (հիմնականում արտահանվել է պղնձի հանքաքար):

Գծապատկեր 3. Արտահանման կառուցվածքն ըստ հիմնական երկրների (2012 թ.)



2012 թվականին, նախորդ տարվա համեմատ, աննշան աճել է արտահանման աշխարհագրական բևեռացման ցուցանիշը[19] և կազմել է 29.7 %՝ նախորդ տարվա 29.6 %-ի փոխարեն:

Աղյուսակ 5. Արտահանման աշխարհագրական բևեռացումը (%)

Տարեթիվ	2007	2008	2009	2006	2011	2012
Աշխարհագրական բևեռացում	30.7	32.7	29.6	30.7	29.6	29.7

[19] *Հաշվարկվում է հետևյալ բանաձևի օգնությամբ.*


$$K=\frac{\sqrt{\sum_{i=1}^{n} x_i^2}}{X} * 100$$ *որտեղ՝*

K-ն բևեռացման գործակիցն է,
X_i-ը՝ արտահանման (ներմուծման) ծավալն է i երկիր,
X –ը՝ Հայաստանի ամբողջ արտահանման (ներմուծման) ծավալը:

Ապրանքների ներմուծում

2012 թվականին ապրանքների ներմուծումը (դեբետ)[20] կազմել է 3738.0 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով 2.2%-ով: Արձանագրվել է հիմնական ներմուծման ծավալում մեծ տեսակարար կշիռ ունեցող գրեթե բոլոր ապրանքախմբերի աճ: Մասնավորապես՝ 94.3 մլն դոլարով կամ 11.5%-ով ավելացել են «Հանքահումքային մթերքներ», 35.4 մլն դոլարով կամ 6.3%-ով՝ «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ», 22.7 մլն դոլարով կամ 7.5%-ով՝ «Քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերական ճյուղերի արտադրանք», 17.0 մլն դոլարով կամ 7.0%-ով՝ «Բուսական ծագման արտադրանք», 7.8 մլն դոլարով կամ 2.3%-ով՝ «Պատրաստի սննդի արտադրանք», ապրանքախմբերի ներմուծման ծավալները: Հիմնականում նվազել են «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից իրեր»՝ 35.7 մլն դոլարով կամ 16.6%-ով, «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ»՝ 19.0 մլն դոլարով կամ 5.1%-ով, «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր»՝ 17.0 մլն դոլարով կամ 5.2%-ով ապրանքախմբերի ներմուծման ծավալները:

Գծապատկեր 4. Ներմուծման կառուցվածքն ըստ ապրանքախմբերի



2012 թվականին, 2011 թվականի համեմատ, ապրանքների ներմուծումն ավելացել է 2.8%-ով (ըստ ապրանքների առևտրի վիճակագրության), ընդ որում՝ ֆիզիկական ծավալներն ավելացել են 3.4%-ով, իսկ գները նվազել են 0.6%-ով: «Թանկարժեք քարեր և մետաղներ» ապրանքախմբի մասով գրանցված 16.6% նվազումը պայմանավորված է ֆիզիկական ծավալների 21.3% նվազմամբ, որն իր հերթին «Ադամանդե քարեր» ապրանքախմբի ներմուծման ծավալների նվազման հետևանք է, մինչդեռ այս ապրանքախմբում գները բարձրացել են 4.7%-ով: «Հանքահումքային մթերքներ և քիմիական արտադրության ապրանքներ» ապրանքախմբի 7.8% աճի 1.6%-ը պայմանավորված է գների, իսկ 6.2%-ը՝ ֆիզիկական ծավալների աճով: Այս աճը բացատրվում է տվյալ ապրանքախմբում մեծ կշիռ ունեցող «Բնական և հեղուկ գազի» ներմուծման ծավալների զգալի աճով:

[20] Ապրանքների ներմուծման դեբետ հոդվածը ներառում է ապրանքների ներմուծումը ՖՕԲ գներով, ըստ արտաքին առևտրի վիճակագրության, որին ավելացվում են վերամշակման, վերանորոգման նպատակով ներմուծված ապրանքները, ինչպես նաև տրանսպորտային կայաններում ծեռք բերված ապրանքները և ոչ մոնետար ոսկու ներմուծումը: Ներմուծումը ՖՕԲ գներով, ըստ արտաքին առևտրի վիճակագրության, ընդգրկում է մաքսային մարմինների կողմից հայտարարագրված ապրանքների ներմուծումը իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից, առանց արտերկրից ապրանքները ՀՀ մաքսային սահման հասցնելու համար կատարված ծախսերի:

Աղյուսակ 6. Ներմուծման փոփոխությունն ի հաշիվ գնի և ծավալի (%) [21]


Ապրանքախումբ	2011			2012		
	Աճ (+), նվազում (-)	Այդ թվում՝ փոփոխություններ՝ կապված		Աճ (+), նվազում (-)	Այդ թվում՝ փոփոխություններ՝ կապված	
		ֆիզիկական ծավալների հետ	գների հետ		ֆիզիկական ծավալների հետ	գների հետ
Ընդամենը	**10.6**	**8.7**	**1.9**	**2.8**	**3.4**	**-0.6**
Մանածագործական իրեր, կաշի և կոշկեղեն [13]	25.8	31.3	-5.5	-4.7	-0.8	-3.9
Թանկարժեք քարեր և մետաղներ	35.3	9.0	26.3	-16.6	-21.3	4.7
Հանքահումքային մթերքներ և քիմիական արտադրության ապրանքներ [14]	18.3	6.9	11.4	7.8	6.2	1.6
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատ. իրեր	-11.4	-2.3	-9.1	-5.2	5.9	-11.1
Գյուղատնտեսական մթերքներ [15]	16.0	8.0	8.0	3.8	2.7	1.1
Մեքենաներ, սարքեր և տրանսպորտային միջոցներ [16]	-2.2	12.1	-14.3	2.2	5.1	-2.9
Այլ ապրանքներ [17]	21.2	20.4	0.8	7.8	9.6	-1.8

Ի տարբերություն արտահանման, ներմուծվող ապրանքախմբերի ցրվածությունն ավելի մեծ է: Այդ է վկայում նաև արտահանման նկատմամբ ներմուծման համեմատաբար ցածր բևեռացման ցուցանիշը, ինչը նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 0.9 տոկոսային կետով և կազմել է 32.0%: Բևեռացման ցածր ցուցանիշը հետևանք է այն բանի, որ տարիների ընթացքում ավելանում է Հայաստան ապրանքներ ներմուծող գործընկեր երկրների թիվը՝ նվազեցնելով երկրի կախվածությունն այս կամ այն երկրի անբարենպաստ տնտեսական միջավայրի հնարավոր ազդեցություններից:

Աղյուսակ 7. Ներմուծման ապրանքային բևեռացումը (%) [18]

Տարեթիվ	2007	2008	2009	2010	2011	2012
Ապրանքային բևեռացում	31.0	30.5	32.0	31.7	31.1	32.0

Գծապատկեր 5. Ներմուծման կառուցվածքն ըստ ապրանքի ծագման հիմնական երկրների (2012 թ.)



[21] *Ներմուծման գները ՀՀ ԿԲ-ն հաշվարկել է ըստ «ապրանքի ծագման երկրի» հատկանիշով կազմված տվյալների:*

Ըստ «ներմուծվող ապրանքների ծագման երկրի» հատկանիշի՝ ԱՊՀ անդամ երկրներից ներմուծումը 2012 թվականին, 2011 թվականի համեմատ, ավելացել է 125.7 մլն դոլարով: Ներմուծումը ավելացել է Ռուսաստանի Դաշնությունից՝ 166.5 մլն դոլարով (հիմնականում ներմուծվել են բնական և հեղուկ գազ, ցորեն, նավթ ու նավթամթերք, չմշակված ալյումին), Բելառուսից՝ 4.0 մլն դոլարով (հիմնականում ներմուծվել են բեռնատար ավտոմեքենա, ռետինե անվադողեր, պատրաստի սննդի արտադրանք): ԱՊՀ մնացած երկրներից ներմուծվող ապրանքների ծավալների նվազում է արձանագրվել հատկապես Ուկրաինայից՝ 16.9 մլն դոլարով և Ղազախստանից՝ 16.4 մլն դոլարով: Ոչ ԱՊՀ երկրներից ներմուծումը նվազել է 9.8 մլն դոլարով, ընդ որում՝ Եվրոմիության անդամ երկրներից՝ 43.5 մլն դոլարով: Իսրայելից ներմուծվող ապրանքների ծավալներն ավելացել են ՝ 30.5 մլն դոլարով (հիմնականում ներմուծվել են նավթ և նավթամթերք, մրգահյութեր և ադամանդե քար), Ճապոնիայից՝ 26.4 մլն դոլարով (հիմնականում ներմուծվել են մարդատար և բեռնատար ավտոմեքենաներ), Գերմանիայից՝ 20.1 մլն դոլարով (հիմնականում ներմուծվել են դեղամիջոցներ, մարդատար և բեռնատար ավտոմեքենաներ, սիգարետ և սիգար), Բելգիայից՝ 9.2 մլն դոլարով (հիմնականում ներմուծվել է ադամանդե քար), Բրազիլիայից՝ 9.8 մլն դոլարով (հիմնականում ներմուծվել են շաքար, թռչնի և խոզի մսամթերք), Իսպանիայից՝ 8.2 մլն դոլարով (հիմնականում ներմուծվել են ոգելից խմիչքներ, երեսպատման սալիկներ, դեղամիջոցներ և բանջարեղենային պահածոներ): Միևնույն ժամանակ, նվազել է ներմուծումը Հունաստանից՝ 31.8 մլն դոլարով (հիմնականում ներմուծվել են ցիտրուսային պտուղներ, նավթ և նավթամթերք, ալյումինի արտադրանք, սիգարետ և սիգար), Թուրքիայից՝ 26.8 մլն դոլարով (հիմնականում ներմուծվել են փայտյա իրեր, մանածագործական իրեր և քիմիական արտադրության ապրանքներ), Ռումինիայից՝ 17.2 մլն դոլարով (հիմնականում ներմուծվել է նավթ և նավթամթերք), Բուլղարիայից՝ 15.7 մլն դոլարով (հիմնականում ներմուծվել է նավթ և նավթամթերք), Ֆրանսիայից՝ 14.9 մլն դոլարով (հիմնականում ներմուծվել են դեղամիջոց, օծանելիք, բուսական հյութ և խտանյութ)[22]:

2012 թվականին, «ըստ ապրանքի ծագման երկրի» հատկանիշի, ներմուծման աշխարհագրական բևեռացման ցուցանիշը նախորդ տարվա համեմատ մի փոքր աճել է և կազմել 29.9%: Համապատասխան ցուցանիշը, հաշվարկված առևտուր անող երկրի հատկանիշի տվյալների հիման վրա, նույնպես աճել է և կազմել է 25.7%:

Աղյուսակ 8. Ներմուծման աշխարհագրական բևեռացումն ըստ ապրանքի ծագման երկրի հատկանիշի (%)[18]

Տարեթիվ	2007	2008	2009	2010	2011	2012
Աշխարհագրական բևեռացում	27.9	26.3	29.1	28.5	27.6	29.9

Աղյուսակ 9. Ներմուծման աշխարհագրական բևեռացումն ըստ առևտուր անող երկրի հատկանիշի (%)[18]

Տարեթիվ	2007	2008	2009	2010	2011	2012
Աշխարհագրական բևեռացում	25.1	24.7	24.4	24.8	24.8	25.7

Հայաստանում ներմուծման միջին հակվածության ցուցանիշը՝ ներմուծում/ՀՆԱ հարաբերակցությունը, 2012 թվականին աճել է 2 տոկոսային կետով՝ պայմանավորված դոլարային արտահայտությամբ ընթացիկ գներով համախառն ներքին արդյունքի աճի տեմպերի նկատմամբ ապրանքների և ծառայությունների ներմուծման առաջանցիկ աճի տեմպերով: Ընդ որում, դոլարային արտահայտությամբ ընթացիկ գներով համախառն ներքին արդյունքի աճի տեմպը կազմել է 98.1%, իսկ դրամային արտահայտությամբ ընթացիկ գներով համախառն ներքին արդյունքի անվանական աճի տեմպը՝ 105.8%:

Արտահանման ու ներմուծման կառուցվածքի՝ ըստ ապրանքների օգտագործման ուղղությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, ի տարբերություն ներմուծման, Հայաստանյան արտահանումը շատ միատարր է, և արտահանման գրեթե 2/3-ը կազմում են արդյունաբերական պաշարները (հումք և նյութեր), իսկ պատրաստի արտադրանքի տեսակարար կշիռը շատ ցածր է (սպառողական ապրանքներ, մթերք և խմիչք, կապիտալ ապրանքներ): Ներմուծման շուրջ 42%-ը արտադրական գործընթացներին մասնակցող ապրանքներ են, մնացածը (ներառյալ՝ վառելիք և վառելանյութը) գրեթե ամբողջությամբ վերջնական սպառմանն ուղղված ապրանքներ են:

[22] Նշված երկրներից ապրանքների ներմուծումը հաշվարկված է ըստ «ծագման երկրի» հատկանիշի կազմված տվյալների:

Աղյուսակ 10. Արտահանման ու ներմուծման կառուցվածքն ըստ ապրանքախմբերի օգտագործման ուղղությունների[23]

Ապրանքախումբ	Ծավալ, մլն դոլար				Տեսակարար կշիռ,%			
	Արտահանում		Ներմուծում		Արտահանում		Ներմուծում	
	2011	2012	2011	2012	2011	2012	2011	2012
Սպառողական ապրանքներ	50.0	91.0	580.7	583.9	3.8	6.7	14.6	14.3
Մթերք և խմիչք	206.4	271.3	646.8	670.1	15.7	19.8	16.3	16.4
Արդյունաբերական պաշարներ	884.2	843.3	1176.8	1132.9	67.4	61.7	29.6	27.8
Վառելիք և վառելանյութ	106.8	109.8	793.8	886.1	8.1	8.0	20.0	21.7
Կապիտալ ապրանքներ	34.4	43.3	519.4	573.2	2.6	3.2	13.1	14.1
Տրանսպորտային սարքավորումներ, սարքեր և դրանց մասեր	29.7	8.9	256	229.8	2.3	0.7	6.4	5.6
Այլ ապրանքներ	0.0	0.0	0.3	0.2	0.0	0.0	0.0	0.0
Ընդամենը	1311.4	1367.7	3973.9	4076.3	100.0	100.0	100.0	100.0


Ապրանքների հաշվեկշիռ

Արտաքին ապրանքաշրջանառությունը 2012 թվականին կազմել է 5,357.1 մլն դոլար (նախորդ տարվա համեմատ ավելացել է 2.3%-ով): Ապրանքների հաշվեկշռի պակասուրդը կազմել է 2,118.9 մլն դոլար (նախորդ տարվա համեմատ ավելացել է 2.0%-ով): Առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի՝ ապրանքաշրջանառությունը կազմել է 5,005.0 մլն դոլար՝ (նախորդ տարվա համեմատ ավելացել է 3.7%-ով), իսկ ապրանքների հաշվեկշռի պակասուրդը, առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի, ավելացել է 2.6%-ով և կազմել է 2,112.8 մլն դոլար:

Ծառայությունների հաշվեկշիռ


«Ծառայություններ» հոդվածի պակասուրդը 2012 թվականին, 2011 թվականի համեմատ, ավելացել է 11.5%-ով՝ կազմելով 348.0 մլն դոլար (նախորդ տարի՝ 312.0 մլն դոլար): «Ծառայություններ» հոդվածի բացասական հաշվեկշռի աճը հիմնականում պայմանավորված է տրանսպորտային ծառայությունների բացասական մնացորդի 20.0 մլն դոլար ավելացմամբ և կապի ծառայությունների դրական հաշվեկշռի՝ 15.4 մլն դոլար նվազմամբ, ինչպես նաև «Ֆինանսական» ու «Բիզնեսի և կառավարման ոլորտում խորհրդատվական ծառայություններ» ծառայությունների հոդվածների բացասական մնացորդի աճով:

Գծապատկեր 6. Արտահանվող ծառայությունների տեսակարար կշիռները 2007 - 2012 թթ., %



[23] *Ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման ցուցանիշներում ընդգրկված չէ քաղաքացիների կողմից իրականացված առևտուրը: Քաղաքացիների կողմից կատարված առևտրում հատկապես մեծ տեսակարար կշիռ ունի մարդատար ավտոմեքենաների առևտուրը:*

Գծապատկեր 7. Ներմուծվող ծառայությունների տեսակարար կշիռները 2007 - 2012 թթ., %



2012 թվականին Հայաստանում շուրջ 2.8%-ով աճել է տնտեսության բացվածության ցուցանիշը[24] և կազմել է 73.8%: Ցուցանիշի նման աճը հիմնականում պայմանավորված է դոլարային արտահայտությամբ ՀՆԱ-ի համեմատ ապրանքների ու ծառայությունների արտաքին շրջանառության առաջանցիկ աճի տեմպերով, առավելապես՝ ներմուծման միջին հակվածության ցուցանիշի առաջանցիկ աճով:

Աղյուսակ 11. Տնտեսության բացվածության ցուցանիշը (%)

Տարեթիվ	2007	2008	2009	2010	2011	2012
Բացվածության ցուցանիշ	**58.3**	**55.8**	**58.1**	**66.4**	**71.0**	**73.8**
արտահանման միջին հակվածություն	19.3	15.1	15.5	20.9	23.7	24.5
ներմուծման միջին հակվածություն	39.0	40.7	42.6	45.5	47.3	49.3


Տնտեսության բացվածության ցուցանիշի առանձին բաղադրատարրերի՝ արտահանում/ՀՆԱ *(արտահանման միջին հակվածություն)* և ներմուծում/ՀՆԱ *(ներմուծման միջին հակվածություն)* ցուցանիշների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հասկանալու, թե ցուցանիշի ժամանակագրական շարքի փոփոխությունը կոնկրետ որ բաղադրատարրով է պայմանավորված: Հարկ է նշել, որ Հայաստանում զգալի փոքր են ինչպես արտահանում/ՀՆԱ, այնպես էլ ներմուծում/ՀՆԱ ցուցանիշները:

Եկամուտների հաշվեկշիռ

2012 թվականին «Եկամուտներ» հոդվածի հավելուրդը կազմել է 628.5 մլն դոլար (նախորդ տարվա համեմատ ավելացել է 70.0 մլն դոլարով): Աճի պատճառը արտերկրում գտնվող սեզոնային աշխատողների եկամուտների՝ 71.5 մլն դոլարով ավելացումն է: «Եկամուտներ» հոդվածի՝ դեպի դուրս փոխանցումների մեջ, ինչպես վերջին տարիներին, 2012 թվականին ևս զգալի են եղել ուղղակի ներդրմամբ կազմակերպություններում ոչ ռեզիդենտների կողմից վերաներդրված եկամուտները (260.8 մլն դոլար): Ուղղակի ներդրումներից եկամուտների արտահոսքի մեջ 2012 թվականին, ի տարբերություն նախորդ 2 տարիների, շահաբաժինները նվազել են 69.0 մլն դոլարով, ինչպես նաև աճել են միջֆիրմային վարկերի դիմաց վճարված տոկոսավճարները՝ անցյալ տարվա 22.0 մլն դոլարի փոխարեն կազմել են 27.5 մլն դոլար: ՀՀ առևտրային բանկերի ներգրավված պարտավորությունների աճին զուգընթաց, ավելացել են նաև դրանց դիմաց վճարված տոկոսավճարները՝ նախորդ տարվա 76.7 մլն դոլարից հասնելով 105.0 մլն դոլարի:

[24] Բացվածության ցուցանիշը = (ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման ծավալների գումար (արտաքին առևտրի շրջանառություն)/ ՀՆԱ x 100):

Գծապատկեր 8. Եկամուտների հաշվեկշռի դինամիկան



Ընթացիկ պետական տրանսֆերտներ

Պետական ընթացիկ տրանսֆերտների ներհոսքը 2012 թվականին կազմել է 97.9 մլն դոլար (նախորդ տարվա համեմատ նվազել է 40.5%-ով), իսկ արտահոսքը մնացել է գրեթե անփոփոխ՝ 4 մլն դոլարի չափով: Այսպիսով, պետական զուտ ընթացիկ տրանսֆերտները 2012 թվականին կազմել են 93.9 մլն դոլար (անցյալ տարի՝ 160.3 մլն դոլար), ընդ որում՝ նվազում է արձանագրվել բոլոր ուղղություններով՝ թե՛ ֆինանսական (նվազել է 46.0 մլն դոլարով), թե՛ տեխնիկական (նվազել է 15.5 մլն դոլարով) և թե՛ մարդասիրական (նվազել է 5.1 մլն դոլարով) օգնության:

Դրամական փոխանցումներ

Ըստ վճարային հաշվեկշռի մեթոդաբանության՝ դրամական փոխանցումներն իրենցից ներկայացնում են աշխատողների զուտ վարձատրությունը և տնային տնտեսությունների միջև ընթացիկ և կապիտալ տրանսֆերտները՝ դրամական և բնեղեն արտահայտությամբ: 2012 թվականին դրամական փոխանցումները կազմել են 1,907.6 մլն դոլար (նախորդ տարվա համեմատությամբ ավելացել են 8.4%-ով): Սեզոնային աշխատողների զուտ աշխատավարձը[25] նախորդ տարվա համեմատ ավելացել է 58.2 դոլարով և կազմել 979.2 մլն դոլար: Տնային տնտեսությունների կողմից ստացված ընթացիկ տրանսֆերտները կազմել են 843.1 մլն դոլար (նախորդ տարվա համեմատ ավելացել են 53.4 մլն դոլարով): 2012 թվականին տնային տնտեսությունների կողմից ստացված կապիտալ տրանսֆերտները, ավելանալով 35.6 մլն դոլարով, կազմել են 85.4 մլն դոլար՝ նախորդ տարվա 49.8 մլն դոլարի փոխարեն:

Աղյուսակ 12. Դրամական փոխանցումների ներհոսքի բաշխվածքն ըստ վճարային հաշվեկշռի հոդվածների

մլն ԱՄՆ դոլար

	2010 թ. հունվար-դեկտեմբեր	2011 թ. հունվար-դեկտեմբեր	2012 թ. հունվար-դեկտեմբեր
Դրամական փոխանցումներ ՀՀ	**1454.3**	**1760.3**	**1907.6**
Աշխատողների զուտ աշխատավարձ	692.3	921.0	979.2
Աշխատողների աշխատավարձ [26]	900.0	1186.0	1261.0
Ընթացիկ տրանսֆերտներ	681.2	789.6	843.1
Կապիտալ տրանսֆերտներ	80.8	49.8	85.4

[25] Առանց եկամտահարկի, տրանսպորտային և արտերկրում կատարված ծախսերի:
[26] Ներառված չեն վճարային հաշվեկշռի համար կատարված այլ լրահաշվարկները, մասնավորապես՝ ՀՀ տարածքում տեղաբաշխված միջատարածքում (անկլավ) ռեզիդենտ աշխատողների ստացած աշխատավարձերը:

2012 թվականին ՀՀ բանկային համակարգով ոչ առևտրային նպատակով իրականացված փոխանցումների ներհոսքը կազմել է 1687.3 մլն դոլար, իսկ արտահոսքը՝ 292.2 մլն դոլար (նախորդ տարվա համեմատ ներհոսքն ավելացել է 9.1%-ով, իսկ արտահոսքը՝ 10.4%-ով): Փոխանցումների ինչպես ներհոսքում, այնպես էլ արտահոսքում զգալի կշիռ ունեն Ռուսաստանն ու ԱՄՆ-ն. ներհոսքում՝ համապատասխանաբար 85.6% և 3.9%, իսկ արտահոսքում՝ 56.3% և 8.9%:

2012 թվականին ՀՀ բանկային համակարգով ոչ առևտրային նպատակով իրականացված փոխանցումների ներհոսքում մեկ փոխանցման միջին գումարը կազմել է 598 դոլար (նախորդ տարի՝ 648 դոլար), արտահոսքում՝ 1494 դոլար (նախորդ տարի՝ 1574 դոլար): Ըստ որում, ոչ առևտրային նպատակով ստացված փոխանցումների քանակը նախորդ տարվա համեմատ ավելացել է 18%-ով, իսկ արտահոսքի քանակը՝ 16%-ով:

Աղյուսակ 13. ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց կողմից ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումները 2010-2012 թվականներին, ըստ երկրների (հազ. դոլար)

Երկիր	2010			2011			2012		
	Մուտք	Ելք	Զուտ մուտք	Մուտք	Ելք	Զուտ մուտք	Մուտք	Ելք	Զուտ մուտք
Ռուսաստան	1062266	116950	945316	1295163	141352	1153811	1444955	164588	1280367
ԱՄՆ	67789	24554	43235	74380	27331	47049	66554	25936	40617
Ուկրաինա	19290	13433	5857	25076	16202	8874	19094	15397	3698
Ղազախստան	18434	1021	17414	20611	1769	18842	22532	1575	20957
Գերմանիա	10586	5346	5240	10695	6905	3790	11827	7962	3866
Իսպանիա	7232	2286	4946	7674	3052	4622	6315	3842	2473
Ֆրանսիա	9443	3731	5712	10874	7668	3206	12089	5292	6797
ԱՄԷ	3581	6904	-3323	3387	7660	-4273	7596	7309	287
Չինաստան	789	5970	-5181	529	8748	-8219	2967	10646	-7679
Թուրքիա	1182	6246	-5064	2136	4981	-2845	1615	4209	-2593
Այլ երկրներ	93144	35323	57821	96434	38934	57499	91717	45493	46224
Ընդամենը	***1293736***	***221763***	***1071973***	***1546959***	***264602***	***1282357***	***1687263***	***292249***	***1395014***

Աղյուսակ 14. Մասնավոր հատվածի ընթացիկ տրանսֆերտների և սեզոնային աշխատողների աշխատավարձի (զուտ) տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (%)


Երկիր	2008	2009	2010	2011	2012
Հայաստան	15.6	14.8	13.5	15.9	17.6

Ինչպես և նախկինում, 2012 թվականին ևս «Ապրանքներ» և «Ծառայություններ» հոդվածների բացասական ճեղքվածքի ֆինանսավորման հիմնական աղբյուրները եղել են ՀՀ վճարային հաշվեկշռի «Եկամուտներ» և «Ընթացիկ տրանսֆերտներ» հոդվածները: Ընդ որում, նշված հոդվածների միջոցով ֆինանսավորվել է ապրանքների ու ծառայությունների հաշվեկշռի բացասական մնացորդի 54.8%-ը (նախորդ տարի՝ 53.6%-ը):

ԿԱՊԻՏԱԼԻ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎ

2012 թվականին կապիտալի և ֆինանսական հաշիվը կազմել է 949.9 մլն դոլար (նախորդ տարի՝ 1137.5 մլն դոլար): Ֆինանսական հաշիվը նախորդ տարվա համեմատ նվազել է և կազմել է 844.4 (նախորդ տարի՝ 1041.3): Կապիտալի և ֆինանսական հաշիվը (առանց պահուստների) գրեթե ծածկել է ընթացիկ հաշվի պակասուրդը, իսկ Կենտրոնական բանկի պահուստները նվազել են 48.3 մլն դոլարով:

Գծապատկեր 9. ՀՀ վճարային հաշվեկշռի կապիտալի ու ֆինանսական հաշվի բաղադրատարրերը 2008 – 2012 թվականներին



ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՇԻՎ

Կապիտալի հաշվի հիմնական բաղադրատարր հանդիսացող կապիտալ տրանսֆերտները տարվա ընթացքում կազմել են 105.4 մլն դոլար: Պետական տրանսֆերտների զուտ ներհոսքը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 29.9 մլն դոլարով (47.0 %-ով), միևնույն ժամանակ, նախորդ տարվա համեմատությամբ, 39.1 մլն դոլարով (2.2 անգամ) ավելացել են մասնավոր կապիտալ տրանսֆերտները, ինչի արդյունքում ընդհանուր կապիտալ տրանսֆերտների զուտ ներհոսքը նախորդ տարվա համեմատ ավելացել է 9.6 %-ով կամ 9.2 մլն դոլարով:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎ

Որպես վճարային հաշվեկշռի ֆինանսական հաշվի՝ 2012 թվականին դրսևորված առանձնահատկություն կարելի է նշել նախորդ տարվա համեմատ ուղղակի ներդրումների ծավալների որոշակի աճը, ինչպես նաև այլ ներդրումների և պահուստային ակտիվների նվազումը՝ նշված հոսքերը տարվա ընթացքում համապատասխանաբար կազմել են 473.6, 321.7 և 48.3 մլն դոլար:

Աղյուսակ 15. Ֆինանսական հաշվի կառուցվածքը (ծավալը՝ մլն դոլար)


Ցուցանիշներ	2009	2010	2011	2012
Ուղղակի ներդրումներ (զուտ)	724.8	561.8	447.5	473.6
Պորտֆելային ներդրումներ (զուտ)	-3.9	10.7	-10.4	0.8
Այլ ներդրումներ (զուտ)	1140	564	737.1	321.7
Պահուստային ակտիվների փոփոխություն	-600.3	111.5	-132.9	48.3
Ընդամենը	**1260.6**	**1248.0**	**1041.3**	**844.4**

Ուղղակի ներդրումներ

2012 թվականին ուղղակի ներդրումների զուտ ներհոսքը նախորդ տարվա համեմատ ավելացել է 26.1 մլն դոլարով (5.8 %-ով) և կազմել 473.6 մլն դոլար: Արտերկրում ուղղակի ներդրումների զուտ ծավալները կազմել են 15.8 մլն դոլար, միևնույն ժամանակ Հայաստանում կատարվել են 489.4 մլն դոլարի

զուտ ուղղակի ներդրումներ: Ոչ ռեզիդենտների կողմից ՀՀ կազմակերպությունների բաժնետիրական կապիտալում կատարված զուտ ուղղակի ներդրումները կազմել են 328.9 մլն դոլար (նախորդ տարի՝ 159.0 մլն դոլար), 260.8 մլն դոլարը նախկինում կատարված ուղղակի ներդրումների արդյունքում կազմակերպություններում վերաներդրված շահույթն է (նախորդ տարի՝ 237.2 մլն դոլար): Միևնույն ժամանակ, 100.3 մլն դոլարով նվազել են միջֆիրմային վարկերը (նախորդ տարվա աճը՝ 129.3 մլն դոլար): 2012 թվականին բանկային համակարգում ուղղակի ներդրումները ավելացել են 71.4 մլն դոլարով (նախորդ տարի՝ 81.8 մլն դոլարով):

Գծապատկեր 10. Զուտ ուղղակի ներդրումները 2008 – 2012 թթ.



2012 թ. ընթացքում ուղղակի ներդրումներն իրական հատվածում իրականացվել են հիմնականում Ֆրանսիայի և Ռուսաստանի ներդրողների կողմից (ուղղակի ներդրումների համապատասխանաբար 40.6 %-ը և 15.6 %-ը): Ընդ որում, Ֆրանսիան ուղղակի ներդրումներ է իրականացրել հեռահաղորդակցության և խմիչքի արտադրության ճյուղերում (համապատասխանաբար 91.5 %-ը և 8.5 %-ը), իսկ Ռուսաստանն ուղղակի ներդրումներն իրականացրել է հեռահաղորդակցության, էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման, ցամաքային տրանսպորտի գործունեության և խողովակաշարերով փոխադրման ոլորտներում (համապատասխանաբար 46.4 %-ը, 28.9 %-ը և 16.6 %-ը)[27]:

Աղյուսակ 16. Ուղղակի ներդրումներ (հաշվետու երկրում) / ՀՆԱ (%)

Երկիր	**2008**	**2009**	**2010**	**2011**	**2012**
Ադրբեջան	8.2	6.5	6.3	7.1	7.9
Էստոնիա	7.9	9.8	10.9	2.0	7.4
Լատվիա	4.3	-0.2	1.8	5.3	3.2
Լիտվա	4.0	0.1	2.4	3.4	1.6
Հայաստան	8.0	9.0	6.2	6.5	4.9
Ղազախստան	10.7	11.5	7.8	7.4	7.0
Ղրղզստան	7.3	4.0	9.1	11.2	5.7
Մոլդովա	11.8	2.7	3.4	4.0	2.2
Ռուսաստանի Դաշնություն	4.5	3.0	2.8	2.9	2.6
Վրաստան	12.4	6.1	7.5	7.5	5.0
Ուկրաինա	6.1	4.1	4.8	4.4	4.4
Միջին	**7.7**	**5.1**	**5.7**	**5.6**	**4.7**

[27] Տվյալների աղբյուրը ՀՀ ԱՎԾ-ի՝ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2013 թվականի հունվար-փետրվարին» հրապարակման «Օտարերկրյա ուղղակի ներդրումները 2012 թվականի հունվար-դեկտեմբերին» բաժինն է: Տվյալները ներկայացնում են միայն ուղղակի ներդրումների ներհոսքը և չեն ներառում ինչպես արտահոսքի, այնպես էլ այլ ճշտումների ցուցանիշները:

Նախկին ԽՍՀՄ գրեթե բոլոր հանրապետություններում ուղղակի ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշը 2012 թվականին, 2011 թ. համեմատությամբ, բավականին նվազել է: Ուղղակի ներդրումների զուտ ներհոսքն էապես ավելացել է Էստոնիայում (մոտ 3.7 անգամ), Ադրբեջանում (18%-ով) և Ուկրաինայում (8.7%-ով), իսկ Ղազախստանում ուղղակի ներդրումների զուտ ներհոսքը նախորդ տարվա համեմատ մնացել է գրեթե անփոփոխ: Նախորդ տարվա համեմատությամբ ուղղակի ներդրումների ներհոսքը նվազել է Լիտվայում՝ 53.4%-ով, Ղրղզստանում՝ 46.4 %-ով, Մոլդովայում՝ 43.3 %-ով:

Պորտֆելային ներդրումներ

2012 թվականին գրանցվել է պորտֆելային ներդրումների 0.8 մլն դոլար զուտ ներհոսք՝ նախորդ տարվա 10.4 մլն դոլար զուտ արտահոսքի փոխարեն: Այս փոփոխությունը հիմնականում պայմանավորված է 2011 թ. պարտավորությունների՝ 10.8 մլն դոլարով նվազման փոխարեն 2012 թվականին արձանագրած 2.0 մլն դոլար աճով:

Այլ ներդրումներ

2012 թվականին «Այլ ներդրումների» զուտ ներհոսքը կազմել է 321.7 մլն դոլար (2011 թվականին՝ 737.1 մլն դոլար): Արտաքին աշխարհի նկատմամբ ակտիվների աճը 2012 թվականին կազմել է 61.6 մլն դոլար (նախորդ տարի՝ 88.1 մլն դոլար): Աճը պայմանավորված է կանխիկ դրամական միջոցների և ավանդների մոտ 106 մլն դոլար աճով: Միևնույն ժամանակ, պարտավորություններն արտաքին աշխարհի նկատմամբ 2012 թվականին ավելացել են 383.3 մլն դոլարով, մինչդեռ 2011 թվականին աճը կազմել էր 825.3 մլն դոլար:

Պետական կառավարման մարմիններ: 2012 թվականին ՀՀ պետական կառավարման մարմինների արտաքին պարտավորություններն ավելացել են 233.3 մլն դոլարով (նախորդ տարի՝ 214.4 մլն դոլարով):

Ընդ որում, պետական հատվածի վարկերի ներհոսքը տարվա ընթացքում կազմել է 295.3[28] մլն դոլար (նախորդ տարի՝ 238.5 մլն դոլար): Ներհոսքի 48.6%-ը (նախորդ տարի՝ 38.0%-ը) կազմել են Համաշխարհային բանկի և Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի, 18.1%-ը (նախորդ տարի՝ 15.2%-ը)՝ Եվրոպական միության, 13.6%-ը (նախորդ տարի՝ 24.7%-ը)՝ Արժույթի միջազգային հիմնադրամի տրամադրած վարկերը:

Տարվա ընթացքում պետական հատվածի վարկերի հիմնական գումարի մարումները կազմել են 68.9 մլն դոլար (նախորդ տարի՝ 28.1 մլն դոլար), իսկ վճարված տոկոսագումարները՝ 45.9 մլն դոլար (նախորդ տարի՝ 41.2 մլն դոլար):

Բանկեր: Առևտրային բանկերի զուտ ներդրումային դիրքը[29] 2012 թվականի գործառնությունների հաշվին վատթարացել է 380.1 մլն դոլարով: Ընդ որում, արտաքին ակտիվները գրեթե չեն փոխվել և ավելացել են ընդամենը 2.2 մլն դոլարով, իսկ պարտավորություններն ավելացել են 382.3 մլն դոլարով: Ակտիվներում առևտրային բանկերի՝ ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի 47.3 մլն դոլար նվազումը փոխարինվել է ՀՀ բանկերի՝ արտասահմանյան բանկերում ունեցած ավանդների 50.6 մլն դոլար աճով: Միևնույն ժամանակ նշենք, որ ակտիվային ավանդների աճը պայմանավորված է բացառապես կարճաժամկետ ավանդների աճով:


Պարտավորությունների աճը պայմանավորված է ՀՀ առևտրային բանկերում ոչ ռեզիդենտների ուղղակի ներդրումների ավելացմամբ՝ 71.4 մլն դոլարով, ոչ ռեզիդենտներից 302.6 մլն դոլարի չափով վարկերի ներգրավմամբ, միևնույն ժամանակ 14.7 մլն դոլարով նվազել են ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները: Հարկ է նշել նաև, որ ներգրավված վարկերի աճը լիովին պայմանավորված է երկարաժամկետ վարկերի աճով, իսկ կարճաժամկետ վարկերը 16.6 մլն դոլարով նվազել են:

---

[28] Արտաքին պետական և պետական երաշխիքով վարկերի վիճակագրության հավաքագրման պատասխանատուն ՀՀ ֆինանսների (ՖՆ) նախարարությունն է: Ընդ որում, այս ցուցանիշը հաշվարկվում է հաշվապահական հաշվառման կանխիկ սկզբունքով և ներառում է միայն արտաքին աշխարհից ներգրավված վարկերի փաստացի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը:

[29] Ըստ վճարային հաշվեկշռի մեթոդաբանության: Ի տարբերություն դրամավարկային վիճակագրության, վճարային հաշվեկշռի կազմման մեթոդաբանության համաձայն, առևտրային բանկերի արտաքին ակտիվներ և պարտավորություններ ձևավորող գործառնությունների փոփոխությունը հաշվարկվում է առանց վերագնահատման և ներառում է ոչ փոխարկելի արտարժույթով գործառնությունները: Ընդ որում, վճարային հաշվեկշռում բանկային համակարգի մեջ ներառվում են նաև վարկային կազմակերպությունների արտաքին ակտիվների ու պարտավորությունների հետ կապված գործառնությունները:

Գծապատկեր 11. Առևտրային բանկերի զուտ ներդրումային դիրքը 2008-2012 թվականներին[30]



Մասնավոր հատված (առանց առևտրային բանկերի): Տարվա ընթացքում մասնավոր հատվածի զուտ այլ ներդրումներն ավելացել են 190.6 մլն դոլարով, ընդ որում՝ ակտիվներն ավելացել են մոտ 55.4 մլն դոլարով, իսկ պարտավորությունները կրճատվել են 135.3 մլն դոլարով: Ակտիվներում կանխիկ արտարժույթի և ավանդների զուտ ծավալը 2012 թվականին ավելացել է 53.7 մլն դոլարով:

Պարտավորությունների կտրուկ նվազումը պայմանավորված է մասնավոր ընկերությունների կողմից արտերկրից ներգրավված վարկերի մարումներով: Այսպես՝ 2012 թվականին մասնավոր հատվածի կողմից ներգրավվել են 77.1 մլն դոլարի երկարաժամկետ և 33 մլն դոլարի կարճաժամկետ վարկեր: Միևնույն ժամանակ, մարվել են 216.4 մլն դոլարի երկարաժամկետ և 104.5 մլն դոլարի կարճաժամկետ պարտավորություններ: Պարտավորությունների մասով աճել է առևտրային վարկերի միջոցով ներգրավումը՝ նախորդ տարվա համեմատ շուրջ 35 մլն դոլարով, և կազմել են 61.9 մլն դոլար: Նշված ցուցանիշը կազմել է ապրանքների ներմուծման 1.7 %-ը (նախորդ տարի՝ 0.7 %-ը):

Կենտրոնական բանկ: Կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունները 2012 թվականին նվազել են 24.9 մլն դոլարով՝ նախորդ տարվա 58.6 մլն դոլար աճի փոխարեն: 2012 թվականին իրականացվել են 124.6 մլն դոլարի վճարումներ (տոկոսավճարներ և հիմնական գումարի մարումներ), և ստացվել են 90.8 մլն դոլարի նոր բաշխումներ[19], այդ թվում ԱՄՀ՝ 61.1 մլն դոլար, ինչպես նաև այլ վարկերի գծով՝ 29.7 մլն դոլար:

2012 թվականին ՀՀ կենտրոնական բանկի համախառն արտաքին պահուստները նվազել են 48.3 մլն դոլարով և տարվա վերջի դրությամբ կազմել 1799.4 մլն դոլար: Տարվա ընթացքում Կենտրոնական բանկի կողմից արտարժույթի շուկայում իրականացված արտարժույթի զուտ վաճառքը կազմել է 65.4 մլն դոլար:


Կենտրոնական բանկի համախառն արտաքին պահուստների համարժեքությունը գնահատող ցուցանիշները ունեցել են հետևյալ դինամիկան:

Ներմուծման ծածկույթի ցուցանիշը 2012 թվականի համար կազմել է 4.4 ամիս՝ նախորդ տարվա 4.8 ամիս ցուցանիշի փոխարեն: Նվազման հիմնական պատճառը նախորդ տարվա վերջի համեմատ պահուստային ակտիվների մոտ 7%-ով նվազումն է: Նշենք, որ միջազգային պրակտիկայում զարգացող երկրների համար որպես ներմուծման ծածկույթի ցուցանիշի ընդունելի սահման է համարվում 3 ամսվա նշագիծը, որը հիմնականում պետք է պահպանվի հատկապես այն երկրներում, որոնց մուտքը միջազգային կապիտալի շուկաներ սահմանափակ է:

---

[30] *Առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների զուտ ներդրումային դիրքը ժամանակահատվածի վերջի դրությամբ ներառում է նաև վերագնահատումը:*

Գծապատկեր 12. Համախառն արտաքին պահուստները և ներմուծման ծածկույթը 2008-2012 թվականներին



Համախառն արտաքին պահուստների բավարարության գնահատման մյուս կարևորագույն ցուցանիշը համախառն արտաքին պահուստներ/դրամային զանգված ցուցանիշն է, որը ցույց է տալիս, թե ինչպիսին է ամբողջ դրամային զանգվածն արտարժույթով փոխարկելու հնարավորությունը՝ կապիտալի հնարավոր արտահոսքի պայմաններում: Նշված ցուցանիշը 2012 թվականին կազմել է 98% (նախորդ տարի՝ 113%): Ընդունելի նշագիծ է համարվում դրամային զանգվածում պահուստների 5-20% մակարդակը:

Աղյուսակ 17. Համախառն արտաքին պահուստներ/դրամային զանգված (%)

Ցուցանիշ	2008	2009	2010	2011	2012
Համախառն արտաքին պահուստներ / դրամային զանգված	81	168	130	113	98

Միջազգային ներդրումային դիրք

2012 թվականի վերջի դրությամբ Հայաստանի զուտ ներդրումային դիրքը, ինչպես նախորդ տարիներին, բացասական է և կազմել է 6908.9 մլն դոլար՝ նախորդ տարվա վերջի համեմատ աճելով 190.4 մլն դոլարով: Ընդ որում, ակտիվներն ավելացել են 52.2 մլն դոլարով, իսկ պարտավորությունները՝ 242.6 մլն դոլարով: Ըստ ներդրումային դիրքի՝ Կառավարության կողմից ներգրավված վարկերի գծով պարտավորությունները 2012 թվականի վերջի դրությամբ կազմել են 3157.5 մլն դոլար, իսկ ԿԲ վարկերի գծով պարտավորությունները՝ 596.1 մլն դոլար: 2012 թվականին միջազգային ներդրումային դիրքում առևտրային բանկերի կողմից ներգրավված վարկերն ավելացել են մոտ 305.8 մլն դոլարով: Ընդհանուր պարտավորությունների շուրջ 3889.5 մլն դոլարը (33.0%) կազմել են պետության պարտավորությունները, իսկ մնացած 7906.4 մլն դոլարը (67.0 %)՝ մասնավոր հատվածինը (ներառյալ՝ ավանդային կազմակերպությունները), որի մեջ զգալի են ուղղակի ներդրումները (64.3 %): ՀՀ մասնավոր հատվածի կողմից տնօրինվող կանխիկ արտարժութային միջոցները և ավանդները, ըստ ՀՀ միջազգային ներդրումային դիրքի, կազմել են 2100.1 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ ավելացել են 102.7 մլն դոլարով:


Աղյուսակ 18. Հայաստանի միջազգային ներդրումային դիրքը 2011-2012 թվականներին (մլն դոլար)

Ցուցանիշ	*Ներդրումային դիրքը 2011 թ. վերջին*	*Ներդրումային դիրքը 2012 թ. վերջին*
Զուտ ներդրումային դիրքը	**- 6718.6**	**- 6908.9**
Ակտիվներ	**4834.8**	**4887.0**
Ուղղակի ներդրումներ արտերկրում	153.7	169.2
Պորտֆելային ներդրումներ	12.9	14.0
Այլ ներդրումներ	2735.8	2904.5
Առևտրային վարկ	68.4	68.6
Վարկեր	249.9	194.9

Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	2338.1	2559.1
Այլ ակտիվներ	79.5	81.9
Պահուստային ակտիվներ	1932.5	1799.4
Պարտավորություններ	**11553.4**	**11796.0**
Ուղղակի ներդրումներ ՀՀ-ում	5045.7	5086.1
Պորտֆելային ներդրումներ	17.8	34.3
Այլ ներդրումներ	6489.9	6675.5
Առևտրային վարկ	101.9	57.8
Վարկեր	5531.3	5743.1
Դրամավարկային կարգավորման մարմիններ	618.7	596.1
Պետական կառավարման մարմիններ	2954.9	3157.5
Բանկեր	942.8	1248.6
Այլ հատվածներ	1014.9	740.9
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	644.9	627.4
Այլ պարտավորություններ	211.8	247.2

Եթե դիտարկենք տնտեսության հատվածներն առանձին, ապա կարելի է տեսնել, որ դրական ներդրումային դիրք ունի միայն դրամավարկային կարգավորման մարմինը, իսկ բանկային, պետական և մասնավոր հատվածներն ունեն բացասական ներդրումային դիրք:

Գծապատկեր 13. Տնտեսության հատվածների զուտ ներդրումային դիրքերը 2008-2012 թթ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏՔԸ 2012 ԹՎԱԿԱՆԻՆ

Վիճակագրության վարչություն


Հաշվի առնելով ճգնաժամային տարիների փորձը՝ ներկայումս ՀՀ-ում ավելի ու ավելի է կարևորվում պարտքի արդյունավետ կառավարումը: Պարտքի արդյունավետ կառավարման խնդիրները եղել են ինչպես Կառավարության, այնպես էլ հասարակության ուշադրության կենտրոնում: Նշենք նաև, որ 2012 թվականին հաստատվել է ՀՀ կառավարության՝ պարտքի կառավարման 2013-2015 թթ. ռազմավարական ծրագիրը: Վերջինիս շրջանակներում ՀՀ կառավարությունը պետական պարտքի կառավարման գործընթացում շարունակելու է հետևել պարտքի կառավարման թափանցիկության, գործողությունների հրապարակայնության, ներդրողների վստահության ամրապնդման և հաշվետվողականության սկզբունքներին: Փաստաթղթում քննարկվել են արտաքին պարտքի կայունության խնդիրները, ինչպես նաև արտաքին պարտքի կառավարման ռազմավարությունը 2013-2015 թվականներին[31]:

Անդրադառնալով արտաքին պարտքի բեռը գնահատող ցուցանիշներին՝ նշենք, որ 2012 թվականին և՛ արտաքին պարտք/ապրանքների և ծառայությունների արտահանում ցուցանիշը, և՛ արտաքին պարտք/ՀՆԱ ցուցանիշը նախորդ տարվա համեմատ ունեցել են աճի միտում: Չնայած դրան, ըստ միջազգային կառույցների և ՀՀ կառավարության գնահատականների, առաջիկա տարիներին ՀՀ արտաքին պարտքի, հատկապես պետական պարտքի սպասարկման խնդիրներ չեն առաջանա: 2012 թվականին, ի տարբերություն նախորդ 2 տարիների, արտաքին պարտքի աճի մեծ մասը բաժին է ընկնում պետական հատվածի պարտքին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ 2012 ԹՎԱԿԱՆԻՆ

Հայաստանի արտաքին պարտքը 2012 թվականի վերջի դրությամբ կազմել է 7630.4 մլն ԱՄՆ դոլար[32], որից 3889.5 մլն ԱՄՆ դոլարը Կառավարության և Կենտրոնական բանկի արտաքին պարտքն է, 1929.0 մլն դոլարը՝ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների պարտքը (ներառյալ՝ միջֆիրմային վարկերը), 1811.8 մլն դոլարը՝ ոչ բանկ մասնավոր հատվածի պարտքը (ներառյալ՝ միջֆիրմային վարկերը):

Գծապատկեր 1. ՀՀ արտաքին պարտքի կառուցվածքը 2010-2012 թվականներին



2012 թվականի վերջի դրությամբ պետական պարտքի կշիռը ընդհանուր պարտքի մեջ նախորդ տարվա համեմատ մնացել է գրեթե անփոփոխ և կազմել 51.0%, իսկ մասնավորինը՝ 49.0%:

---

[31] Փաստաթուղթը տե՛ս https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2012/05/qax21-19_1.pdf:


[32] 2011 թվականից արտաքին պարտքի վերաբերյալ տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԿԲ: Արտաքին պարտքը կազմվել է ԱՄՀ «Արտաքին պարտքի վիճակագրության հավաքագրողների» ձեռնարկում սահմանված մեթոդաբանությամբ, համաձայն որի՝ արտաքին պարտքն ընդգրկում է տնտեսության հատվածների արտաքին բոլոր պարտավորությունները, բացառությամբ ուղղակի ներդրումների (սակայն ուղղակի ներդրումների միջֆիրմային վարկերը ներառվում են արտաքին պարտքի մեջ): Ընդ որում, արտաքին պարտքի ցուցանիշները հաշվառված են հաշվապահական հաշվառման կուտակման սկզբունքով:

ՀՀ կառավարության և Կենտրոնական բանկի արտաքին պարտքը 2012 թվականին, նախորդ տարվա համեմատ, ավելացել է 179.7 մլն դոլարով և տարեվերջին կազմել 3889.5 մլն դոլար, ինչը գրեթե ամբողջությամբ ձևավորվել է երկարաժամկետ արտաքին վարկերի հաշվին:

ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների արտաքին պարտքը (հիմնականում բաղկացած է ոչ ռեզիդենտներից ներգրավված վարկերից՝ 1248.6 մլն դոլար և ավանդներից՝ 627.4 մլն դոլար) 2012 թվականին ավելացել է 314.8 մլն դոլարով և տարեվերջին կազմել 1929.0 մլն դոլար: Միջազգային կազմակերպություններից ներգրավված վարկերը կազմել են մոտ 34.3%: ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ներգրավված երկարաժամկետ վարկերը նախորդ տարվա համեմատ ավելացել են 302.4 մլն դոլարով, մասնավորապես՝ տարվա ընթացքում ներգրավվել են 617 մլն դոլար երկարաժամկետ վարկային միջոցներ, իսկ նախկինում ձեռք բերված երկարաժամկետ վարկերի դիմաց կատարվել են 268.3 մլն դոլար հիմնական գումարի մարումներ: 2012 թվականի վերջի դրությամբ ներգրավված վարկերի միջին կշռված տոկոսադրույքը 2011 թվականի համեմատ ավելացել է և կազմել 6.5% (2011 թվականի վերջին՝ 5.6%), իսկ միջին ժամկետայնությունը՝ 5.0 տարի (2011 թվականին՝ 4.3 տարի): 2012 թվականին առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների հիմնական վարկատու երկրներն են եղել Ռուսաստանը, Լյուքսեմբուրգը, Նիդեռլանդները, Գերմանիան, ԱՄՆ-ն:

ՀՀ այլ մասնավոր հատվածի (առանց առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների) արտաքին պարտքը նախորդ տարվա համեմատ նվազել է 258.2 մլն ԱՄՆ դոլարով և կազմել 1811.8 մլն դոլար: Պարտքի 51.7%-ը կամ 936.3 մլն դոլարը կազմել են միջֆիրմային վարկերը, 40.9%-ը կամ 740.9 մլն դոլարը՝ վարկերը, իսկ մնացած 134.7 մլն դոլարը՝ այլ պարտավորությունները, ներառյալ առևտրային վարկերը: Մասնավոր հատվածի արտաքին պարտքը նվազել է հիմնականում վարկերի ծավալների կրճատման հաշվին, որոնք 2011 թվականի վերջին արձանագրված 1014.9 մլն դոլարի նկատմամբ նվազել են 27.0%-ով: Միջֆիրմային վարկերն ավելացել են 5.1%-ով՝ կազմելով 936.3 մլն դոլար: Զգալի նվազել են նաև առևտրային վարկերը՝ 43.3%-ով կամ 44.1 մլն դոլարով՝ դառնալով 57.8 մլն դոլար (2011 թվականին՝ 101.9 մլն դոլար): 2012 թվականին ֆինանսական միջոցներ են ստացվել հիմնականում Կանադայից (57.8%) ու Ռուսաստանից (18.7%):

Գծապատկեր 2. Մասնավոր հատվածի պարտքային պարտավորությունները 2010-2012 թվականներին




Աղյուսակ 1. Մասնավոր հատվածի պարտքային պարտավորությունների կառուցվածքը (ներառյալ բանկերը և վարկային կազմակերպությունները)

մլն ԱՄՆ դոլար

Պարտավորություններ	2010	2011	2012
Ընդամենը մասնավոր հատվածի պարտքային պարտավորություններ, որից՝	2846.4	3684.2	3740.8
Վարկեր	1612.8	1957.6	1989.5
Առևտրային վարկեր	74.7	101.9	57.8
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	432.7	644.7	627.4
Միջֆիրմային պարտավորություններ	630.9	897.5	941.7
Այլ պարտավորություններ	95.5	82.3	124.4

Գծապատկեր 3. Հայաստանի արտաքին պարտքի կառուցվածքն ըստ գործիքների և վարկառուների (2012 թ. վերջին)



Ըստ ՀՀ ֆինանսների նախարարության տվյալների՝ ՀՀ կառավարության և Կենտրոնական բանկի արտաքին վարկերը 2012 թվականի վերջի դրությամբ[33] կազմել են 3738.3 մլն դոլար, որից 3143.7 մլն դոլարը ՀՀ կառավարությանը տրված վարկերն են, իսկ 594.6 մլն դոլարը՝ ՀՀ կենտրոնական բանկի ներգրաված պարտավորությունները:

2012 թվականին արտաքին պետական վարկերի ներհոսքը կազմել է 386.1 մլն դոլար, որի մոտ 87.3%-ը բազմակողմանի պաշտոնական աղբյուրներից ներգրավված միջոցներն են: Այսպես՝ Համաշխարհային բանկից և Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամից տարվա ընթացքում ներգրավվել են 153.4 մլն դոլարի (որից՝ Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամից՝ 2.3 մլն դոլարի), Արժույթի միջազգային հիմնադրամից (ԱՄՀ)՝ 101.4 մլն դոլարի, Եվրոմիությունից, Եվրոպական ներդրումային բանկից և Եվրոպական զարգացման բանկից՝ 57.0 մլն դոլարի, Ասիական զարգացման բանկից (ADB)՝ 22.1 մլն դոլարի և Նավթ արդյունահանող երկրների կազմակերպությունից (OPEC)՝ 3.3 մլն դոլարի ֆինանսական միջոցներ:

Հայաստանի և ԱՄՀ հարաբերությունները

Հայաստանի Հանրապետությունը, 1992 թվականի մայիսի 28-ին ստորագրելով ԱՄՀ-ի Համաձայնագրի հոդվածները, դարձավ Հիմնադրամի անդամ: Կառավարիչների խորհրդում Հայաստանը ներկայացնում են ՀՀ ֆինանսների նախարարը (Կառավարիչ) և ՀՀ կենտրոնական բանկի նախագահը (Կառավարչի տեղակալ): Տնօրենների խորհրդում Հայաստանը Բուլղարիայի, Կիպրոսի, Իսրայելի, Մոլդովայի, Ուկրաինայի, Սիդեռլանդների, Ռումինիայի, Վրաստանի, Մակեդոնիայի, Խորվաթիայի, Բոսնիա-Հերցեգովինայի հետ միևնույն խմբում է, որի Կառավարիչը ներկայումս Սիդեռլանդների ներկայացուցիչն է:

Հայաստանի բաժնեմասը, մինչև բաժնեմասերի 11-րդ ընդհանուր վերանայումը, կազմել է 67.5 մլն ՀՓԻ, իսկ դրանից հետո (1998 թվականի հունվարի 30) ավելացվել է և այժմ 92 մլն ՀՓԻ է:

Հայաստանը ԱՄՀ-ի հետ կնքել է 9 վարկային համաձայնագիր: Ընդ որում, 1995 թվականի «Սթենդ-բայ» և ՀԲՖՄ (STF) ծրագրերի շրջանակներում ստացված վարկերի մարումն ավարտված է: 2009 թվականին կնքված «Սթենդ-բայ» և 2010 թվականին կնքված ԸԿԳ (ECF) համաձայնագրերից բացի, բոլոր վարկերը տրվել են Կենտրոնական բանկին: 2010 թվականին կնքված EFF համաձայնագրով 2012 թվականի ընթացքում ստացված 35 մլն ՀՓԻ գումարն ամբողջությամբ ստացել է Կենտրոնական բանկը, 2010 թվականին կնքված ECF համաձայնագրով 2012 թվականի ընթացքում ստացված 32 մլն ՀՓԻ գումարից 27 մլն ՀՓԻ-ն՝ Կառավարությունը, իսկ 5 մլն ՀՓԻ-ն՝ ԿԲ-ն: 2012 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի պարտավորությունները ԱՄՀ նկատմամբ կազմել են 505.0 մլն ՀՓԻ, որից՝ ԿԲ պարտավորությունները 301.2 մլն ՀՓԻ են, իսկ Կառավարության պարտավորությունները՝ 203.7 մլն ՀՓԻ:

[33] *Արտաքին պետական և պետական երաշխիքով վարկերի վիճակագրության հավաքագրման պատասխանատուն ՀՀ ֆինանսների (ՖՆ) նախարարությունն է: Ընդ որում, այս ցուցանիշը հաշվարկվում է հաշվապահական հաշվառման կանխիկ սկզբունքով և ներառում է միայն արտաքին աշխարհից ներգրավված վարկերի փաստացի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը:*

մլն ՀՓԻ

Մեխանիզմների տեսակը	*Համաձայնագրի կնքման ամսաթիվը*	*Գումարը ըստ համաձայնագրի*	*Պարտավորությունները 31.12.2012 թ. դրությամբ*
ՀԲՖՄ (STF)	*15.12. 1994*	*33.8*	*0.0*
«Սթենդ-բայ»	*28.06.1995*	*43.9 [1]*	*0.0*
ԱՆՏԱ (PRGF) I [2]	*14.02.1996*	*109.4*	*0.0*
ԸՎԳ (ECF) II [3]	*23.05.2001*	*69.0*	*9.6*
ԸՎԳ (ECF) III [3]	*25.05.2005*	*23.0*	*18.1*
ԸՎԳ (ECF) IV [3]	*17.11.2008*	*9.2 [4]*	*1.3*
«Սթենդ-բայ»	*06.03.2009*	*533.6 [5]*	*264.2*
ԸՖԳ (EFF)	*28.06.2010*	*133.4*	*105.0*
ԸՎԳ (ECF) V	*28.06.2010*	*133.4*	*106.8*

1. Տրամադրվել է ընդամենը 13.5 մլն ՀՓԻ:
2. Կնքվել է որպես ESAF համաձայնագիր, իսկ 1999 թվականի նոյեմբերի 22-ին վերանվանվել է PRGF:
3. Կնքվել է որպես PRGF համաձայնագիր, իսկ 2010 թվականի նոյեմբերի 22-ին վերանվանվել է ECF (ընդլայնված վարկային գործիք):
4. Տրամադրվել է ընդամենը 1.3 մլն ՀՓԻ:
5. Տրամադրվել է ընդամենը 350.4 մլն ՀՓԻ:

Համաշխարհային բանկի կողմից գումարները տրամադրվել են հիմնականում «Զարգացման քաղաքականության գործողությունների III վարկ»՝ 80.0 մլն դոլար, «Կենսական նշանակության ճանապարհների բարելավման ծրագրի երկրորդ լրացուցիչ ֆինանսավորում»՝ 13.7 մլն դոլար, «Ոռոգման համակարգի հրատապ վերականգնման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում»՝ 13.1 մլն դոլար և «Փոքր և միջին ձեռնարկությունների համար ֆինանսավորման մատչելիության ծրագիր»՝ 9.9 մլն դոլար, վարկային ծրագրերի իրականացման համար: ԱՄՀ կողմից տրված 101.4 մլն դոլար վարկային միջոցները տրամադրվել են EFF՝ 53.4 մլն դոլար և ECF՝ 48.0 մլն դոլար վարկային ծրագրերի շրջանակներում: Եվրոմիությունից ստացվել է 53.4 մլն դոլար՝ «Մակրոֆինանսական աջակցություն» ծրագրի շրջանակներում: Երկկողմանի վարկատուներից տարվա ընթացքում ներգրավված 48.8 մլն դոլարի մեծ մասը՝ 36.2 մլն դոլարը, ստացվել է Գերմանական վերականգնման վարկերի բանկի (KfW) կողմից՝ ջրամատակարարման ոլորտների, էներգետիկայի և հիփոթեքային շուկայի զարգացման վարկային ծրագրերի շրջանակում, 8.5 մլն դոլարը՝ Ռայֆայզեն ավստրիական բանկի կողմից՝ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի և Արամ Խաչատրյան համերգասրահների տեխնիկական վերազինման ծրագրի շրջանակում

2012 թվականին արտաքին պետական վարկերի հիմնական գումարի մարումները կազմել են 184.4 մլն դոլար, իսկ տոկոսավճարները՝ 55.0 մլն դոլար՝ նախորդ տարվա համապատասխանաբար 51.2 մլն դոլարի և 50.4 մլն դոլարի փոխարեն: Արտաքին պետական վարկերի սպասարկման ծավալներից 124.6 մլն դոլարը կամ արտաքին պետական վարկերի սպասարկման շուրջ 52.0%-ը կազմել է ՀՀ կենտրոնական բանկի արտաքին վարկերի սպասարկումը, ինչը նախորդ տարի կազմել էր 32.3 մլն դոլար: Ընդ որում, ԱՄՀ վարկերի դիմաց ՀՀ կենտրոնական բանկը և ՀՀ կառավարությունը վճարել են 11.3 մլն դոլար տոկոսագումար և իրականացրել 154.1 մլն դոլար հիմնական գումարի մարում:

Վերը նշված հոսքերի արդյունքում 2012 թվականին Հայաստանի արտաքին պետական վարկերի զուտ ներհոսքը (արտաքին վարկերի գծով ներգրավված ֆինանսական միջոցների և վճարված հիմնական գումարի տարբերություն) կազմել է 201.6 մլն դոլար, սակայն, պայմանավորված տարվա ընթացքում ճապոնական իենի նկատմամբ դոլարի էական՝ 10.9% արժևորմամբ, ՀՀ արտաքին պետական վարկերի մնացորդն աճել է ավելի քիչ՝ 170.1 մլն դոլարով:

Աղյուսակ 2. ՀՀ արտաքին պետական վարկերի մնացորդների կառուցվածքն ըստ արժույթների (%)

Արժույթ	**2010**	**2011**	**2012**
ՀՓԻ	63.9	62.9	60.6
ԱՄՆ դոլար	20.2	19.9	21.3
Իեն	11.3	11.1	9.5
Եվրո	4.5	6.0	8.5
Այլ	0.03	0.1	0.1

2012 թվականի ընթացքում ՀՓԻ նկատմամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքի արժեզրկման հետևանքով Համաշխարհային բանկից, Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամից, Ասիական զարգացման բանկից և ԱՄՀ-ից ՀՓԻ-ով ներգրավված պարտքը համապատասխանաբար ավելացել է 1.6 մլն դոլարով և 0.8 մլն դոլարով, իսկ եվրոյի նկատմամբ դոլարի փոխարժեքի արժեզրկման հետևանքով եվրոյով ներգրավված պարտքն ավելացել է 6.2 մլն դոլարով՝ նախորդ տարվա 5.1 մլն դոլար նվազման փոխարեն: Ճապոնական իենի նկատմամբ դոլարի փոխարժեքի արժևորման հետևանքով Ճապոնիայից ներգրավված պարտքը նվազել է 38.9 մլն դոլարով, նախորդ տարվա 19.5 մլն դոլար աճի փոխարեն: Փոխարժեքների տատանման հետևանքով արտաքին վարկերի մնացորդը նվազել է 30.4 մլն դոլարով: Նշենք նաև, որ հիմնական արժույթների նկատմամբ ՀՀ դրամի արժեզրկման հետևանքով դրամային արտահայտությամբ աճել են ինչպես Կառավարության արտաքին վարկերի սպասարկման ծախսերը, այնպես էլ ներգրավված վարկերի ծավալները:

Աղյուսակ 3. ՀՀ արտաքին պետական վարկերի կառուցվածքը

Աղբյուրը	2010 թ. վերջի դրությամբ		2011 թ. վերջի դրությամբ		2012 թ. վերջի դրությամբ	
	մլն ԱՄՆ դոլար	տես. կշիռ (%)	մլն ԱՄՆ դոլար	տես. կշիռ (%)	մլն ԱՄՆ դոլար	տես. կշիռ (%)
Բազմակողմանի	2253.7	68.3	2475.4	69.4	2638.9	70.6
Համաշխարհային բանկ և Գյուղ. զարգ. գործակալություն	1327.5	40.2	1403.2	39.3	1537.5	41.1
ԱՄՀ	740.8	22.5	827.5	23.2	776.1	20.8
Ասիական զարգացման բանկ (ADB)	146.7	4.4	165.3	4.6	187.9	5.0
Եվրոմիություն	-	-	33.6	0.9	85.7	2.3
Նավթ արդյունահանող երկրների կազմակերպություն (OPEC)	28.7	0.9	28.3	0.8	30.7	0.8
Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (EBRD)	10.0	0.3	13.7	0.4	14.3	0.4
Եվրոպական ներդրումային բանկ	-	-	3.9	0.1	6.6	0.2
Երկկողմ	1045.3	31.7	1092.8	30.6	1099.4	29.4
Ռուսաստան	500.0	15.2	500.0	14.0	500.0	13.4
Ճապոնիա	374.4	11.3	397.2	11.1	355.9	9.5
Գերմանիա	132.7	4.0	155.0	4.3	193.1	5.2
ԱՄՆ	29.4	0.9	27.6	0.8	25.9	0.7
Ավստրիա (Raiffeisen Bank International AG)	-	-	-	-	8.7	0.2
Ֆրանսիա	4.3	0.1	4.1	0.1	4.0	0.1
Աբու-Դաբի	0.9	0.0	3.1	0.1	4.2	0.1
Բելգիա (KBC Bank NV)	-	-	2.2	0.1	4.2	0.1
Լինսի հիմնադրամ	3.7	0.1	3.5	0.1	3.3	0.1
ԸՆԴԱՄԵՆԸ	3299.0	100.0	3568.2	100.0	3738.3	100.0

Նախորդ տարվա համեմատ պարտքի ներկա արժեքն աճել է՝ կազմելով 3411.8 մլն դոլար (նախորդ տարի՝ 3138.3 մլն դոլար): Այս աճը հիմնականում պայմանավորված է որոշ միջազգային տոկոսադրույքների[34] նվազմամբ[35]: *Նշենք, որ որքան պարտքի ներկա արժեքը փոքր է պարտքի անվանական արժեքից, այնքան պարտքի պայմաններն արտոնյալ են, այսինքն՝ պարտքի բեռը փոքր է:*

[34] Արտաքին պարտքի ՆԱ հաշվարկման ժամանակ որպես զեղչման տոկոսադրույք սովորաբար օգտագործվում է CIRR տոկոսադրույքը: Այս տոկոսադրույքները հաշվարկվում և հրապարակվում են Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) կողմից:

[35] Եթե նախորդ տարվա նկատմամբ տոկոսադրույքները մնային անփոփոխ, ապա արտաքին պարտքի ՆԱ-ն 2012 թվականին կկազմեր մոտ 3173.6 մլն դոլար:

*Աղյուսակ 4. ՀՀ արտաքին պետական վարկերի տրամադրման պայմանները**

Ցուցանիշներ	2009	2010	2011	2012
Տոկոսադրույք (%)	1.2	1.3	1.4	1.3
Մարման ժամկետ (տարի)	26.7	26.1	24.8	24.6
Գրանտ-էլեմենտ (%)	39.3	32.4	30.2	23.3
Արտոնյալ վարկեր (%՝ ամբողջ պարտքի մեջ)	64.5	61.1	56.2	30.8
Հաստատագրված տոկոսադրույքով վարկեր (%՝ ամբողջ պարտքի մեջ)	65.4	63.6	63.0	63.7
** Հաշվարկված են միջին կշռված ցուցանիշների հիման վրա:*				

Երկրի արտաքին պարտքի վերլուծության ու պարտքի բեռի գնահատման համար արտաքին պարտքը սովորաբար դիտարկվում է մի շարք մակրոտնտեսական ցուցանիշների հետ հարաբերության մեջ: Արտաքին պարտքի հարաբերական ցուցանիշներն արտաքին պարտքի սպասարկման հետ կապված հնարավոր ռիսկերի բնութագրիչներ են: Այդ ցուցանիշների միջոցով գնահատվում է երկրի վճարունակության և իրացվելիության մակարդակը, ինչը նպաստում է արտաքին պարտքի արդյունավետ կառավարմանն ու առկա խնդիրների ժամանակին բացահայտմանը: Արտաքին պարտքի բեռի գնահատման համար Համաշխարհային բանկն օգտագործում է արտաքին պարտք/ՀՆԱ, արտաքին պարտքի ՆԱ/ՀՆԱ, արտաքին պարտք/ապրանքների և ծառայությունների արտահանում, արտաքին պարտքի ՆԱ/ապրանքների և ծառայությունների արտահանում հարաբերությունները:

Արտաքին պարտքի բեռի գնահատման ցուցանիշների հաշվարկի համար Համաշխարհային բանկը, բացի պարտքի ՆԱ-ից, օգտագործում է նաև պարտքի անվանական ծավալները, քանի որ մի շարք երկրների արտաքին պարտքի ՆԱ-ն հնարավոր չէ հաշվարկել՝ արտաքին պարտքի վերաբերյալ մանրամասն տեղեկատվության բացակայության պատճառով:

Աղյուսակ 5. ՀՀ արտաքին պարտքի բեռի գնահատման ցուցանիշները 2009-2012 թվականներին (%)

Ցուցանիշներ	2009	2010	2011	2012
Արտաքին պարտք / ապրանքների և ծառայությունների արտահանում	375.3	324.7	307.2	312.7
Արտաքին պետական պարտք/ապրանքների և ծառայությունների արտահանում	232.5	177.8	154.1	159.4
Արտաքին պարտք/ՀՆԱ	60.4	66.1	75.5	77.0
Արտաքին պետական պարտք/ՀՆԱ	37.4	36.2	37.9	39.3
Կարճաժամկետ արտաքին պարտք/պահուստներ	24.9	33.3	45.0	44.9

Աղյուսակ 6. ՀՀ համախառն արտաքին պարտքի դիրքերը

մլն ԱՄՆ դոլար

	2009 թ. վերջի դրությամբ	*2010 թ. վերջի դրությամբ*	*2011 թ. վերջի դրությամբ*	*2012 թ. վերջի դրությամբ*
Պետական կառավարման մարմիններ	**2471.1**	**2743.6**	**2955.8**	**3158.0**
Կարճաժամկետ	***0.0***	***1.3***	***0.4***	***0.0***
Դրամի շուկայի գործիքներ	0.0	1.3	0.4	0.0
Վարկեր	-	-	-	-
Առևտրային վարկեր	-	-	-	-
Այլ պարտքի պարտավորություններ	-	-	-	-
Երկարաժամկետ	***2471.1***	***2742.3***	***2955.4***	***3157.9***
Պարտատոմսեր և պարտամուրհակներ	-	-	0.5	0.5
Վարկեր	2471.1	2742.3	2954.9	3157.5
Առևտրային վարկեր	-	-	-	-
Այլ պարտքի պարտավորություններ	-	-	-	-
Դրամավարկային կարգավորման մարմիններ	**640.3**	**699.8**	**754.1**	**731.6**
Կարճաժամկետ	***0.9***	***0.4***	***0.2***	***0.2***
Դրամի շուկայի գործիքներ	(0.0)	-	-	-
Վարկեր	0.0	-	-	-

	2009 թ. վերջի դրությամբ	*2010 թ. վերջի դրությամբ*	*2011 թ. վերջի դրությամբ*	*2012 թ. վերջի դրությամբ*
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	0.2	0.2	0.1	0.0
Այլ պարտքի պարտավորություններ	0.7	0.2	0.1	0.2
Երկարաժամկետ	***639.4***	***699.4***	***753.9***	***731.4***
Պարտատոմսեր և պարտամուրհակներ	-	-	-	-
Վարկեր	501.4	563.8	618.7	596.1
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	-	-	-	-
Այլ պարտքի պարտավորություններ	138.0	135.6	135.1	135.2
Բանկեր	**864.5**	**1127.9**	**1607.3**	**1923.5**
Կարճաժամկետ	***346.0***	***429.5***	***608.7***	***617.5***
Դրամի շուկայի գործիքներ	0.0	-	-	-
Վարկեր	32.8	73.1	134.6	119.9
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	307.7	338.5	460.1	462.8
Այլ պարտքի պարտավորություններ	5.5	17.9	14.0	34.9
Երկարաժամկետ	***518.5***	***698.4***	***998.6***	***1,306.0***
Պարտատոմսեր և պարտամուրհակներ	12.5	23.1	5.8	12.6
Վարկեր	431.4	581.1	808.2	1,128.7
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	74.5	94.2	184.6	164.7
Այլ պարտքի պարտավորություններ	(0.0)	-	-	-
Այլ հատվածներ	**691.3**	**1,087.7**	**1,179.3**	**875.6**
Կարճաժամկետ	***152.9***	***190.7***	***260.5***	***190.2***
Դրամի շուկայի գործիքներ	-	-	-	-
Վարկեր	99.0	157.6	224.9	149.5
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	-	-	-	-
Առևտրային վարկեր	18.8	24.7	28.9	33.3
Այլ պարտքի պարտավորություններ	35.1	8.4	6.7	7.5
Երկարաժամկետ	***538.4***	***897.1***	***918.8***	***685.4***
Պարտատոմսեր և պարտամուրհակներ	-	-	-	-
Վարկեր	482.3	800.9	789.9	591.4
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	-	-	-	-
Առևտրային վարկեր	41.7	50.0	73.0	24.6
Այլ պարտքի պարտավորություններ	14.4	46.2	55.8	69.4
Ուղղակի ներդրումներ՝ միջֆիրմային վարկեր	**355.7**	**630.9**	**897.5**	**941.7**
Համախառն արտաքին պարտք	**5022.9**	**6289.8**	**7394.1**	**7630.4**

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՐԵՎԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Դրամավարկային քաղաքականության վարչություն

ՀՀ հարևան երկրների տնտեսությունների ուսումնասիրությունը կարևոր է, քանի որ դրանք կրում են նույնանման ցնցումների ազդեցությունը: Հարևան երկրների տնտեսությունների զարգացումները կարող են անուղղակիորեն ազդել Հայաստանի տնտեսության վրա: Ազդեցության անուղղակի ուղիները՝ արտահանման միևնույն շուկաները, վարկավորող միևնույն երկրները կամ կազմակերպությունները, միևնույն ներդրողները և այլն տարածաշրջանային տեսանկյունից ավելի ու ավելի մեծ դեր են ունենում երկրների տնտեսությունների զարգացումների վրա: Հետևաբար՝ երկրները մշտապես դիտարկում են ոչ միայն գործընկեր, այլև տարածաշրջանային հարևան երկրների մակրոտնտեսական զարգացումները:

Թուրքիա. 2012 թ. Թուրքիայի տնտեսությունը նախորդ երկու տարիների բարձր տնտեսական աճից հետո մտավ «փափուկ վայրէջքի» փուլ: 2011 թ. կեսից արձանագրված անվանական փոխարժեքի կտրուկ արժեզրկման և նոր մակարդակի ձևավորման, ինչպես նաև 2011 թ. չորրորդ եռամսյակում կոշտ դրամավարկային քաղաքականության պայմաններում Թուրքիայի տնտեսությունը հայտնվեց նոր հավասարակշռության մեջ: Դա նշանավորվեց ցածր տնտեսական աճով, արտաքին և ներքին հաշվեկշռվածության զգալի բարելավմամբ: 2012 թ. արձանագրվեց բավականին ցածր՝ 2.2% տնտեսական աճ՝ նախորդ տարվա 8.8%-ի համեմատ: Ներքին պահանջարկի նպաստումը տնտեսական աճին, մասնավոր ներդրումների նվազման հետ մեկտեղ, բացասական էր, ինչը մասամբ պայմանավորվել է կոշտ դրամավարկային քաղաքականությամբ և իրացվելիության կառավարման ոչ ավանդական մեթոդներով: Զուտ արտահանումն ավելի քան փոխհատուցել է ներքին պահանջարկի նվազումը և հանդիսացել է տնտեսական աճի հիմնական շարժիչը:

2012 թ. տնտեսության ճյուղերում դրսևորվել են հետևյալ զարգացումները. վերամշակող արդյունաբերության աճի տեմպերը կտրուկ դանդաղել են, և աճը կազմել է 1.9%՝ նախորդ տարվա 10.0%-ի համեմատ, հանքարդյունաբերության ճյուղում աճը կազմել է 0.8%՝ նախորդ տարվա 3.9%-ի համեմատ: Մանրածախ ու մեծածախ առևտրի և շինարարության ճյուղերում աճի տեմպերը կազմել են համապատասխանաբար 0.1% և 0.6%:

Արտաքին հաշվեկշռվածությունը 2012 թ. կտրուկ բարելավվել է, երբ ընթացիկ հաշվի պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշը նախորդ տարվա 10.0%-ից նվազել է մինչև 6.0%: Ներքին պահանջարկի նվազման պայմաններում ապրանքների և ծառայությունների ներմուծման դոլարային արժեքը նվազել է 1.5%-ով, մինչդեռ ապրանքների և ծառայությունների արտահանման դոլարային արժեքն ավելացել է 12.6%-ով: Թեև կապիտալի և ֆինանսական հաշվով միջոցների զուտ ներհոսքը զգալի գերազանցել է ընթացիկ հաշվի պակասուրդը, այնուամենայնիվ ֆինանսավորման ռիսկերը դեռևս պահպանվում են, քանի որ ընթացիկ հաշվի ֆինանսավորման գերակշռող մասը կազմում են կարճաժամկետ հոսքերը: Մասնավորապես՝ պորտֆելային ներդրումների զուտ ներհոսքն ավելացել է 21.6%-ով (ֆինանսավորել է ընթացիկ հաշվի 78.0%-ը), մինչդեռ օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ ներհոսքը նվազել է 39.1%-ով (ֆինանսավորել է ընթացիկ հաշվի ընդամենը 17.6%-ը): Վճարային հաշվեկշռի հոսքերի արդյունքում Թուրքիայի կենտրոնական բանկի պահուստային ակտիվներն ավելացել են 22.8 մլրդ ԱՄՆ դոլարով:

Ինչ վերաբերում է հարկաբյուջետային քաղաքականությանը, ապա ներքին պահանջարկի ճշգրտումների պարագայում բյուջեի պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշն ավելացել է և կազմել 2.0%: Բյուջեի պակասուրդի ավելացումը հիմնականում պայմանավորվել է առաջնային ծախսերով և սոցապ հատկացումներով: Մյուս կողմից՝ պայմանավորված մասնավոր սպառման նվազմամբ եկամուտները նույնպես նվազել են:

2012 թ. կարևոր ճշգրտումներից էր նաև գնաճի տեմպերի կտրուկ նվազումը. արձանագրվեց 6.2% գնաճ՝ նախորդ տարվա 10.4%-ի համեմատ: Սա վերջին տասնամյակում արձանագրված ամենացածր գնաճն էր, թեև դեռևս բարձր է նպատակային 5.0% ցուցանիշից: Թույլ ներքին պահանջարկի պայմաններում գնաճի տեմպերի դանդաղմանը հիմնականում նպաստել է պարենային ապրանքների ցածր գնաճը: Գնաճի նվազման միտումը նպաստել է միջինժամկետ հատվածում սպասումների խարսխմանը և հաջորդ երկու տարիների գնաճի սպասումների նվազմանը:

2012 թ. կեսից, երբ ձեռք բերվեցին գնաճին և տնտեսության հաշվեկշռվածությանը վերաբերող նպատակադրված արդյունքները, Թուրքիայի կենտրոնական բանկը ձեռնամուխ եղավ առավել հարմարվողական դրամավարկային քաղաքականության: Այս առումով հունիսից սկսած Կենտրոնական

բանկն աստիճանաբար նվազեցրեց ֆինանսավորման միջին դրույքը՝ ավելացնելով ներարկվող իրացվելիության ծավալները: Միևնույն ժամանակ, սեպտեմբերին նվազեցրեց նաև կարճաժամկետ տոկոսադրույքների միջև տարբերությունը՝ մեկօրյա ներգրավման տոկոսադրույքը պահպանելով 5.0% մակարդակում, մինչդեռ մեկօրյա տրամադրման տոկոսադրույքը նվազեցրեց 11.5%-ից մինչև 10.0%: Կարճաժամկետ տոկոսադրույքների հերթական նվազեցումներն իրականացվեցին հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին՝ մեկօրյա տրամադրման տոկոսադրույքը սահմանելով 9.0%: Մեկշաբաթյա ռեպո տոկոսադրույքը դեկտեմբերին նվազեցվել է 0.25 տոկոսային կետով և սահմանվել 5.5%: Միևնույն ժամանակ, Դրամավարկային կոմիտեն նշում է, որ կապիտալի ներհոսքի արագացման պայմաններում ֆինանսական կայունության ռիսկերը նվազեցնելու նպատակով քաղաքականության տոկոսադրույքները նպատակահարմար է թողնել ցածր մակարդակում՝ շարունակելով մակրոպրուդենցիալ միջոցառումները: 2010 թ. վերջից իրականացվող համապատասխան մակրոպրուդենցիալ միջոցառումների և դրամավարկային քաղաքականության իրականացման արդյունքում ներքին վարկավորման[36] ավելցուկային աճի տեմպերը 2012 թ. նվազեցին և կազմեցին 13.3%՝ 2010 թ. 27.5% աճի համեմատ:

«Մուդիզ» միջազգային վարկանշային կազմակերպության կարծիքով՝ Թուրքիայի ***տնտեսության ուժեղ կողմերն են***՝տնտեսության մեծությունը և դինամիզմը, որոնք ուղեկցվում են եվրոպական ավանդական շուկաներից դուրս առևտրային կապերի աճող բազմազանեցմամբ՝ ամուր հիմքեր ունեցող մակրոտնտեսական միջավայր, որը ներառում է բյուջեի առաջնային հավելուրդների ձևավորում, պարտքային ցուցանիշների նպաստավոր դինամիկա:

Թուրքիայի տնտեսության ***ներկայիս հիմնախնդիրներն են.*** ըստ «Մուդիզի»՝ արտաքին խոցելիությունը՝ ներառյալ ընթացիկ հաշվի մեծ պակասուրդը, ինչպես նաև հասարակության աշխարհիկ և կրոնական տարրերի միջև առկա տարաձայնություններից բխող քաղաքական պատմական խնդիրները:

Վրաստան. Թեև տնտեսական աճը տարեվերջին դանդաղեց՝ պայմանավորված հոկտեմբերին կայացած խորհրդարանական ընտրություններով և դրան հաջորդող իշխանափոխության հետ կապված անորոշություններով, Վրաստանի տնտեսական աճը 2012 թ. բարձր էր: ՀՆԱ իրական աճը կազմել է 6.1%՝ շնորհիվ վերամշակող արդյունաբերության (16.4%), ֆինանսական ծառայությունների (15.0%), հյուրանոցային ու առևտրի ծառայությունների (11.8%) և շինարարության (11.4%) ոլորտներում գրանցված աճի[37]:

Պահանջարկի տեսանկյունից տնտեսական աճի հիմնական աղբյուր են հանդիսացել համախառն ներդրումները և վերջնական սպառումը: Վերջնական սպառումն աճել է 5.5%-ով. ընդ որում՝ մասնավոր սպառումն աճել է 4.3%-ով, իսկ պետական սպառումը՝ 10.8%-ով (8 անգամ գերազանցել է նախորդ տարում արձանագրված աճի 1.8% մակարդակը): Պետական հատվածի սպառման զգալի աճը պայմանավորված էր պետական հատվածի աշխատողների աշխատավարձի, ինչպես նաև սոցիալական ծախսերի ավելացմամբ: Համախառն ներդրումներն աճել են 28.8%-ով՝ հիմնականում ի հաշիվ ենթակառույցներում պետական ծախսերի աճի: Զուտ արտահանումը նվազել է 22.0%-ով[38]:

Թեև նախորդ տարվա համեմատ ընթացիկ հաշվի պակասուրդը ՀՆԱ-ում կրճատվել է և 2012 թ. կազմել 12%՝ նախորդ տարվա 12.8%-ի համեմատ, այնուամենայնիվ այն դեռևս մնում է բարձր՝ պայմանավորված ՀՆԱ-ում ապրանքային հաշվեկշռի խոշոր պակասուրդով[39]: Ապրանքների արտահանման համեմատությամբ ներմուծման առաջանցիկ աճի հաշվին ապրանքային հաշվեկշռի բացասական մնացորդը խորացել է, որը մասամբ ծածկվել է զբոսաշրջությունից ստացված հասույթների և ներդրումային եկամուտների աճի հաշվին: Ընթացիկ հաշվի շուրջ 1.8 մլրդ ԱՄՆ դոլար բացասական մնացորդը հիմնականում ֆինանսավորվել է 865 մլն ԱՄՆ դոլար օտարերկրյա ուղղակի ներդրումների և 881 մլն ԱՄՆ դոլար պորտֆելային ներդրումների հաշվին[40]: Այսպիսի կապիտալ ներհոսքի պայմաններում Վրաստանի ազգային բանկը հնարավորություն է ունեցել կուտակելու շուրջ 55 մլն ԱՄՆ դոլար միջազգային պահուստներ, և դրանց ընդհանուր մակարդակը տարեվերջին հասել է 2.9 մլրդ ԱՄՆ դոլարի կամ շուրջ 4.5 ամսվա ներմուծման ծածկույթի[41]:

2012 թ. ընթացքում գնաճը շարունակաբար նվազել է և 2011 թ. մայիսին գրանցված իր ամենաբարձր՝ շուրջ 15% մակարդակից 2012 թ. վերջի դրությամբ հասել է -1.4%-ի՝ շնորհիվ պարենային ապրանքների և էներգիայի գների նվազման, ինչպես նաև ԱՄՆ դոլարի նկատմամբ լարիի շուրջ 2.0% միջին տարեկան արժևորման: Ընդ որում, նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ գնանկում է գրանցվել թե՛

---

[36] Աղբյուրը՝ միջազգային ֆինանսական վիճակագրություն:
[37] Աղբյուրը՝ http://geostat.ge/cms/site_images/_files/english/nad/GDP_2012__press-release__Eng.pdf.
[38] Աղբյուրը՝ http://www.adb.org/sites/default/files/ado2013-georgia.pdf.
[39] Աղբյուրը՝ http://www.nbg.gov.ge/uploads/publications/inflationreport/2013/ir_2013q1_publish_eng.pdf, էջ 27:
[40] Աղբյուրը՝ 2013 թ. հունվար-փետրվար ամիսների Վրաստանի ազգային բանկի Դրամավարկային և բանկային վիճակագրության բյուլետեն, աղյուսակ 5.3:
[41] Աղբյուրը՝ նույն տեղում, աղյուսակ 5.1:

կարճաժամկետ, թե՛ միջինժամկետ և թե՛ երկարաժամկետ սպառման ապրանքների գծով[42]: Արձագանքելով ողջ տարվա ընթացքում արձանագրված գնանկումային միտումներին՝ Վրաստանի ազգային բանկը հունվար, ապրիլ, մայիս, հունիս, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին 0.25-ական տոկոսով իջեցրել է իր քաղաքականության տոկոսադրույքը՝ 6.75%-ից հասցնելով 5.25%-ի[43]:

Ընդլայնողական դրամավարկային քաղաքականության պայմաններում Վրաստանի կառավարությունը շարունակել է հարկաբյուջետային համախմբումը՝ 2012 թ. համախմբված բյուջեի պակասուրդը հասցնելով ՀՆԱ-ի 2.9%-ի՝ նախորդ տարվա 3.6%-ի համեմատ[44]: Բյուջեի ցածր պակասուրդը հիմնականում արտացոլում է չնախատեսված միանվագ եկամուտները խնայելու մասին նոր կառավարության որոշումը, հարկային և ոչ հարկային եկամուտների աճը: Զգալի է եղել ոչ հարկային եկամուտների աճը՝ պայմանավորված Վրացական երկաթուղու տնօրինման բացառիկ իրավունքից բխող շահաբաժինների վճարմամբ և ժամկետանց վճարների հավաքագրմամբ: Այս եկամուտները մեծածավալ դրամաշնորհների հետ ուղղվել են բյուջեի պակասուրդի կրճատմանը և Կախեթիայում տեղի ունեցած ջրհեղեղների արդյունքում հասցված վնասների փոխհատուցմանը[45]:

2012 թ. 12.9%-ով աճել են բանկերի կողմից տնտեսության վարկավորման և 7.5%-ով ավանդների ներգրավման ծավալները. ընդ որում՝ ազգային արժույթով տրամադրված վարկերի և ներգրավված ավանդների ծավալներն արտարժութայինի համեմատ գրանցել են առաջանցիկ աճ[46]: Ինչ վերաբերում է տնտեսության վարկավորման կառուցվածքին, վարկավորման ընդհանուր ծավալների մեծ տեսակարար կշիռը բաժին է ընկել առևտրի ոլորտին (47.0%), արդյունաբերությանը (20.9%) և շինարարությանը (9.2%)[47]: Նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ 1.8%-ով աճել է տնտեսության դոլարայնացման մակարդակը, և 2012 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արտարժութային ավանդները կազմել են ընդհանուր ավանդների 60.4%-ը[48]:

«Մուդիզ» միջազգային վարկանշային կազմակերպության կարծիքով՝ Վրաստանի տնտեսության ուժեղ կողմերն են՝ վերջին տասնամյակում սոցիալական, քաղաքական և տնտեսական հաստատությունների ստեղծման արագ առաջընթացը, ինչպես նաև հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների բարձր վարկունակությունը: Վրաստանի տնտեսության ներկայիս հիմնախնդիրներն են՝ եկամտի ցածր մակարդակը և դրա բաշխվածության զգալի անհամաչափությունը, օտարերկրյա ներդրումների և այլ կապիտալ հոսքերի հետ կապված տնտեսական մոդելի վրա հիմնվելը (թեև այժմ ավելի քիչ, քան մինչև համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը), Ռուսաստանի հետ լարված հարաբերությունների պատճառով աշխարհաքաղաքական և ներդրումային գործունեությունը զսպող ռիսկերը:

Ադրբեջան. Ադրբեջանում նավթային հատվածի արտադրությունը 2010 թվականից սկսել է արագորեն կրճատվել: Դա շարունակվել է նաև 2012 թ.՝ խոչընդոտելով երկրի տնտեսական աճին: Դրանով պայմանավորված Ադրբեջանի կառավարությունը 2012 թ. կեսին ճշգրտել է իրական ՀՆԱ-ի աճի 5.7% պաշտոնական կանխատեսումը և այն սահմանել 2.5%[49]: Արդյունքում, 2012 թ. գրանցվել է իրական ՀՆԱ-ի 2.2% աճ՝ շնորհիվ ոչ նավթային հատվածի 9.7% աճի, իսկ նավթային հատվածի արտադրությունը կրճատվել է 5.3%-ով:

Առաջարկի տեսանկյունից՝ տնտեսության ոչ նավթային հատվածի աճը հիմնականում ապահովվել է զբոսաշրջության (18.8%), շինարարության (18.0%), տեղեկատվական ու հեռահաղորդակցության ծառայությունների (15.9%) և առևտրի (9.6%) ոլորտների աճի հաշվին[50]: Իսկ նավթային հատվածի արտադրության կրճատումը, ինչը հանգեցրել է արդյունաբերական արտադրանքի ծավալների 3.8%-ով նվազման, վերլուծաբանները բացատրում են նավթի արդյունահանման եռուզեռի ավարտով և «Ազերի-Չիրագ-Գյունեշլի» հիմնական նավթահանքի նորոգման աշխատանքների իրականացմամբ[51]:

---

[42] Աղբյուրը՝ 2013 թ. հունվար-փետրվար ամիսների Վրաստանի ազգային բանկի Դրամավարկային և բանկային վիճակագրության բյուլետեն, աղյուսակ 1.1:
[43] Աղբյուրը՝ http://www.nbg.gov.ge/index.php?m=554.
[44] Աղբյուրը՝ http://www.nbg.gov.ge/uploads/publications/inflationreport/2013/ir_2013q1_publish_eng.pdf, էջ 25:
[45] Աղբյուրը՝ Georgia: First and Second Reviews Under the Stand-By Arrangement and Under the Standby Credit Facility Arrangement, and Request for Waiver of Nonobservance of Performance Criterion—Staff Report; Press Release on the Executive Board Discussion; and Statement by the Executive Director for Georgia. April 2013, IMF Country Report No. 13/95, էջ 10: <http://www.imf.org/external/pubs/ft/scr/2013/cr1395.pdf>.
[46] Աղբյուրը՝ նույն տեղում, աղյուսակներ 2.3, 3.5:
[47] Աղբյուրը՝ նույն տեղում, աղյուսակ 3.10:
[48] Աղբյուրը՝ նույն տեղում, աղյուսակ 2.3:
[49] http://cesd.az/new/wp-content/uploads/2011/05/Azerbaijan_Economy_in_2012.pdf.
[50] Աղբյուրը՝ http://economy.gov.az/index.php/en/economy/main-economic-indicators/2012.
[51] Աղբյուրը՝ http://www.azernews.az/business/51977.html; http://cesd.az/new/wp-content/uploads/2011/05/Azerbaijan_Economy_in_2012.pdf.

Պահանջարկի տեսանկյունից՝ տնտեսական աճի հիմնական աղբյուր են հանդիսացել սպառումը և ներդրումները: Սպառումն աճել է 2.9%-ով, իսկ համախառն ներդրումները, որոնք կազմում են ՀՆԱ-ի շուրջ 20.0%-ը, աճել են 20.9%-ով. աճի հիմնական մասն ապահովվել է պետական ներդրումների հաշվին[52]:

Ցածր՝ 1.1% միջին տարեկան գնաճի պայմաններում, ինչը հիմնականում արդյունք էր պարենային ապրանքների միջազգային և ներքին գների ցածր մակարդակի, Ադրբեջանի կենտրոնական բանկը տնտեսական աճի խթանման նպատակով 2012 թ. դեկտեմբերին 0.25 տոկոսային կետով իջեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը: Բացի այդ, մանաթի արժևորման ճնշումները զսպելու և դրանով իսկ ոչ նավթային հատվածի մրցունակությանը նպաստելու նպատակով Ադրբեջանի կենտրոնական բանկը 2012 թ. բանկերին վաճառել է արժեթղթեր՝ նրանց շուրջ 1.6 մլրդ ԱՄՆ դոլարի կապիտալ ներհոսքը ստերիլիզացնելու նպատակով[53]:

2012 թ. աճել է Կենտրոնական բանկի կողմից տնտեսության իրական հատվածի ուղղակի վարկավորումը, թեև դրան զուգահեռ մակրոպրուդենցիալ միջոցառումներ են մշակվել մասնավոր հատվածի վարկավորման, հատկապես՝ սպառողական վարկերի արագ աճը դանդաղեցնելու համար: Այդ առումով ԱՄՀ փորձագետները Ադրբեջանի կենտրոնական բանկին առաջարկել են դադարեցնել տնտեսության իրական հատվածի ուղղակի վարկավորումը, որը, ըստ էության, պետք է լիներ համաշխարհային տնտեսական ճգնաժամին դիմակայելու ժամանակավոր միջոց[54]:

Հարկաբյուջետային քաղաքականությունը շարունակել է կրել ընդլայնողական բնույթ, որի արդյունքում 2012 թ. ոչ նավթային հատվածի առաջնային պակասուրդը նախորդ տարվա համեմատ աճել է 4%-ով և կազմել ոչ նավթային ՀՆԱ-ի 45%-ը, իսկ պետբյուջեի հավելուրդը կրճատվել է 25.1%-ով և կազմել ՀՆԱ-ի 0.4%-ը[55]: 2013 և 2014 թվականներին պետբյուջեի եկամուտների ծրագրում նավթի 1 բարելի գինը սահմանվել է համապատասխանաբար 105 ԱՄՆ դոլար և 100 ԱՄՆ դոլար: Վերլուծաբանների կարծիքով, եթե երկար ժամանակ նավթի գինը ցածր լինի սահմանված մակարդակից, ապա Ադրբեջանի կառավարությունը կձևավորի պետբյուջեի բարձր պակասուրդ[56]:

Արտաքին դիրքի կայունության տեսանկյունից թեև Ադրբեջանը զուտ արտաքին վարկատու է, նրա տնտեսության կախվածությունը նավթի և գազի արտահանումից խիստ բարձր է: 2012 թ. այդ ապրանքների արտահանման ծավալների 6.9%-ով կրճատման արդյունքում զգալիորեն կրճատվել են նաև Ադրբեջանի առևտրային և ընթացիկ հաշիվների հավելուրդները: Ընդ որում, առևտրային հաշվի հավելուրդը կազմել է ՀՆԱ-ի 20.7%-ը՝ նախորդ տարվա 25.5%-ի համեմատ, իսկ ընթացիկ հաշվի հավելուրդը՝ ՀՆԱ-ի 21.7%-ը՝ նախորդ տարվա 26.5%-ի համեմատ[57]:

Ընթացիկ հաշվի հավելուրդի կրճատումն ուղեկցվել է օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսքի շուրջ 23.4% աճով: Ըստ նախնական տվյալների՝ այդ ներհոսքը կազմել է 4.2 մլրդ ԱՄՆ դոլար, որի հիմնական մասը ներդրվել է նավթային հատվածում՝ «Շահ Դենիզ» գազի հանքավայրի մշակման երկրորդ փուլի և նավթային նոր հանքավայրերի հետազոտման ծրագրերում[58]:

Մանաթի փոխարժեքի կայունության պահպանման նպատակով արժութային շուկայում իրականացրած զուտ առքի գործարքների արդյունքում Ադրբեջանի կենտրոնական բանկի արտարժութային պահուստներն աճել են շուրջ 14.0%-ով և 2012 թ. վերջին կազմել 11.6 մլրդ ԱՄՆ դոլար[59]: Տարեվերջի դրությամբ Ադրբեջանի պետական նավթային հիմնադրամի ակտիվները կազմել են 34.1 մլրդ ԱՄՆ դոլար, և արդյունքում երկրի ռազմավարական պահուստների մակարդակը գերազանցել է 45 մլրդ ԱՄՆ դոլարը[60]: Սակայն նկատի ունենալով, որ Ադրբեջանում նավթի արդյունահանման ծավալները կարող են մոտակա տասնամյակում կտրուկ նվազել ու պետբյուջեի ներկայիս ծախսերին համահունչ եկամուտներ չապահովել, երկրի միջազգային իրացվելիության առումով միջազգային վերլուծաբանները երկարաժամկետ հեռանկարում ռիսկ են տեսնում[61]: Ռիսկը մասամբ մեղմելու նպատակով ինչպես վերջին մի քանի տարիներին, այնպես էլ 2012 թ. Ադրբեջանն ակտիվ քաղաքականություն է վարում Պետական

---

[52] Աղբյուրը՝ http://www.adb.org/countries/azerbaijan/economy.
[53] Աղբյուրը՝ http://news.day.az/economy/386482.html.
[54] Public Information Notice: IMF Executive Board Concludes 2013 Article IV Consultation with the Republic of Azerbaijan, May 21, 2013: < http://www.imf.org/external/np/sec/pn/2013/pn1357.htm>.
[55] Աղբյուրը՝ http://economy.gov.az/index.php/en/economy/main-economic-indicators/2012.
[56] Աղբյուրը՝ http://www.azernews.az/business/53085.html.
[57] Աղբյուրը՝ http://www.azernews.az/business/53085.html; http://www.moodys.com/researchdocumentcontentpage.aspx?docid=PBC_146606.
[58] Աղբյուրը՝ http://economy.gov.az/index.php/en/economy/main-economic-indicators/2012; http://www.azernews.az/business/51977.html.
[59] Աղբյուրը՝ Ադրբեջանի կենտրոնական բանկի վիճակագրական բյուլետեն, 2012 թ. հունվար-դեկտեմբեր, աղյուսակ 2.6:
[60] Աղբյուրը՝ http://www.azernews.az/business/52211.html.
[61] Աղբյուրը՝ http://www.azernews.az/business/53085.html.

նավթային հիմնադրամի միջոցների տեղաբաշխումը բազմազանեցնելու և օտարերկրյա պետական ու մասնավոր հատվածի արժեթղթերում, անշարժ գույքի շուկաներում, ոսկու պաշարների մեջ ներդրումներ կատարելու ուղղությամբ[62]:

Ոչ նավթային հատվածի տնտեսական զարգացումները հանգեցրել են ֆինանսական միջնորդության ակտիվացմանը: 2012 թ. 27.8%-ով աճել են բանկերի կողմից տնտեսության վարկավորման և 11.5%-ով ավանդների ներգրավման ծավալները. ընդ որում՝ ազգային արժույթով տրամադրված վարկերի և ներգրավված ավանդների ծավալներն արտարժութայինի համեմատ գրանցել են առաջանցիկ աճ[63]: Ինչ վերաբերում է տնտեսության վարկավորման կառուցվածքին՝ վարկավորման ընդհանուր ծավալների մեջ ամենից մեծ տեսակարար կշիռը բաժին է ընկել առևտրի և ծառայությունների (20.8%), շինարարության (10.0%), արդյունաբերության (10.2%), գյուղատնտեսության (4.3%) և տրանսպորտի ու հեռահաղորդակցության (6.3%) ոլորտներին[64]: Նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ՝ 3.6%-ով նվազել է տնտեսության դոլարայնացման մակարդակը, և 2012 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արտարժութային ավանդները կազմել են ընդհանուր ավանդների 39.5%-ը[65]: Բանկային համակարգի համախմբումը և մրցակցությունը ուժեղացնելու նպատակով Կենտրոնական բանկը բարձրացրել է բանկերի ընդհանուր կապիտալի նվազագույն պահանջը 5 անգամ: 2014 թ. հունվարի 1-ից այդ պահանջը կկազմի 50 մլն մանաթ (շուրջ 64 մլն ԱՄՆ դոլար)՝ նախկինում գործող 10 մլն մանաթի (շուրջ 13 մլն ԱՄՆ դոլար) փոխարեն: Բանկերի համախմբմանը զուգահեռ մտադիր է ձեռնարկել որոշակի քայլեր համակարգային ռիսկը սահմանափակելու ուղղությամբ:

«Մուդիզ» միջազգային վարկանշային կազմակերպության կարծիքով՝ ներկայումս Ադրբեջանի տնտեսության ուժեղ կողմերն են՝ նավթի/գազի պահուստների զգալի ծավալը, որը կառավարությանն ապահովում է խոշոր եկամուտներ, պետական պարտքի և տոկոսավճարների ցածր մակարդակը, ամուր արտաքին իրացվելիությունը՝ պայմանավորված նավթի/գազի արտահանումից ստացվող խոշոր եկամուտներով: Ադրբեջանի տնտեսության ներկայիս հիմնախնդիրներն են՝ կառավարման թույլ ցուցանիշները, տարածաշրջանային աշխարհաքաղաքական ճնշումները, արտահանման և ՀՆԱ-ի աճի մասով նավթից կախվածությունը:

[62] *Առավել մանրամասն տե՛ս http://www.azernews.az/business/52723.html.*
[63] *Աղբյուրը՝ Ադրբեջանի կենտրոնական բանկի վիճակագրական բյուլետեն, 2012թ. հունվար-դեկտեմբեր, աղյուսակներ 2.4, 2.8:*
[64] *Աղբյուրը՝ նույն տեղում, աղյուսակ 2.9:*
[65] *Աղբյուրը՝ նույն տեղում, աղյուսակ 2.4:*

© Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, 2013

0010, Երևան, Վ. Սարգսյան 6. http:// www.cba.am